ԱՐԹՈՒՐ ՄԱԹԵՒՈՍՅԱՆ

# ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆԸ՝ ԻՆՉՊԵՍ ՈՐ ԱՅՆ Է



ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՒԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

*ԱՐԹՈՒՐ ՄԱԹԵՒՈՍՅԱՆ*

# ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆԸ՝ ԻՆՉՊԵՍ ՈՐ ԱՅՆ Է

***Артур Матевосян***

# Христианство как оно есть

***Arthur Matevosyan***

# Christianity as it is

**Երեւան Ереван Yerevan**
**2024**

ՀՏԴ 27
ԳՄԴ 86.37
Մ 151

*Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Արեւելագիտության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ*

**Մ 151 ՄԱԹԵՒՈՍՅԱՆ ԱՐԹՈՒՐ** Քրիստոնեությունը՝ ինչպես որ այն է: *Խմբագիր՝ Ա. Հակոբյան*.- Եր.: ՀՀ ԳԱԱ Արեւելագիտության ինստիտուտ, 2024. - 208 էջ:

*Ներկա աշխատությունը վերաբերում է Քրիստոնեական վարդապետությանը եւ նրա աղբյուր Սուրբ Գրքին, որի առանցքը Բարի Լուրն է Աստծո Որդու գալստյան ու մարդկության փրկության մասին։ Այն խիստ արդիական է, քանի որ մարտնչող աթեիզմը 20-րդ դարում պատեց հսկայական զանգվածների, այդ թվում՝ նաեւ մի թաքնված ձեւով, որը բնորոշ է ժողովրդավարական երկրներին, ուր գոյություն ուներ կրոնի ազատություն։ Այնտեղ աթեիզմը ստացավ կրոնական անտարբերության ձեւ, երբ Քրիստոնեությունը հաճախ պաշտոնապես դավանվում է, սակայն չի զբաղեցնում ամենաբարձր տեղը արժեքների իրական հիերարխիայում։ Բայց արդյո՞ք Բարի Լուրն արդիական չէ նաեւ այսօր։ Եւ ի՞նչ է ասում Ավետարանը հենց մեր օրերի մարդու սրտին։ Այս գիտա-հանրամատչելի աշխատության նպատակն է՝ ներկայացնել քրիստոնեական փրկաբանության տեսությունը արդի մարդու գիտակցությանը հասանելի ձեւով՝ չվնասելով նրա հավերժական եւ անանցանելի էությունը։ Այն կարող է հետաքրքրել կրոնի պատմության մասնագետներին, ինչպես նաեւ հայագետներին եւ արեւելագետների ու ընթերցողների ամենալայն շրջանակին։*

ՀՏԴ 27
ԳՄԴ 86.37

ISBN 978-9939-9313-5-7
**DOI:10.54503/978-9939-9313-5-7**

© Արթուր Մաթեւոսյան, 2024
© ՀՀ ԳԱԱ Արեւելագիտության ինստիտուտ, 2024

## *ԱՌԱՋԱԲԱՆ*

*Քրիստոնեական վարդապետության աղբյուրը Սուրբ Գիրքն է, որի առանցքը կազմում է Բարի Լուրը Աստծո Որդու գալստյան եւ մարդկության փրկության մասին։ Սակայն արդյո՞ք Բարի Լուրն արդիական է այսօր։ Ի՞նչ է ասում Ավետարանը եւ առհասարակ որեւէ բան ասո՞ւմ է ժամանակակից մարդու սրտին։ Ավելի ու ավելի քիչ մարդիկ են մնում, ովքեր հասկանում են, որ Հիսուս Քրիստոսը ոչ միայն բոլոր ժամանակների եւ ժողովուրդների ամենամեծ բարոյագետն է, այլեւ Աստծո միածին Որդին ու Փրկիչը։ Մեր ժամանակներում Եկեղեցու առջեւ ծառացած խնդիրն այն է, որ ավելի ու ավելի սակավաթիվ մարդիկ են զգում Քրիստոսի հանդեպ հավատքի միջոցով մեղքից եւ մահվանից փրկվելու կարիքը, քանի որ չեն ճանաչում մեղքի գոյությունը որպես այդպիսին։ Սակայն մեղքը դրանից չի դադարում գոյություն ունենալ։ Մեր ժամանակներում նա մահ է ծնում ճիշտ այնպես, ինչպես Ադամի ու Եւայի ժամանակներում, եւ, հետեւաբար, ժամանակակից անհավատը փրկության կարիք ունի ոչ պակաս, քան իր բարեպաշտ նախնիները։ Այս հայտարարության ճշմարտացիությունը կասկածից վեր է։ Մարդը մահկանացու է, եւ նրա գոյության այս հիմնարար իրողությունը ճակատագրականորեն զրկում է նրան կյանքի բերկրանքից։ Մահը ոչ մի տեղ չի անհետացել, չնայած այն հանգամանքին, որ ժամանակակից քաղաքակրթությունն ամեն կերպ փորձում է ստիպել մարդկանց մոռանալ նրա մասին։* Memento mori[1] *արտահայտությունն այժմ տաբու է։ Ինչո՞ւ է մեր ժամանակներում մահվան խնդրի քննարկումը խուճապային վախ առաջացնում։ Որովհետեւ դա*

---

[1] *«Հիշի՛ր մահվան մասին»* – լատ.։

*անմիջապես կբացահայտի ժամանակակից քաղաքակրթության արժեհամակարգի լիակատար ձախողումը մահվան՝ որպես մարդկային գոյության անփոփոխ ու ճակատագրական իրողության առջեւ:*

*Իսկապես, եթե հոգին որպես այդպիսին գոյություն չունի, եւ հետեւաբար չկա հանդերձյալ կյանք, ի՞նչ իմաստ կարող է ունենալ ավելի ու ավելի հարմարավետ պայմաններ ստեղծելը մարմնի համար, որը վաղ թե ուշ փոշի է դառնալու: «Մահը ինձ համար ես հայր կոչեցի, նեխվածքը՝ մայր, քույր» (Հոբ 17.14): Արդյո՞ք այս դեպքում մեր կյանքը չի նմանվում մկնախաղին, որում չկա ավելի իմաստ, քան մրջյունների կամ թրթուրների կյանքի մեջ: Չնայած մարդկանց իրենց գոյության անցողիկության մասին մտքերից շեղելու ջանքերին, չկա այնպիսի մարդ, ում չճնշի գալիք անխուսափելի վախճանի մասին միտքը, ինչը ներկայիս աշխարհայացքի տեսանկյունից հավասարազոր է չգոյության մեջ անհետանալուն: Ուստի ոչ ոք չի կարող վստահել ապագային, որը կարող է կործանում եւ մահ բերել ցանկացած, նույնիսկ ամենաբարգավաճ ու հաջողակ մարդուն:*

*Մարդկային գոյության տանջանքներն ակնհայտ փաստ են, ինչն աղաղակող հակասության մեջ է երջանկության ցանկության հետ, որն օրգանապես բնորոշ է յուրաքանչյուր մարդու հոգուն: Բայց իրական երջանկությունը հնարավո՞ր է երկրի վրա: Այս հարցին Հայտնությունը տալիս է միանշանակ բացասական պատասխան (Ժող. 3.20): Մարդը երջանիկ է այնքանով, որքանով իր կյանքը ներգրավված է գոյության անսահման լիության մեջ, իսկ աշխարհիկ գոյության մեջ կատարյալ երջանկության բացակայությունը պայմանավորված է հենց մարդու երկրային կյանքի անցողիկությամբ եւ վախճանականությամբ: «Իմ տարիները հաշված են արդ. բռնել եմ արդեն անդարձի ուղին» (Հոբ 16.23): Մարդն ընկղմված է ժամանակի գետի մեջ, որի անդիմադրելի ընթացքը նրա*

*կյանքը տաշեղի պես տանում է դեպի անգոյության օվկիանոսը եւ նա անզոր է՝ դիմադրելու այս ամենավեր հոսանքին։ Այս ամենը ստեղծում է կյանքի անիմաստության ցավագին զգացում, որն արժեզրկում է նյութական բարեկեցությունը։ «Ինչ որ աչքս ուզեց, ինձ չզրկեցի դրանից, եւ ոչ մի ուրախության համար սրտիս վրա արգելք չդրի։ Իմ սիրտն ուրախ եղավ, որովհետեւ վայելեց իմ աշխատանքի պտուղները եւ դա էլ իմ բաժինը եղավ իմ բոլոր վաստակներից։ Ես նայեցի իմ ձեռքերի արած բոլոր գործերին եւ դրանք անելու համար իմ քաշած չարչարանքներին, եւ ահա՛ ամեն ինչ ունայնություն է եւ հոգու տանջանք, եւ ոչ մի օգուտ չկա արեգակի ներքո» (Ժող. 2.10-11)։*

*Ներկա վիճակի օբյեկտիվ ու անկողմնակալ դիտարկումը ստիպում է մեզ ճանաչել աշխարհիկ գոյության արատավոր շրջանից դուրս գալու եւ փրկությանը հասնելու մարդկային բոլոր փորձերի անպտղությունն ու անարդյունավետությունը։ Կյանքի խավարը շարունակում է մնալ նույնքան անթափանց, ինչպես եղել է միշտ։ Բայց մարդու հոգին չի կարող ապրել առանց Լույսի։ Երբ շուրջը տիրում է անշող խավարը, մարդը սկսում է Նրան փնտրել իր ներսում։ Մահվան եզրին կանգնած մարդն օգնության խնդրանքով աղաչում է իր սրտի խորքում թաքնված լուռ անդրանցական անդունդին, եւ այս աղաչանքն անպատասխան չի մնում։ «Մահվան տառապանքը շրջապատեց ինձ, եւ հեղեղն ինձ վրդովեց։ Դժոխքի ցավերը պաշարեցին ինձ, մահացու վտանգներն ինձ հասան։ Նեղությանս մեջ ես Տիրոջը դիմեցի եւ իմ Աստծուն աղաղակեցի. Նա լսեց ինձ եւ իմ աղոթքի ձայնն իր սուրբ տաճարից, նրան ուղղված աղաղակս նրա ականջին է հասնելու» (Սաղմ. 17.5-7)։ Բարձրյալը բացահայտում է Իրեն մարդուն՝ ի պատասխան փրկության աղոթքի, ու նա սկսում է զգալ Իր անտեսանելի, բայց բացարձակապես իրական եւ փրկարար ներկայությունն իր կյանքում։ «Վերից փու-*

*թալով՝ Տերը վերցրեց ինձ, վերցրեց ինձ ջրերի հեղեղից» (Սաղմ. 17.17)։ Թեեւ մարդկային կյանքը լի է քաոսով, աբսուրդով ու զանազան տառապանքներով, սակայն դրանում Աստծո շնորհով հավատքի շող է վառվում՝ թափանցելով առօրյա գոյության խավարը։ Այս լույսը չի կարող փարատել շուրջը տիրող խավարը, բայց հոգուն վստահություն է տալիս, որ իսկական կյանքն այն ցավալի մղձավանջը չէ, որի մեջ ընկղմված է մարդը ծնունդից մինչեւ մահ, այլ ավելի բարձր, անհամեմատ ավելի կատարյալ եւ երանելի մի բան, որն այս աշխարհից չէ։*

*Իսկական կրոնական հավատը հատուկ հոգեւոր փորձառություն է, որը չի կարելի շփոթել որեւէ այլ փորձառության հետ։ Հավատը, մտավոր, հուզական եւ կամային ոլորտների հետ շփվելով, միաժամանակ չի համընկնում նրանցից ոչ մեկի հետ։ Հոգու մեջ աստվածային ներկայության զգացումը միանգամայն յուրօրինակ է եւ անբացատրելի թե՛ գիտության դիրքերից, թե՛ ողջամտության տեսանկյունից։ Մարդը սկսում է զգալ իր խորհրդավոր կապը անհայտ գերագույն Ուժի հետ, որը, մնալով ամբողջովին անդրանցական եւ անհասանելի, միեւնույն ժամանակ հարակարծ (պարադոքսալ) կերպով դառնում է իրեն հնարավորինս մոտ եւ, կարելի է ասել՝ հարազատ։ Հավատացյալ հոգին գիտի, որ Աստված կա, թեեւ դեռ չգիտի Նրա անունը։ Մարդը՝ այդ անզոր եւ մահկանացու էակը, կորած ու մոլորված շրջապատող աշխարհում, որը թշնամաբար է տրամադրված իր հանդեպ, սկսում է զգալ իր գերազանցությունը այս աշխարհի նկատմամբ, քանի որ նրա հոգին այժմ կապված է Նրա հետ, Ով համընդհանուր գոյության եւ կյանքի Նախապատճառն է։ Խորապես մխիթարական բան կա այն գիտակցման մեջ, որ մարդը, ում մարմինը նյութական տիեզերքի աննշան փոքր մասնիկն է, կարող է ընկալել այս տիեզերքի Նախապատճառի գոյությունը որպես իր ներքին կյանքի ակնհայտ իրողություն։ «Տեսնեմ*

*երկինքը՝ քո մատների գործը, լուսինն ու աստղերը, որոնք դու հաստատեցիր։ Մարդն ի՞նչ է, որ հիշում ես նրան, կամ մարդու որդին՝ որ այցի գաս նրան» (Սաղմ. 8.4-5)։*

*Հավատքի ձեռքբերման շնորհիվ մարդը սկսում է գիտակցել, որ իր հոգին, որն իր իսկական անհատականությունն է, պատկանում է ոչ թե այս աշխարհին, այլ Նախապատճառի մեջ գտնվող ինչ-որ ավելի բարձր իրականության, որը ճշմարտության, բարու եւ գեղեցկության հավերժական Արքայությունն է։ Եթե նախկինում նրան կարելի էր նմանեցնել տերեւի, որին անհայտ ուղղությամբ քշում էր կյանքի մրրիկը, ապա այժմ նրա մեջ հայտնվում է մի անտեսանելի հենակետ, որի շնորհիվ նրա գոյությունը ձեռք է բերում կայունություն եւ իմաստ։ Իր էությունը բացահայտելով հոգուն՝ Աստված ամենայն ակներեւությամբ ի հայտ է գալիս որպես հավերժական Նախախնամություն, ամենաբարի եւ ամենաիմաստուն, որի կամքով է որոշվում ամեն ինչ, այդ թվում՝ մարդու ճակատագիրը։*

*Հարց է առաջանում. եթե աշխարհը կառավարում է Նախախնամությունը՝ լի գթասրտությամբ ու բարությամբ (իսկ նրա անսահման բարությունը վառ կերպով զգում է հավատացյալ հոգին), ապա ինչո՞ւ է մարդկային կյանքը լի տառապանքով։ Կարող է լինել միայն մեկ պատասխան՝ մարդն ինքն է մեղավոր դրա համար՝ աններդաշնակություն մտցնելով Բարձրյալի հետ իր հարաբերությունների մեջ։ Մարդը ինչ-որ կերպ հեռացավ Նախապատճառից, որն իր բնությամբ հավերժական, անանց երանություն է, եւ դրանով իսկ իրեն դատապարտեց տառապանքի։ Նախապատճառից մարդու այս հեռացումը քրիստոնեական ավանդույթում կոչվում է ադամական մեղք, որը բերեց Աստծո անեծքը նախահայր Ադամի որդիների վրա ու դատապարտեց մարդուն մահվան. «Քո երեսի քրտինքով ուտես հացդ մինչեւ հող դառնալդ, որից ստեղծվեցիր, որովհետեւ հող էիր եւ հող էլ կդառնաս» (Ծննդ. 3.19)։ Դրա գիտակցումը մարդուն*

փրկության իրական հնարավորություն է տալիս: Որպեսզի այս հնարավորությունն իրականություն դառնա, նախ եւ առաջ պետք է ճանաչել Աստծուն ու պարզել, թե ով է Նա եւ որն է Նրա կամքը. միայն դա իմանալով կարելի է փրկության հույս ունենալ:

Հարց է առաջանում. հնարավո՞ր է արդյոք ճանաչել Աստծուն: Նախ՝ պետք է ընդգծել, որ Նա չի կարող ճանաչվել բնագիտության մեթոդներով: Վերջինս զբաղվում է միայն բնական, այսինքն՝ նյութական առարկաներով, որոնք գտնվում են տարածության եւ ժամանակի մեջ, մինչդեռ զուտ հոգեւոր Նախապատճառը գտնվում է տարածությունից ու ժամանակից դուրս: Գիտական ճանաչողությունը ձգտում է բացահայտել այն օրինաչափությունները, որոնք կառավարում են տեսանելի տիեզերքը նրանում գոյություն ունեցող նյութի շարժման բոլոր ձեւերով, եւ ոչ ավելին: Սակայն մեր սահմանափակ ու մեղքով վնասված բանականությունն ի վիճակի չէ հասնելու նույնիսկ այդ նպատակին: Մեր բանականությունը կապված է ֆիզիկական մարմնի հետ, որը վարագույրի նման խանգարում է մեզ հստակ ընկալել նույնիսկ սահմանափակ նյութական իրերի եւ երեւույթների բուն էությունը: Մենք չենք գիտակցում մեր հոգու էությունը, մենք հստակ չգիտենք, թե ինչպես է նա կապված մարմնի հետ: Մենք չենք ըմբռնում հրեշտակների ու այլ անմարմին ուժերի էությունը, եւ առավել եւս մենք ի զորու չենք ճանաչելու Աստծուն: Այդ պատճառով գիտությունը մեզ ոչինչ չի կարող ասել Աստծո մասին: Լավագույն դեպքում, նա կարող է որոշ չափով բացահայտել Նրա գերագույն իմաստությունը, որը դրոշմված է արարածների վրա: Նա ի վիճակի չէ դրանից ավելին իմանալու:

Բարձրյալին չի կարելի ճանաչել նաեւ սպեկուլյատիվ փիլիսոփայության օգնությամբ: Փիլիսոփայության պատմության մասնագետները խոստովանում են, որ բնազանցության գոյություն ունեցող համակարգերից եւ ոչ մեկը չի կարողացել լիովին համոզիչ ու

սպառիչ պատասխան տալ աշխարհայացքային հիմնական հարցերին, որոնք հուզում են ամեն մի մտածող մարդու: Ո՛չ Արիստոտելը, ո՛չ Ավիցեննան, ո՛չ Սպինոզան, ո՛չ Հեգելը եւ ոչ էլ այլ մեկը չկարողացան ճանաչել Աստծո, բնության ու մարդու իրական էությունը: Առավելագույնը, ինչին հասել է փիլիսոփայական միտքը, դա աստվածային գոյության որոշակի հատկանիշների մասին պատկերացում կազմելն է: Փիլիսոփայական մտածողությունը, ձգտելով ճանաչել Նախապատճառը, չի գիտակցում այս փորձի անհեթեթությունը, քանի որ Նախապատճառը գտնվում է շատ ավելի բարձր գոյաբանական ոլորտում, քան այն, որտեղ գտնվում է սպեկուլյատիվ մտածողությունը: Մարդկության մեծագույն մտածողներն այդպես էլ չկարողացան ճանաչել Աստծուն, եւ նրանց ձախողումը ամենահամոզիչ ապացույցն է այն բանի, որ սկզբունքորեն անհնար է ճանաչել Բարձրյալին վերացական մտածողության միջոցով:

Այնուամենայնիվ, Բարձրյալի բնագիտական եւ փիլիսոփայական ճանաչման անհնարինությունը չի նշանակում, որ Նա ընդհանրապես չի կարող ճանաչվել: Եթե մարդկային միտքն ինքնուրույն չի կարող երկինք բարձրանալ, ապա Երկնային Արքան Իր անսահման ողորմածությամբ Ինքը կարող է իջնել մարդու մոտ ու բացահայտել Իր կամքն ու Իր Արքայության գաղտնիքները: Մարդու հանդեպ աստվածային կամքի եւ իմաստության նման դրսեւորումը կոչվում է Հայտնություն: Բայց ի՞նչը պետք է Հայտնություն համարել: Դա, անտարակույս, Սուրբ Գիրքն է՝ Աստվածաշունչը: Հայտնությունը պարունակում է մշտնջենավոր հոգեւոր ճշմարտություններ, որոնց հանդեպ հավատը մարդու փրկության անհրաժեշտ պայմանն է: Այս ճշմարտությունները հիմնովին տարբերվում են փիլիսոփայական ճշմարտություններից նրանով, որ դրանք տրված են ի վերուստ եւ մարդկային մտքի արդյունք չեն: Այս ճշմարտությունները իրենց էությամբ անճանաչելի են մարդկային մտքի համար, դրանք

*հավերժական են, անփոփոխ ու պահպանվում են Քրիստոսի Եկեղեցու կողմից: Եկեղեցին միշտ պնդել է, որ այդ ճշմարտությունների հանդեպ հավատը փրկության անհրաժեշտ նախապայմանն է, քանի որ առանց ճշմարիտ հավատի անհնար է Ավետարանի պատվիրանների վրա հիմնված բարոյական կյանքը եւ, հետեւաբար, անհնար է նաեւ փրկությունը: Եկեղեցու դարավոր փորձը ցույց է տալիս, որ հերետիկոսությունը ինչ-որ առեղծվածային ձեւով միշտ խիստ բացասական ազդեցություն է ունենում մարդու բարոյական նկարագրի վրա եւ, հետեւաբար, հերետիկոսները, որպես կանոն, բարոյազուրկ մարդիկ են: Վերոնշյալ ամենից հետեւում է դավանության անփոփոխությունը, որովհետեւ Աստծո կողմից բացահայտված բացարձակ ճշմարտությունները, իրենց իսկ բացարձակության պատճառով, չեն կարող փոխվել մարդկանցից որեւէ մեկի կողմից, քանի որ նման փոփոխությունը կարող է հանգեցնել միայն նրանց աղավաղմանն ու խեղաթյուրմանը:*

*Ըստ այսմ՝ քրիստոնյան չպետք է ձգտի ինքնուրույն մեկնաբանել աստվածային ճշմարտությունների իմաստը, քանի որ այդ դեպքում մոլորության եւ հերետիկոսության մեջ ընկնելու հավանականությունը չափազանց մեծ է: Այս ճշմարտությունները պետք է մեկնաբանվեն առաքելական ավանդության ու Եկեղեցու հայրերի վարդապետության լույսի ներքո: Աստված կարող է ճանաչվել Հայտնության միջոցով, սակայն պետք է ընդգծել, որ դա պարզապես տեսական գիտելիք չէ, որը ձեռք է բերվել աստվածաբանական տեքստերի ուսումնասիրությամբ կամ կրոնական արարողությունների հաճախելով: Դա Աստծուն ճանաչելու կենդանի, անմիջական փորձառություն է, որը տեղի է ունենում հոգեւոր ընկալման եւ աղոթքի միջոցով: Այս գիտելիքը միակողմանի բան չէ, որտեղ մարդ պարզապես տեղեկություններ է ստանում Աստծո մասին: Սա երկկողմանի հաղորդակցություն է, որի ժամանակ մարդը բացա-*

*հայտում է իրեն Աստծուն, իսկ Աստված՝ մարդուն: Այս գիտելիքը ստատիկ չէ, այն անընդհատ աճում ու զարգանում է, քանի որ մարդը խորանում է հոգեւոր իմացության մեջ եւ ամրապնդում իր կապը Աստծո հետ: Աստծո ճշմարիտ իմացությունը մարդուն բերում է ոչ միայն հետաքրքրասիրության բավարարում, այլեւ խաղաղություն, սեր ու ոգեշնչում: Այն փոխակերպում է մարդուն, նրա կյանքը լցնում իմաստով, ուժ եւ իմաստություն է տալիս կյանքի խնդիրները լուծելու համար ու օգնում է հաղթահարել դժվարությունները: Հետեւաբար, մենք պետք է ընդունենք մեր սահմանափակումները եւ խոնարհաբար փնտրենք Նրան ապաշխարության, խոնարհության ու աղոթքի միջոցով: Միայն այս կերպ մենք կարող ենք ձեռք բերել ճշմարիտ եւ արդյունավետ գիտելիք Աստծո մասին, որը մեզ կբերի հոգեւոր վերափոխում ու երանություն:*

*Ուրեմն ո՞րն է Բարի Լուրի արդիականությունը ժամանակակից մարդու համար: Նա առաջարկում է կյանքի իմաստի բացատրությունը, մխիթարություն է տալիս տառապանքի եւ վշտի մեջ, հավերժական կյանքի հույս է տալիս, սովորեցնում սիրել Աստծուն ու մերձավորներին: Այն օգնում է հաղթահարել մեղքը եւ դառնալ ավելի լավ մարդ: Իհարկե, ոչ բոլոր մարդիկ են պատրաստ՝ ընդունելու Բարի Լուրը: Բայց նրանց համար, ովքեր փնտրում են ճշմարտությունը, այն կարող է փրկօղակ դառնալ կյանքի փոթորկոտ ծովում: Բարի Լուրը միայն կրոն չէ: Դա սիրո, հույսի ու փրկության ուղերձ է, որը վերաբերում է բոլոր մարդկանց՝ անկախ նրանց տարիքից, ազգությունից եւ սոցիալական կարգավիճակից:*

*Եւ ահա՝ այս գիտա-հանրամատչելի գրքի նպատակն է ներկայացնել քրիստոնեական փրկաբանությունը մեր օրերի մարդու գիտակցությանը առավել հասանելի ձեւով, ընդ սմին՝ առանց վնասելու դրանց հավերժական ու անանցանելի էությունը:*

Գ Լ Ո Ւ Խ   Ա

## Մի Աստված

*Աստված Մի է։ Աստվածային բնությունը գերազանցում է բոլոր սահմանափակումները։ Աստված անձնավորում է բացարձակ կատարելությունը, որն արտահայտվում է բացարձակ բարությամբ, անսահման իմաստությամբ եւ անխորտակելի ուժով։ Նրան հատուկ է գոյությունը, որը չունի սկիզբ ու վերջ, ընդմիշտ մնալով անփոփոխ վիճակում։ Աստվածային բնությունը սահմանափակումներ չունի ո՛չ տարածության, ո՛չ ժամանակի մեջ։ Բազում աստվածների գոյությունն անխուսափելիորեն հանգեցնում է նրանց անհավասարությանը։ Ի վերջո, եթե դրանք լիովին նույնական են, ապա վերանում է բազմաստվածության հասկացության իմաստը։ Իսկ եթե նրանց միջեւ կան տարբերություններ, ապա նրանց կատարելությունը դառնում է վիճելի։ Եթե աստվածներից որեւէ մեկին պակասում է զորությունը, իմաստությունը կամ հավերժությունը, ապա նրա՝ որպես Աստվածության կարգավիճակը կասկածելի է։ Այս տեսակետից որեւէ թերություն ունենալն էակին դարձնում է անկատար եւ զրկում իր աստվածային կարգավիճակից։ Միասնությունը բոլոր աստվածային դրսեւորումներում ցույց է տալիս Մեկ Աստծո գոյությունը, այլ ոչ թե դրանց բազմաքանակությունը։ Անխուսափելի տարբերություններով բազմաթիվ աստվածային էակների գաղափարը հակասում է բացարձակ կատարելության գաղափարին։ Ավելին, բազում աստվածների գոյությունը ենթադրում է նրանց մեջ հավերժական հիերարխիայի առկայություն։ Այս դասավորությունը ենթադրում է ինչպես բարձրագույն, այնպես էլ ստորադաս աստվածությունների առկայություն, ինչը հակասում է աստվածային կատարելության գաղափարին։ Աստվածային բնու-*

թյան միասնությունը համահունչ է նաեւ միաստվածության սկզբունքին, որը քարոզում է հավատք մեկ ամենակարող եւ ամենագո Աստծո հանդեպ: Միաստվածությունը շեշտում է որեւէ այլ աստվածության անհամեմատելիությունը Միակ Աստծո կատարելության եւ անսահմանության հետ: Ահա թե ինչու աշխարհի հիմնական կրոնների մեծ մասը, ինչպիսիք են քրիստոնեությունը, իսլամն ու հուդայականությունը, դավանում են հավատք մեկ Աստծո հանդեպ՝ ունենալով վերը նշված բոլոր աստվածային հատկությունները: Այս միաստվածությունը նրանց աստվածաբանության հիմնարար սկզբունքն է եւ ընկած է աստվածության նրանց ըմբռնման հիմքում:

Աստվածային էությունն անիմանալի է ցանկացած արարված բանականության համար: Մարդն ի վիճակի չէ ամբողջությամբ ճանաչել Աստվածության անսահմանությունն ու անդրանցականությունը: Աստծո գաղափարը գերազանցում է մարդկային սահմանափակ ընկալումը: Այն ենթակա չէ ժամանակի եւ տարածության չափերին, սահմանափակված չէ պատճառականության օրենքներով ու զերծ է երկակիությունից: Նրա էությունը բանականության եւ տրամաբանական վերլուծության սահմաններից դուրս է: Սակայն դա չի նշանակում, որ մենք լիովին զրկված ենք Աստծուն հասկանալու հնարավորությունից:

Գոյություն ունի բնական աստվածիմացություն. սա Աստծո ճանաչումն է բնության, աշխարհի եւ մարդու ուսումնասիրության ու վերլուծության միջոցով: Աստծո կողմից արարված բնությունը դիտարկելու եւ ուսումնասիրելու միջոցով մարդը կարող է որոշ չափով ճանաչել Արարչին: «Արդարեւ ի սկզբանէ աշխարհի Աստծու աներեւույթ հատկությունները, այն է՝ Նրա մշտնջենավորությունը եւ զորությունը եւ աստվածությունը, իմանալի կերպով տեսանելի են Նրա ստեղծածների մեջ» (Հռոմ. 1.20): Դա պայմանավորված է նրանով, որ Աստված հայտնվեց մարդուն իր ստեղծածի մեջ: Աստ-

ծո բնական իմացությունը ներառում է տարբեր գիտություններ, ինչպիսիք են ֆիզիկան, քիմիան, կենսաբանությունը, աստղագիտությունը եւ այլն: Երբ մենք ուսումնասիրում ենք բնությունը, տեսնում ենք կարգուկանոն, ներդաշնակություն եւ օրենքներ, որոնք կառավարում են աշխարհը: Սա ցույց է տալիս Գերագույն Օրենսդրի գոյությունը, ով ստեղծել ու պահպանում է ամեն ինչ: Այնուամենայնիվ, Աստծո բնական իմացությունն ունի իր սահմանափակումները: Այն կարող է մեզ տալ միայն ընդհանուր պատկերացում Աստծո, Նրա զորության եւ իմաստության մասին, բայց այն չի կարող մեզ լիարժեք պատկերացում տալ Նրա անձի եւ մարդկանց հետ փոխհարաբերությունների մասին: Աստծո ամբողջական իմացության համար անհրաժեշտ է Աստվածային Հայտնություն: Դա Աստծո հայտնությունն է մարդուն Իր էության, կամքի եւ ծրագրերի մասին: Աստված բացահայտում է Իրեն Իր խոսքով՝ Սուրբ Գրքերով, Իր Որդու՝ Հիսուս Քրիստոսի եւ Իր Եկեղեցու միջոցով: Հայտնության միջոցով Աստված մարդուն հնարավորություն է ընձեռում՝ ճանաչելու Իրեն եւ անձնական հարաբերություններ հաստատելու Իր հետ: Աստվածային հայտնության միջոցով Աստծուն ճանաչելը պահանջում է ոչ միայն մտավոր ըմբռնում, այլեւ հավատք եւ հնազանդություն Աստծո կամքին: Մարդը պետք է բացի իր սիրտն ու միտքը, որպեսզի ընդունի աստվածային ճշմարտությունը եւ թույլ տա, որ Աստված փոխի իր կյանքը: Այսպիսով, Աստծո բնական գիտելիքն ու Աստվածային Հայտնությունը փոխկապակցված են եւ լրացնում են միմյանց Աստծուն ճանաչելու գործընթացում: Նրանք օգնում են մարդուն՝ հասկանալու Աստծո գոյության, էության, կամքի ու մեր կյանքի մասին Նրա ծրագրերը:

Հայտնության մասին խորհրդածությունը կարող է խորացնել Աստվածության մեր ըմբռնումը: Ձնայած միտքը չի կարող լիովին ըմբռնել աստվածային էությունը, բայց այն կարող է մեզ որոշ գի-

*տելիք տալ Բարձրյալի մասին։ Աստծո անճանաչելիությունը միաժամանակ ե՛ւ ազատագրող է, ե՛ւ խոնարհեցնող։ Այն մեզ ազատում է վերջնական պատասխաններ տալու անհրաժեշտությունից։ Եւ այն խոնարհեցնում է մեզ համայն գոյի անսահման ու անդրանցական աղբյուրի առջեւ։ Թեեւ աստվածային էությունն անսահման է եւ անճանաչելի, սակայն հարակարծ կերպով հենց այս անսահմանությունն ու անճանաչելիությունը Աստվածության միակ կողմն է, որը մենք կարող ենք ըմբռնել։ «Բարի», «արդար» կամ «իմաստուն» եզրույթները, որոնք մենք վերագրում ենք Աստծուն, չեն ցույց տալիս Նրա էությունը, այլ ավելի շուտ՝ Նրա հետ կապված հատկանիշները։ Աստծո մասին որոշ հայտարարություններ վեհացնող բացասման բնույթ ունեն։ Այսպիսով, երբ մենք խոսում ենք «խավարի» մասին Աստվածայինի համատեքստում, մենք նկատի ունենք ոչ թե բառացի խավարը, այլ լույսից այն կողմ գտնվող վիճակը։ Նմանապես՝ «լույսը» այս իմաստով խորհրդանշում է ինչ-որ բան, որը գերազանցում է խավարը։ Մեզ հասանելի Աստվածայինը ճանաչելու միակ հնարավորությունը մեր սեփական սահմանափակումների, Նրան ամբողջությամբ ընկալելու անկարողության գիտակցումն է։ Աստվածային էության պարադոքսն այն է, որ մենք կարող ենք հասկանալ լոկ այն, ինչ Նա չէ, ոչ թե այն, ինչ Նա է։ Բացասական աստվածաբանությունը՝ հիմնված անճառելիության (Աստծո բոլոր հատկանիշների ժխտման) սկզբունքի վրա, Եկեղեցու հայրերի կողմից համարվում է Աստվածիմացությանը մոտենալու միակ միջոցը։ Այս մոտեցումը հրաժարվում է հաստատումներից եւ գործում է բացասումներով՝ ձգտելով ավելի մոտենալ Աստվածության էությանը՝ վերացնելով բոլոր սահմանափակումներն ու սահմանումները։ Հաշվի առնելով Աստվածության անսահման բնությունը՝ ցանկացած լեզու, որը մենք օգտագործում ենք Նրան նկարագրելու համար, անխուսափելիորեն անկատար է եւ սահմանափակ։*

*Աստված մի է Իր էությամբ՝ դա միաստվածական կրոնների հիմնարար սկզբունքն է: «Լսի՛ր, Իսրայե՛լ. մեր Տեր Աստվածը մեկ Տեր է» (Բ Օրին. 6.4; Մարկ. 12.29): Ըստ ս. Գրիգոր Նազիանզացու. «Մի է Աստված, անսկիզբ, անպատճառ, որեւէ եղած կամ լինելիք բանից չսահմանափակված, ե՛ւ անցյալում, ե՛ւ ապագայում հավերժությունը պարփակող, անսահման, բարի եւ մեծ Միածին Որդու մեծ Հայր»*[1]*: Աստծո միասնությունը նշանակում է, որ Աստված մեկն է՝ բացառելով հավասար կամ ավելի մեծ կատարելության այլ էակների առկայությունը: Այս միասնությունը կախված չէ այլ աստվածների հետ համեմատությունից, ինչպես ընդունված էր բազմաստվածային կրոններում: Աստծո միասնությունը նաեւ նրա բացարձակ պարզության եւ անբաժանելիության մեջ է: Բոլոր ուժերն ու հատկությունները, որոնք մենք կարող ենք տեսնել Աստծո մեջ մեր մտքով, միաձուլվում են հենց Աստծո մեջ՝ դառնալով կատարյալ միասնություն եւ ինքնություն: Այն չունի մասեր կամ բաղադրիչներ, որոնք կարելի է առանձնացնել միմյանցից:*

*Կյանքի անվերջանալի ընթացքի մեջ մենք դիտում ենք զարմանալի ներդաշնակություն ու մշտական կարգուկանոն: Բոլոր երեւույթները եւ իրադարձությունները ենթարկվում են որոշակի օրենքների՝ ձգտելով կոնկրետ նպատակների, աջակցելով ու լրացնելով միմյանց՝ ծառայելով ընդհանուր բարօրությանը եւ ամբողջի բարգավաճմանը: Սա անվիճելի վկայություն է մեկ Գերագույն տիրակալի՝ աշխարհի մեծ Արարչի գոյության մասին, ով ամեն ինչ ստեղծում է իր իմաստուն ծրագրերի համաձայն: «Գիտենք, որ այս աշխարհում կուռքերը ոչինչ են. որովհետեւ չկա ուրիշ Աստված, բացի միակ Աստծուց» (Ա Կոր. 8.4): Նա սահմանում է բնության օ-*

[1] Симфония по творениям святителя Григория Богослова, Москва, 2008, с. 43.

*րենքները, որոնք ապահովում են տիեզերքի բոլոր տարրերի գործունեությունը եւ փոխկապակցումը (հմմ. Հռոմ. 1.20)։ Նա պայմաններ է ստեղծում կյանքի գոյության ու զարգացման համար՝ սկսած ամենապարզ օրգանիզմներից մինչեւ ամենաբարդ ձեւերը, այդ թվում՝ մարդկությունը։ Մեկ Աստծո հանդեպ հավատը ոչ միայն կրոնական համոզմունք է, այլ նաեւ տրամաբանական եզրակացություն աշխարհի կարգի եւ ներդաշնակության դիտարկումներից։ Բազմաթիվ աստվածների գոյությունը կհանգեցներ քաոսի ու կոնֆլիկտի, այլ ոչ թե զարմանալի համախմբվածության եւ փոխկախվածության, որը մենք տեսնում ենք բնության մեջ։*

*Հին Կտակարանը ներծծված է Աստծո միասնության գաղափարով։ Վերջինը հիմնական գաղափարն է, որի հետ կապված են Հին Կտակարանի մյուս բոլոր կարեւոր ճշմարտությունները, ինչպիսիք են Մեսիայի գաղափարը, Աստծո եւ ժողովրդի միջեւ ուխտը եւ շատ ուրիշներ։ Հրեա ժողովուրդը Տիրոջ հասարակությունն էր, ու ոչ ոք չէր կարող դառնալ այս հասարակության անդամ՝ առանց Տիրոջը հավատալու։ Դրանում թագավորը պետք է լիներ Տերը (թեոկրատիա)։ Ամբողջ ժողովրդի համար կար միայն մեկ տաճար (ի սկզբանե՝ մեկ խորան), եւ այնտեղ երկրպագում էին միայն էին։ Մեկ Աստծո նկատմամբ օրինականացված հավատքից շեղումները, թեեւ դրանք հաճախակի էին հրեաների մոտ, միշտ, ի վերջո, մերժվում էին։ Այս ժողովրդի պատմական կյանքի ընթացքում Աստծո միասնության գաղափարը վերջապես արմատացավ ու հիմնարար դարձավ քրիստոնեության համար։ «Մեկ Տեր, մեկ հավատք, մեկ մկրտություն» (Եփես. 4.5) Բացի վերը նշվածից՝ Աստծո միասնության գաղափարն արտացոլվել է հրեա ժողովրդի մշակութային կյանքում։ Այս գաղափարի ամենահայտնի դրսեւորումներից է պաշտամունքի միաստվածական համակարգը, որն այն ժամանակ եզակի էր հարեւան հեթանոս ժողովուրդների շրջապատում։ Հրեա-*

*ները հավատում էին, որ միայն մեկ Աստված է արժանի երկրպագության, իսկ մնացած բոլոր աստվածները կեղծ են։ «Դուք հիմա տեսնում եք, որ ես եմ, եւ ոչ Աստված ինձնից բացի» (Բ Օրին. 32.39)։ Աստծո միասնության գաղափարն ազդել է նաեւ հրեաների հասարակական եւ քաղաքական կյանքի վրա։ Նրանք հավատում էին, որ իրենք Աստծո ընտրյալ ժողովուրդն են, եւ այս հավատքը նրանց տալիս էր միասնության ու նպատակի զգացում։ Այն նաեւ հիմք հանդիսացավ նրանց օրենքների եւ սովորույթների համար, որոնք հիմնված էին կրոնական սկզբունքների վրա։ Աստծո միասնության գաղափարի ներդրումը մարդկային քաղաքակրթության զարգացման մեջ այն է, որ այն հիմք դարձավ միաստվածական կրոնների առաջացման ու տարածման համար, ինչպիսիք են քրիստոնեությունը եւ իսլամը։ Այս կրոնները հսկայական ազդեցություն են ունեցել մարդկության մշակույթի, բարոյագիտության, ինչպես նաեւ ժամանակակից պետությունների ու հասարակությունների ձեւավորման վրա։*

*Աստծո էությունը վեր է մարդու ճանաչողական կարողություններից, քանզի այն ճանաչելի է միայն Իր համար։ Ըստ ս. Գրիգոր Նազիանզացու. «Աստվածությունն անճանաչելի է մարդկային մտքի համար, եւ մենք չենք կարող պատկերացնել Նրան լիակատար չափով»*[1]*։ Ուստի Աստծո բնությունը հնարավոր չէ տալ հստակ տրամաբանական սահմանում, քանզի մարդկային բանականությունը սահմանափակ է, իսկ Աստված՝ անսահման։ Արարիչը կարող է ճանաչվել մեր կողմից լոկ այնքանով, որքանով Նրա հատկությունները դրսեւորվում են արարչագործության մեջ, եւ պատկերված են Հայտնության մեջ։ Միայն այդպես մարդը կարող է գեթ որոշ չափով մոտենալ Աստծո անճանաչելի էության ըմբռնմա-*

---

[1] Там же, с. 333.

*նը։ Աստված, ըստ Հայտնության, բացարձակ կատարելությամբ օժտված էակ է։ Դա նշանակում է, որ Նա զերծ է որեւէ պակասից, թերություններից ու սահմանափակումներից։ Այստեղից պարզ է դառնում, որ Աստծո բնությունը զուտ հոգեւոր է, քանզի նյութական բնությունը երբեք կատարյալ չի լինում։ Առավել եւս այն զուրկ է Աստծո կեցության անսահման լիությունից, քանի որ բոլոր նյութական գոյերը սահմանափակ են եւ անցողիկ։ Այնպես որ Աստծուն կարելի է բնութագրել որպես ամենակատարյալ ու անսահման Հոգի։ Հայտնությունն Աստծուն ներկայացնում է որպես բացարձակ ու կատարյալ կեցություն, որպես Է։ Աստված ասաց Մովսեսին. «Այսպես կասես իսրայելացիներին. "Որ Է-ն առաքեց ինձ ձեզ մոտ"» (Ելից 3.14)։ Ըստ ս. Գրիգոր Նազիանզացու. «"Է" անունը… ամենից շատ բնորոշ է Աստծուն»[1]։*

*Աստված որպես "Է" զուրկ է սահմանափակ էությանը բնորոշ թերություններից։ Տեսանելի աշխարհի բոլոր էակների ու առարկաների գոյությունը սահմանափակ է, նրանք անընդհատ փոփոխվում են, ունեն սկիզբ եւ վերջ։ Արարածներն ինքնաբավ չեն, եւ նրանց գոյությունը պայմանավորված է Արարչի կամքով։ Իսկ Աստված, որպես Իր էությամբ ամենակատարյալ էակ, զերծ է այս բոլոր սահմանափակումներից ու Ինքն է Իր գոյության պատճառը։ Աստծուն բնորոշ են ինքնագոյությունը, անփոփոխությունը, մշտնջենավորությունը, անչափելիությունը եւ ամենագոյությունը։*

*Երբ մենք խոսում ենք Աստծո ինքնագոյության մասին, ապա նկատի ունենք, որ Աստծո գոյությունն անհրաժեշտաբար բխում է Նրա էությունից, եւ իր գոյությունը չի կարող կախված լինել որեւէ արտաքին պատճառից։ Սա նաեւ նշանակում է, որ Նա ոչ միայն անկախ է Իր ներքին էության շնորհիվ, այլ նաեւ, որ Նրա բոլոր*

[1] Там же, с. 229.

*գործողությունները պայմանավորված են միայն Նրա ամենազոր կամքով, որից կախված է աշխարհում ամեն ինչ։ «Ապա ուրեմն, ողորմում է՝ ում ուզում է, եւ կարծրացնում է սիրտը նրա՝ ում ուզում է» (Հռոմ. 9.18)։ Աստծո ինքնագոյությունը աստվածաբանության հիմնարար գաղափարներից է, որը կապված է Նրա բացարձակ գերակայության հետ։ Այս հատկությունը նշանակում է, որ Աստված բացարձակ անկախ էություն է, որի գոյությունը պայմանավորված չէ որեւէ պատճառով։ Ի տարբերություն բոլոր արարածների՝ Աստված իր գոյության համար արարչի կամ որեւէ արտաքին պատճառի կարիք չունի։ Աստծո ինքնությունն արտացոլում է Նրա ունեցած բոլոր կատարելությունների լիությունը։ Լինելով անսահման եւ անփոփոխ՝ Նա իր մեջ պարունակում է բոլոր հնարավոր կատարելությունները։ Աստված ունի կատարյալ իմաստություն, ամենագիտություն, ամենակարողություն, ամենագոյություն, բարություն եւ սրբություն։ Նրա ինքնաբավությունը նշանակում է, որ այդ կատարելությունները Նրան չեն տրվել մեկ ուրիշի կողմից, այլ ի սկզբանե բնորոշ են եղել Նրա էությանը։ Աստծո ինքնագոյությունն արտահայտվում է նաեւ Նրա արարչագործության մեջ։ Աստծուն պետք չէ ստեղծված տիեզերքը Իր գոյության կամ երջանկության համար։ Նա ստեղծեց ամեն ինչ սիրուց եւ բարությունից դրդված՝ կիսելով Իր կատարյալ էությունը արարչագործության հետ։ Այնուամենայնիվ, տիեզերքը կախված է Աստծուց իր գոյության ու պահպանման համար՝ ընդգծելով Նրա անկախությունն ու ինքնագոյությունը։ «Նա՛ է տալիս ամեն բանի կյանք եւ շունչ եւ ամեն ինչ» (Գործք 17.25)։ Դա հեռահար հետեւանքներ ունի մեր կյանքն ու աշխարհը հասկանալու համար։ Նախ՝ դա ցույց է տալիս Աստծո բացարձակ վստահելիությունը։ Նա երբեք չի փոխվում եւ միշտ հավատարիմ է Իր բնավորությանը։ Երկրորդ՝ այն մեզ խրախուսում է խոնարհության Աստծո առջեւ՝ ճանաչելով Նրա գերա-*

*զանցությունն ու ամենակարողությունը։ Երրորդ՝ դա մեզ հավերժության հույս է տալիս, քանի որ Աստված կյանքի հավիտենական եւ անփոփոխ աղբյուրն է։*

*Աստված անփոփոխ է։ «Ես եմ Տերն առաջին, նույնն եմ լինելու եւ հավիտյան» (Ես. 41.4)։ Նրա էությունը, կատարելությունները, նպատակները եւ խոստումները երբեք չեն փոխվում։ Հենց իր անփոփոխության շնորհիվ է նա վեր բոլոր արարածներից, որոնք, գտնվելով ժամանակի մեջ, անընդհատ փոխվում են, գոյանում ու անէանում։ «Ի սկզբանե, Տե՛ր, երկրի հիմքերը հաստատեցիր, եւ երկինքն էլ գործն է քո ձեռքերի։ Կանցնեն դրանք, բայց դու կաս եւ կմնաս հավիտյան. ամեն ինչ ձորձի պես կմաշվի, դու վերարկուի պես կփոխես դրանք, ու դրանք կփոխվեն։ Բայց դու նույնը կմնաս, եւ քո տարիները չեն անցնի» (Սաղմ. 101.25-27)։*

*Անփոփոխությունը աստվածաբանական եզրույթ է, որը նկարագրում է Աստծո հատկանիշը՝ այն, որ Նա միշտ մնում է նույնը ու չի ենթարկվում փոփոխության։ Նա ենթակա չէ որեւէ պատահական փոփոխության իր էության, կատարելության կամ վճռականության մեջ։ Այս հատկությունն անքակտելիորեն կապված է Աստծո ինքնաբավության հետ։ Աստծո անփոփոխությունը հիմնված է նաեւ Նրա հավերժության եւ ամենակարողության վրա։ Այն գոյություն ունենալու կամ կատարյալ լինելու համար արտաքին որեւէ բանի կարիք չունի, հետեւաբար այն չի կարող փոխվել որեւէ արտաքին ուժի կամ հանգամանքների ազդեցությունից։ Ի տարբերություն վերջավոր էակների, որոնք մշտական փոփոխություններ են կրում իրենց գոյության մեջ, Աստված անփոփոխ է, քանի որ կախված չէ արտաքին պատճառներից ու պայմաններից։ Նրա էությունն ու հատկությունները գոյություն ունեն հավերժությունից եւ ենթակա չեն փոփոխության։ Այս հատկությունն ունի կարեւոր հետեւանքներ։ Նախ՝ Աստծո անփոփոխությունը նշանակում է, որ Նա*

*միշտ հավատարիմ է Իր խոսքին ու ուխտերին։ Նա չի կարող փոխել Իր խոստումները կամ փոխել Իր կամքը։ Երկրորդ՝ դա նշանակում է, որ Աստված անփոփոխ է մարդկանց հանդեպ Իր սիրով եւ բարեգթությամբ։ Նա միշտ պատրաստ է ներել մեղքերը եւ ընդունել այն մարդկանց, ովքեր դիմում են Իրեն։*

*Ակնհայտ է, որ Աստծո մեջ չկա հաջորդականություն։ Նրա գոյությունը սահմանափակված չէ ժամանակով՝ ի տարբերություն նյութական առարկաների, որոնք ենթակա են շարժման ու ժամանակի հաջորդականությանը։ Սակայն Աստված անշարժ է, եւ հետեւաբար Նրա մեջ չկա հաջորդականություն, ու Նրա գոյությունն անբաժանելի է եւ միաժամանակյա։ Ցանկացած էակի գոյությունը բաղկացած է վիճակների որոշակի հաջորդականությունից, որտեղ մի վիճակը հաջորդում է մյուսին։ Սակայն, քանի որ Աստված ենթակա չէ ժամանակին ու ենթակա չէ շարժման, Նրա գոյությունը չի կարող հաջորդական լինել։ Այն գոյություն ունի ժամանակից եւ տարածությունից դուրս ու ենթակա չէ որեւէ սահմանափակման։ Այսպիսով, մենք կարող ենք եզրակացնել, որ Աստծո գոյությունն անբաժանելի եւ միաժամանակյա է, ենթակա չէ ժամանակին ու ենթակա չէ շարժման։ Աստծո այս հատկությունը տարբերում է Նրան նյութական առարկաներից եւ դարձնում Նրան հավերժական ու բացարձակ։ Աստված հավերժական է, այսինքն՝ ունի ամբողջական եւ անվերջ կյանք։ «Նրա մեջ էր կյանքը, եւ կյանքը մարդկանց լույսն էր» (Հովհ. 1.4)։ Ըստ ս. Գրիգոր Նազիանզացու. «Աստված միշտ եղել է, կա եւ կլինի, կամ ավելի լավ է ասել, միշտ կա, քանի որ եղել է ու կլինի բառերը նշանակում են մեր ժամանակի բաժանումները եւ բնորոշ են անցողիկ բնությանը, իսկ Էն միշտ է»[1]։*

[1] Там же, с. 41.

*Աստված, որպես գերագույն էակ, սահմանափակված չէ ոչ ժամանակային պայմաններով, ոչ էլ տարածական սահմաններով: Ըստ ս. Բարսեղ Կեսարացու. «Աստված ճանաչված է զորությամբ, Նրա բնությունը պարզ է, Նրա մեծությունը՝ անչափելի: Նա ներկա է ամենուրեք եւ լցնում է ամեն ինչ: Նա անշոշափելի ու անտեսանելի է: Նա խուսափում է քո բանականության ընկալումից: Նա սահմանափակված չէ ծավալով, չունի արտաքին ուրվագծեր, ոչ մի ուժի համաչափ չէ, կապված չէ ժամանակով եւ պարփակված չէ որեւէ սահմանների մեջ»[1]: Նա անդրանցական է եւ ամենագո: Տարածությունը, ինչպես ժամանակը, գոյություն չունի իրերից անկախ, այլ գործում է որպես վերջավոր օբյեկտների գոյության ձեւ: Այն բնութագրվում է տարածական սահմանափակումներով ու հարաբերություններով, ինչպիսիք են երկարությունը, լայնությունը, բարձրությունը եւ խորությունը: Տարածության մեջ վերջավոր իրերի սահմանափակումը կապված է նրանց ինքնաբավության բացակայության ու գոյության արտաքին գործոններից կախվածության հետ, որոնք սահմանում են դրանց գոյության սահմաններ: Որքան մեծ է արարածի կամ առարկայի անկախ գոյության կարողությունը, այնքան ավելի մեծ է տարածությանը տիրապետելու նրա կարողությունը: Բույսերը, օրինակ, կարող են տարածվել տարածության մեջ, իրենց արմատներով՝ գետնի մեջ եւ ճյուղերով՝ օդում, ավելի շատ, քան անշարժ քարերը: Կենդանիները էլ ավելի ունակ են՝ տիրապետելու տարածությանը, քանի որ կարող են շարժվել: Մարդկային հոգին մտքերի ու ձգտումների միջոցով գերազանցում է կենդանիներին տարածության տիրույթում: Աննյութական ոգիները, որոնք կապված չեն ֆիզիկական մարմնի հետ, ունեն նույնիսկ ավելի մեծ ազատություն՝ կապված տարածական սահմանափակումների բա-*

[1] Симфония по творениям святителя Василия Великого, Москва, 2008, с. 27.

*ցակայության հետ։ Ելնելով դրանից՝ կարող ենք եզրակացնել, թե ինչպիսին պիտի լինի տիեզերքի հետ Աստծո կապը։ Որպես որեւէ սահմանափակում չունեցող ինքնաբավ եւ անկախ էակ, Նա վեր պիտի լինի ցանկացած տարածականությունից։ Նա անհուն է, անբավ ու անչափելի։ Սա նշանակում է, որ Նա չի գտնվում մեկ կոնկրետ վայրում կամ կոնկրետ ժամանակին, այլ ներկա է ամենուրեք, միշտ եւ ամբողջությամբ։ Ֆիզիկական կամ բարոյական աշխարհում ոչ մի վայրում չկա այդպիսի էակ կամ առարկա, որի մեջ Աստված ներկա չէ։ Աստված, որպես անդրանցական ու ամենագո էակ, նման է անսահմանափակ տարածության, մինչդեռ աշխարհի վերջավոր իրերը, էակները եւ առարկաները գոյություն ունեն այս տարածության մեջ ու սահմանափակված են դրանով։ Այսպիսով, Աստված իր մեջ է պարունակում աշխարհը, եւ ոչ՝ հակառակը։*

*Աստված ամենագետ է։ «Նրա իմաստությունը սահման չունի» (Սաղմ. 146.5)։ Ամենագիտությունն Աստծո մտքի հատկանիշն է, որը թույլ է տալիս Նրան լիարժեք ու կատարյալ գիտելիք ունենալ Իր եւ բոլոր արարածների մասին։ Աստվածային ամենագիտությունը Նրա ինքնաբավության, հավերժության ու անփոփոխության անմիջական հետեւանքն է։ Մարդը չի կարող թափանցել Աստվածային գիտելիքի էության մեջ, որը պարսպապատված է անմատչելի լույսով։ «Նա, որ միայն ի՛նքն ունի անմահությունը եւ բնակվում է անմատչելի լույսի մեջ, որ մարդկանցից ոչ ոք չի տեսել եւ ոչ էլ կարող է տեսնել. նրան՝ պատիվ եւ զորություն հավիտյանս» (Ա Տիմ. 6.16)։ Ամենագիտության հատկությունը թույլ է տալիս Աստծուն իմանալ ամեն ինչ բոլոր արարածների մասին, ներառյալ մարդկանց։ Սա ներառում է նրանց մտքերի, զգացմունքների ու մտադրությունների իմացությունը։ Աստված գիտի նաեւ տիեզերքի բոլոր անցյալի, ներկայի եւ ապագա իրադարձությունների մասին։ «Աստված իմացությունների Տերն է» (Ա Թագ. 2.3)։*

*Աստծո ամենագիտությունը չի նշանակում, որ Նա կանխորոշում է բոլոր իրադարձությունները կամ վերահսկում է յուրաքանչյուր գործողություն: Ազատությունը պարգեւ է Աստծուց, այն անբաժանելի է մարդկային էությունից՝ դարձնելով այն աստվածանման: Իմանալով մարդկային բոլոր գործերը՝ Աստված հարգում է մարդու ազատությունը, որն այդ գործերի աղբյուրն ու կատարողն է: Նախապես իմանալով մարդկանց բոլոր մտադրությունները, ցանկություններն ու արարքները՝ Աստված երբեք չի ստիպում նրանց գործել այս կամ այն կերպ: Աստծո ամենագիտությունը նշանակում է, որ Նա ունի ամբողջական իմացություն եւ ըմբռնում մարդկային բոլոր մտքերի, զգացմունքների ու գործողությունների վերաբերյալ, երբ դրանք տեղի են ունենում: «Եւ Նրա առաջ չկա անտեսանելի արարած, այլ ամեն ինչ պարզ ու հստակ է Նրա աչքերի առաջ» (Եբր. 4.13) Աստծո համար չկա անցյալ կամ ապագա, այլ միայն ներկա: Ինչպես արտաքին օբյեկտների մեր դիտարկումը չի ազդում դրանց գոյության վրա, այնպես էլ Աստծո նախագիտությունը չի սահմանափակում մարդկային գործողությունների ազատությունը: Մենք մեր բոլոր գործողություններն անում ենք մեր կամքով: Աստծո ամենագիտությունը նաեւ թույլ է տալիս Նրան արդար ու ողորմած դատել մարդկանց: Նա գիտի նրանց իրական էությունը եւ այն հանգամանքները, որոնք ազդել են նրանց որոշումների վրա: Աստծո ամենագիտությունը մեծ մխիթարություն է հավատացյալների համար: Սա նշանակում է, որ Նա միշտ գիտի, թե ինչի միջով ենք մենք անցնում, եւ որ Նա միշտ պատրաստ է օգնել մեզ: Մենք կարող ենք վստահել Նրան մեր կյանքն ու վստահ լինել, որ Նա միշտ կառաջնորդի մեզ ճիշտ ճանապարհով:*

*Ըստ Սուրբ Գրքի. «Աստված Հոգի է, եւ նրանք, ովքեր երկրպագում են Նրան, պետք է երկրպագեն հոգով եւ ճշմարտությամբ» (Հովհ. 4.24), ինչը ցույց է տալիս Նրա աննյութական եւ բանական*

էությունը: Ըստ ս. Գրիգոր Նազիանզացու. «Աստվածությունը մարմին կոչե՞նք: Բայց ինչպե՞ս կարող ենք Նրան անվանել անսահման՝ չունեցող ոչ սահմաններ, ոչ ուրվագծեր: Արդյո՞ք Աստված անփոփոխ կլինի, եթե Նա նկարագրելի է եւ ենթակա է տառապանքի: Ինչպե՞ս կարող է մի բան, որը կազմված է տարրերից ու նորից տարրալուծվում է, տառապանքի ենթակա չլինել»: Աստվածային բնությունը գերազանցում է ֆիզիկական աշխարհը՝ գերազանցելով ցանկացած նյութական ձեւ: Դրա պարզությունն արտահայտվում է ներքին բաժանումների կամ բաղադրիչների բացակայությամբ: Աստվածային հատկանիշները, ինչպիսիք են բանականությունը, իմաստությունը եւ սերը, առանձին էություններ չեն, այլ կազմում են մեկ ամբողջություն: Հատկությունների այս անհասկանալի միասնությունը խոսում է Աստվածային բնության անբաժանելիության ու ամբողջականության մասին:

Աստվածային պարզությունը ենթադրում է նաեւ տարածական կամ ժամանակային սահմանափակումների բացակայություն: Գոյություն ունենալու համար Աստված ֆիզիկական տարածության կարիք չունի, Նա չունի ձեւ եւ ծավալ: Ավելին, Աստվածային բնությունը ենթակա չէ փոփոխության կամ վերափոխման: Աստված միշտ մնում է անփոփոխ ու հավիտենական: Սա նշանակում է, որ Աստվածային բնությունն ունի կատարյալ կայունություն եւ անփոփոխություն: Աստծո հոգեւոր լինելը ենթադրում է Նրա ինքնագիտակցությունը, ազատ կամքն ու ստեղծագործության հետ փոխհարաբերությունների կարողությունը: Աստված ոչ թե անանձնական ուժ է, այլ անձնական եւ կենդանի էակ, որը կարող է զգացմունքներ զգալ ու սեր դրսեւորել: Այսպիսով, աստվածային պարզությունը եւ հոգեւորությունն արտացոլում են Աստծո անդրանցական էությունը, Նրա աներեւակայելի միասնությունն ու կատարելությունը: Այս հատկանիշները տարբերում են Աստծուն նյութական առարկանե-

*րից՝ հիմք տալով կրոնական պաշտամունքի ու Նրա հետ անձնական հարաբերությունների համար:*

*Աստված գերագույն էակ է՝ յուրահատուկ եւ անսահման իմաստուն կամքով: Այս կամքը բացարձակապես կատարյալ է, անփոփոխ ու դուրս է մեր մարդկային հասկացողությունից: Նա մարմնավորում է ե՛ւ սկզբնական ցանկությունը, ե՛ւ դրա իրականացումը, եւ մարդկային միտքը չի կարողանում հասկանալ, թե ինչպես են այս երկու ասպեկտները գոյակցում Աստծո մեջ: Լինելով ամենակատարյալ ու գերագույն էակը՝ Աստված կարիք չունի արտաքին ցանկության առարկաների: Նա Ինքն է Իր կամքի եւ ցանկության առարկան, քանի որ Նա տիրապետում է բոլոր կատարելությունների բացարձակ ամբողջականությանը:*

*Աստծո կամքը դրսեւորվում է Նրա արարչության ու նախախնամության մեջ: Այն ամենը, ինչ գոյություն ունի տիեզերքում, ստեղծվել է Աստծո կամքի համաձայն, եւ Նա է որոշում աշխարհի ու յուրաքանչյուր մարդու ճակատագիրը: «Նրանով է, որ ժառանգեցինք մեզ վիճակված բաժինը, ըստ առաջադրության Աստծու, որ ամեն ինչ հաջողեցնում է իր կամքի խորհուրդների համաձայն» (Եփես. 1.11): Աստծո կամքը հասկանալը հոգեւոր աճի ու հավատքի զարգացման կարեւոր կողմն է: Աստծո կամքը ճանաչելու եւ կատարելու ցանկությունը դառնում է անձնական հոգեւոր կատարելագործման ու Աստծո հետ հոգեւոր միության ուղի:*

*Աստված ունի բացարձակ ազատություն, ինչը նշանակում է, որ Նա ոչնչով սահմանափակված չէ եւ գործում է բացառապես իր ցանկությամբ ու կամքով: «Տերն ինքը Հոգին է. ուր որ Տիրոջ Հոգին է, այնտեղ ազատություն է» (Բ Կոր. 3.17): Այս ազատությունը կամայական կամ քմահաճ չէ, այլ միշտ համահունչ է Նրա կատարյալ եւ անփոփոխ էությանը: Աստված ազատ է Իր գոյության մեջ, Նա կախված չէ որեւէ արտաքին գործոններից կամ պատճառներից:*

*Նա ինքնագո է ու հանդիսանում է ողջ գոյության աղբյուրը: Նա կարող է անել այն, ինչ ուզում է, եւ ոչ ոք ու ոչինչ չի կարող կանգնեցնել Նրան կամ ստիպել նրան անել այն, ինչ Նա չի ուզում: Նրա կամքը կախված չէ որեւէ արտաքին գործոններից կամ ազդեցություններից: Նա միշտ գործում է ըստ իր հայեցողության եւ առաջնորդվում է միայն Իր կատարյալ իմաստությամբ ու բարությամբ: Աստված ազատ է Իր ընտրության մեջ: Նա կարող է ընտրել գործողությունների անսահման թվով տարբերակներից եւ միշտ ընտրում է այն, ինչը Նա համարում է լավագույնն ու ամենահամապատասխանը Իր նպատակներին եւ ծրագրերին: Նրա ընտրությունը սահմանափակված չէ որեւէ պայմանով կամ հանգամանքով, եւ Նա միշտ գործում է Իր կատարյալ ու անփոփոխ էության համաձայն: Աստված ազատ է Իր գործերում: Նրա գործողությունները սահմանափակված չեն որեւէ օրենքով կամ կանոնակարգով, եւ Նա միշտ գործում է Իր կատարյալ կամքին ու իմաստությանը համապատասխան: Աստված ազատ է մարդկանց հետ Իր հաղորդակցության մեջ: Նա կարող է մարդկանց հետ շփվել այնպես, ինչպես ցանկանում է, եւ ոչ ոք ու ոչինչ չի կարող կանգնեցնել Նրան: Նա կարող է խոսել Իր մարգարեների, Սուրբ Գրքերի կամ տարբեր հանգամանքների եւ իրադարձությունների միջոցով: Նրա փոխհարաբերությունները մարդկանց հետ միշտ նրանց բարօրության ու Նրա կատարյալ նպատակների եւ ծրագրերի իրականացման համար են:*

*Ամենազորությունը Աստծո հիմնական հատկություններից մեկն է: «Գիտեմ, պատում է ուժդ ամեն ինչի, ու չի թուլանում քո մեջ ոչ մի բան» (Հոբ 42.2): Դա նշանակում է, որ Աստված՝ որպես ամենակարող էակ, ընդունակ է անել այն, ինչ Իր կատարյալ, բարի եւ իմաստուն կամքն է կամենում: Աստծո ամենակարողությունը դրսեւորվում է Նրա գոյության եւ գործունեության բոլոր ոլորտներում: «Տե՛ր, ո՛վ դու Տեր, քո մեծ զորությամբ. քո հաղթ բազկով դու*

ստեղծեցիր երկինքն ու երկիրը» (Երեմ. 32.17)։ Աստծո ամենակարողությունը կատարյալ է եւ չի սահմանափակվում որեւէ արտաքին գործոններով։ Նա կարիք չունի որեւէ այլ էակի կամ ուժերի օգնության ու աջակցության՝ Իր ծրագրերը եւ մտադրություններն իրականացնելու համար։ Նա գործում է բացառապես Իր կամքով ու ոչինչ չի կարող խանգարել Նրա գործողություններին, երբ Նա որոշում է ինչ-որ բան անել։ Աստված օգտագործում է Իր ամենակարողությունը նշաններ եւ հրաշքներ կատարելու համար, որոնք ցույց են տալիս Նրա զորությունն ու հոգատարությունը Իր արարածների նկատմամբ։ Հին եւ Նոր Կտակարանների պատմության ընթացքում մենք տեսնում ենք բազմաթիվ օրինակներ, որոնք ցույց են տալիս Իր ամենակարողությունը, ինչպես, օրինակ՝ Կարմիր ծովի բաժանումը, Հիսուս Քրիստոսի հարությունը եւ հիվանդների ու մյուսների բժշկումը։ Այս հրաշքները վկայում են Աստծո անսահման զորության մասին եւ ծառայում են որպես մարդկանց հանդեպ Նրա մեծ սիրո ու բարեգթության հաստատում։ Աստված չի միջամտում բնական գործընթացների ընթացքին եւ չի խախտում բնության օրենքները, որոնք Ինքն է սահմանել։ Նա թույլ է տալիս մարդկանց ազատորեն ընտրել իրենց կյանքի ճանապարհը՝ հարգելով նրանց ազատ կամքն ու թույլ տալով նրանց ինքնուրույն որոշումներ կայացնել։ Աստծո ամենակարողությունը մխիթարության եւ հույսի աղբյուր է հավատացյալների համար։ Նրանք գիտեն, որ Աստված ամենակարող է ու ի վիճակի է պաշտպանել իրենց չարից, օգնել իրենց դժվարին իրավիճակներում եւ կատարել իրենց ցանկությունները։ «Հա՛յր, ամեն ինչ քեզ կարելի է» (Մարկ. 14.36)։ Աստծո ամենազորության հանդեպ հավատը տալիս է ուժ եւ քաջություն, թույլ է տալիս հաղթահարել կյանքի ճանապարհին հանդիպող փորձություններն ու մարտահրավերները։ Աստծո ամենակարողությունը Նրա հանդեպ մեր վստահության հիմքն է։ Մենք

*կարող ենք վստահ լինել, որ Աստված, որպես ամենակարող էակ, ի զորու է կատարել Իր բոլոր խոստումները եւ առաջնորդել մեզ դեպի հավիտենական փրկություն։ Աստծո ամենազորության հանդեպ հավատը մեզ վստահություն է տալիս Նրա սիրո, հոգատարության ու հավատարմության նկատմամբ։*

*Աստված սուրբ է։ «Սո՛ւրբ, սո՛ւրբ, սո՛ւրբ է Զորությունների Տերը» (Ես. 6.3)։ Սրբությունը Աստծո կարեւորագույն հատկություններից մեկն է։ Դա արտահայտվում է նրանով, որ Աստված բացարձակապես կատարյալ է եւ մաքուր։ Նա չի կարող որեւէ չար կամ անարդար բան անել։ Աստծո սրբությունը նշանակում է, որ Նա ենթակա չէ որեւէ մեղքի կամ թերության։ Սրբությունը Աստծո տարբերակիչ հատկություններից մեկն է, այդ հատկությունն է, որ տարբերում է Նրան մնացած գոյերից։ Աստծո սրբությունը ոչ միայն զատում է Նրան մեղքից, այլեւ Նրան դարձնում է սրբության աղբյուր բոլոր արարածների համար «Սո՛ւրբ եղեք, որովհետեւ սուրբ եմ ես» (Ա Պետ. 1.16)։ Տերը նրանց շնորհում է Իր սրբությունը, որպեսզի նրանք կարողանան արտացոլել Նրա բնավորությունը եւ ապրել Նրա կամքին համապատասխան։ Աստծո սրբությունը Նրան արժանի է դարձնում երկրպագության, հիացմունքի եւ վստահության։ Աստծո սրբությունը նաեւ հույսի ու մխիթարության աղբյուր է հավատացյալների համար։ Իմանալով, որ Աստված սուրբ է, նրանք կարող են վստահ լինել, որ Նա միշտ կլինի հավատարիմ, արդար եւ ողորմած։ Աստծո սրբությունը նաեւ ուժի ու ոգեշնչման աղբյուր է մարդկանց համար։ Իմանալով, որ Աստված սուրբ է, նրանք կարող են ձգտել սրբության։ Նրանք կարող են աղոթել, որ Աստված տա նրանց Իր սրբությունը, եւ նրանք կարող են ապրել Նրա կամքի համաձայն։*

*Աստված արդար է։ Ըստ Հայտնության՝ Աստված Ամենաարդար Օրենսդիր է եւ Ամենաարդարացի Դատավոր։ «Կա մե՛կ Օրենսդիր*

*ու Դատավոր, որ կարող է փրկել եւ կործանել» (Հակ. 4.12)։ Աստված, որպես Ամենաարդար Օրենսդիր, բոլոր օրենքների գերագույն աղբյուրն է։ Նա սահմանում է բարոյական չափանիշները, որոնցով մարդիկ պիտի առաջնորդվեն իրենց կյանքում։ Աստծո ամենագիտությունն ու իմաստությունը հնարավորություն են տալիս Նրան հաստատել արդար եւ ճիշտ օրենքներ։ Աստված, որպես Ամենաարդարացի Դատավոր, դատական իշխանության գերագույն կրողն է եւ յուրաքանչյուրին տալիս է ըստ իր արժանիքների։ Նա տեսնում է մարդկանց բոլոր գործերն ու դատում է նրանց արդար եւ անաչառ կերպով։ Աստված պատժում է չարագործներին ու պարգեւատրում արդարներին։ «Ինքն է դատում աշխարհն այս արդարությամբ» (Սաղմ. 9.9)։ Աստված ճշմարիտ բարիքի միակ աղբյուրն է եւ արդարության մարմնացում։ Աստծո արդարության հանդեպ հավատքն օգնում է մեզ հասկանալ Նրան ու ավելի մոտենալ՝ ապրելով մեր կյանքը Նրա կամքին եւ օրենքներին համապատասխան։*

*Ըստ Հայտնության ուսմունքի՝ «Աստված սեր է» (Ա Հովհ. 4.8)։ Սերն էր, որ դարձավ աշխարհի արարման պատճառը։ Աշխարհի արարումը թելադրված էր Աստծո սիրով, Նրա կատարելությունները Իր արարածների հետ կիսելու ցանկությամբ։ Աստված անխոնջորեն առաջնորդում է արարածներին հավերժական ճշմարտության ու երանության ճանապարհով։ Աստծո սիրո հստակ դրսեւորումը անկյալ մարդկության փրկությունն է։ Սուրբ Գիրքն ասում է, որ Աստված, սիրով պատված, աշխարհ ուղարկեց Իր Միածին Որդուն, որպեսզի նա ազատի աշխարհը մեղքից եւ հավիտենական կյանք շնորհի։ «Քանի որ Աստված այնքան սիրեց աշխարհը, որ մինչեւ իսկ Իր միածին Որդուն տվեց, որպէսզի, ով նրան հավատում է, չկորչի, այլ ընդունի հավիտենական կյանքը» (Հովհ. 3.16)։ Սերը ներթափանցում է բոլոր աստվածային կատարելություններն ու օրհնությունները, որոնք Նա հեղում է մարդկանց վրա։ Այն միավո-*

*րում է աստվածային կատարելությունները՝ ստեղծելով բոլոր կատարելությունների հանրագումարը կամ միությունը։ Աստծո սերն անսահման է եւ համապարփակ։ Այն տարածվում է բոլոր մարդկանց վրա։ Եւ յուրաքանչյուր մարդ կոչված է՝ փոխադարձ սիրով արձագանքելու այդ սիրուն, դա ցույց տալով իր մտքերով, խոսքերով ու գործերով։ Սերը քրիստոնեության ամենակարեւոր պատվիրանն է։ «Պիտի սիրես քո Տեր Աստծուն քո ամբողջ սրտով, քո ամբողջ հոգով ու քո ամբողջ մտքով։ Այս է մեծը եւ առաջին պատվիրանը. Եւ երկրորդը սրա նման է. պիտի սիրես քո ընկերոջը, ինչպես քո անձը։ Այս երկու պատվիրաններից են կախված ամբողջ Օրենքը եւ մարգարեները» (Մատթ. 22.37-40)։ Մարդը, սիրելով Աստծուն եւ մերձավորին, նմանվում է Տիրոջը եւ դառնում նրա հավիտենական սիրո մասնակիցը։*

## *Գ Լ Ո Ւ Խ  Բ*

# Սուրբ Երրորդություն

*Սուրբ Երրորդությունը քրիստոնեության հիմնարար դավանանքն է, որը նմանը չունի այլ կրոններում: Այս վարդապետության կենտրոնական դրույթն այն է, որ Աստված ունի մեկ էություն եւ երեք Անձեր՝ Հայրը, Որդին ու Սուրբ Հոգին: Սուրբ Երրորդության դավանանքի ազդեցությունը քրիստոնեական աստվածաբանության եւ պատարագի վրա անգնահատելի է: Դրանից բխում են այնպիսի հիմնական վարդապետություններ, ինչպիսիք են մարմնավորումը, քավությունն ու սրբացումը: Նմանապես՝ պատարագի պաշտամունքը քրիստոնեական ավանդույթում ներծծված է Երրորդության թեմաներով. դավանություն Հոր, Որդու եւ Սուրբ Հոգու, աղոթքը Սուրբ Երրորդության անունով ու Սուրբ Հոգու կանչը խորհուրդներում: Սուրբ Երրորդության դավանանքը մնում է հիմնական սկզբունքը, որը միավորում է տարբեր ավանդույթների հավատացյալներին: «Գնացե՛ք ուրեմն աշակերտ դարձրե՛ք բոլոր ազգերին, նրանց մկրտեցե՛ք Հոր եւ Որդու եւ Սուրբ Հոգու անունով» (Մատթ. 28.19): Աստծո մասին Հայտնության վարդապետությունը ձգտում է բացահայտել ճշմարտությունը Սուրբ Երրորդության մասին, որը համարվում է գերագույն ու բացարձակ ճշմարտություն: Այն անքակտելի ամբողջություն է, որը չի կարող մասնատվել կամ բաժանվել, որպեսզի չկորցնի իր աստվածային բնույթը, կենսատու շնորհը եւ զորությունը: Ըստ ս. Գրիգոր Նազիանզացու. «Մենք երկրպագում ենք Հորը եւ Որդուն եւ Սուրբ Հոգուն՝ բաժանելով անձնական հատկությունները եւ միավորելով Աստվածությունը»[1]:*

---

[1] Там же, с. 531.

*Սուրբ Երրորդության դավանանքը քրիստոնեության հիմնաքարն է, որը, սակայն, անիմանալի է ինչպես մարդկանց, այնպես էլ հրեշտակների համար։ «Ոչ ոք չի ճանաչում Որդուն, եթե ոչ՝ Հայրը, եւ ոչ ոք չի ճանաչում Հորը, եթե ոչ՝ Որդին» (Մատթ. 11.27)։ Այս անիմանալիությունը պայմանավորված է այս դավանանքի բուն էությամբ, որը վերաբերում է հենց Անսահման էակին։ Բնությամբ սահմանափակված մարդկային միտքն ի վիճակի չէ անսահմանի գաղափարը տեղավորել իր նեղ ռացիոնալ հասկացությունների մեջ։ Հայտնությունը չի բացատրում Սուրբ Երրորդության դավանանքի էությունը, այլ միայն մատնանշում է Հոր, Որդու եւ Սուրբ Հոգու գոյությունը Աստծո եռամիասնական էության մեջ։ Սուրբ Երրորդության դավանանքի անիմանալիության պատճառը մարդկային լեզվում այն արտահայտող բառերի բացակայության մեջ է։ Ամենավառ երեւակայությունն ու մարդկային ամենախորաթափանց միտքը չեն կարողանում հասկանալ, թե ինչպես են Աստծո մեջ երեք Անձեր, որոնցից յուրաքանչյուրը Աստված է, բայց ոչ թե երեք Աստված, այլ մեկ Աստված։ Չնայած իր անիմանալիությանը՝ Սուրբ Երրորդության դավանանքը քրիստոնեական հավատքի հիմքն է։ Ըստ ս. Գրիգոր Տաթեւացու. «Բովանդակ Աստվածաշունչ սուրբ գիրքը եւ հոգելից վարդապետները սովորեցնում եւ դավանում են աստվածային անեղ էությունը՝ երեք անձերով եւ մի բնությամբ»[1]։ Այն բացահայտում է Աստվածային էության գաղտնիքը, որն անհասանելի է մարդու մտքին, բայց բացահայտվում է հավատքի միջոցով։ Սուրբ Երրորդության հանդեպ հավատքն անհրաժեշտ է փրկության համար, քանի որ այն մեկ Աստծո քրիստոնեական վարդապետության հիմքն է, որը Հայր, Որդի եւ Սուրբ Հոգի է։ Բացի*

---

[1] Գրիգոր Տաթեւացի, *Ոսկեփորիկ, Թարգմանությունը եւ ծանոթագրությունները՝* Հակոբ Քյոսեյանի, *Եր., 1995, էջ 42։*

այդ՝ Սուրբ Երրորդության դավանանքը մեծ նշանակություն ունի Աստծո եւ մարդու փոխհարաբերությունները հասկանալու համար: Նա ցույց է տալիս, որ Աստված սեր է, քանի որ Նրա մեջ կա անձերի հաղորդակցությունը, որը սիրո աղբյուրն է: Այս դավանանքն ասում է նաեւ, որ մարդը ստեղծված է Աստծո պատկերով ու նմանությամբ, ինչը նշանակում է, որ նա ընդունակ է հաղորդակցվելու եւ սիրելու այնպես, ինչպես իրար հետ հաղորդակցվում ու միմյանց սիրում են Սուրբ Երրորդության Անձերը: Նրանցից յուրաքանչյուրն անկախ անձնավորություն է, ով ունի Աստծուն բնորոշ բոլոր հատկանիշները: Հոր, Որդու եւ Սուրբ Հոգու հավասարությունը կայանում է նրանում, որ նրանցից յուրաքանչյուրն ունի նույն աստվածային կատարելությունները: Թեեւ Հայրը, Որդին ու Սուրբ Հոգին հավասար, համապատիվ եւ համագո աստվածային Անձեր են, նրանք երեք առանձին աստվածներ չեն, այլ մեկ Աստված, որովհետեւ նրանք ունեն մեկ աստվածային էություն:

Աստվածության երրորդության այս վարդապետությունը կարեւոր է քրիստոնեական աստվածաբանության մեջ, քանի որ այն պնդում է, որ Աստված մեկ Անձ չէ, այլ բաղկացած է երեք Անձերից, որոնցից յուրաքանչյուրն ունի բոլոր աստվածային կատարելությունները: Ավելին՝ Երրորդության վարդապետությունը գործնական հետեւանքներ ունի քրիստոնեական կյանքի համար, քանի որ այն ցույց է տալիս, որ Աստված վերացական ուժ կամ անանձնական սկզբունք չէ, այլ սիրող ու հոգատար Հայր է, Որդի, ով եկել է երկիր՝ փրկելու մարդկությանը, եւ Սուրբ Հոգի, որը բնակվում է հավատացյալների մեջ եւ նրանց ուժ է տալիս՝ ապրելու քրիստոնեական կյանքով:

Քրիստոնյաները հավատում են Հորը՝ չստեղծված, չծնված ու անսկիզբ Աստծուն, Որդու ծնողին եւ Սուրբ Հոգու բխողին: Հայր-Աստված Նա է, որ Էն (Ելք 3.14): Չնայած քրիստոնեական ա-

*վանդույթի մեջ այս անունը վերաբերում է Սուրբ Երրորդության բոլոր Անձերին, բայց ամենից շատ այն բնորոշում է հենց Հայր-Աստծուն։ Հայրը Սուրբ Երրորդության անսկիզբ ու անկախ սկզբնապատճառն է։ Նա չի ծնվել կամ ծագել մեկ ուրիշից, այլ գոյություն ունի հավերժ եւ անփոփոխ։ Անսկիզբ լինելու այս հատկությունը բնորոշ է միայն Հորը եւ չի վերաբերում Երրորդության մյուս Անձանց՝ Որդուն ու Սուրբ Հոգուն։ Թեեւ Որդին եւ Սուրբ Հոգին նույնպես անսկիզբ են, սակայն ոչ թե իրենց ծագման, այլ միայն ժամանակի առնչությամբ։ «Ինչպես Հայրն ինքն իր մեջ կյանք ունի եւ կյանք է տալիս, նույնպես եւ Որդուն տվեց ինքն իր մեջ կյանք ունենալ եւ տալ» (Հովհ. 5.26)։ Երկուսն էլ իրենց սկիզբն ունեն Հորից, բայց ո՛չ ժամանակի մեջ, ու հետեւաբար անսկիզբ են որոշակի իմաստով։ Սուրբ Գրքում բացակայում են ցուցումները, որ Հայրը գոյություն ունի Սուրբ Երրորդության որեւէ այլ անձից։ Սա նշանակում է, որ Հայրը բացարձակ սկզբունքն է՝ չունենալով իր գոյության նախորդը կամ աղբյուրը։ Նա գոյություն ունի հավերժորեն, ժամանակից ու տարածությունից դուրս, եւ հանդիսանում է Որդու եւ Սուրբ Հոգու գոյության հիմքն ու աղբյուրը։ Այսպիսով, Հոր անսկիզբ լինելը նրա առանձնահատուկ հատկություններից մեկն է, որն ընդգծում է նրա յուրահատուկ դիրքը որպես Սուրբ Երրորդության աղբյուր եւ սկիզբ։*

*Այս վարդապետությունը, որ Աստվածության մեջ գոյություն ունի միայն մեկ աղբյուր՝ Հայրը, Եկեղեցու հայրերը միապետություն էին անվանում։ Որդին ու Սուրբ Հոգին անձնական գոյություն ունեն Հորից, եւ նրանք կախված են Նրանից իրենց գոյության ու գործողությունների մեջ։ Հայրը միակ բացարձակ սկզբունքն է, որից սկիզբ են առնում Որդին եւ Սուրբ Հոգին։ Նա է նրանց հավերժական գոյության ու զորության աղբյուրը։ Որդին եւ Սուրբ Հոգին իրենց հերթին հավերժական են ու իրենց բնույթով համագո*

Հորը, բայց ենթարկվում են Նրան։ Միապետության սկզբունքը շեշտում է, որ Հայրն Աստվածային ընտանիքի գլուխն ու աղբյուրն է, իսկ Որդին եւ Սուրբ Հոգին Նրա հավերժական ու կատարյալ զավակներն են։ Այս վարդապետությունն ունի կարեւոր աստվածաբանական եւ գործնական հետեւանքներ, քանի որ այն օգնում է մեզ՝ հասկանալու, թե ինչպես կարելի է հավատալ Աստծո մեջ երեք համագո Անձերի գոյությանը, միաժամանակ չխախտելով միաստվածության հիմնակազմ սկզբունքը։

Առաջին Անձի չստեղծված, չծնված ու անճանաչելի լինելը համարժեք են նրա լիակատար անդրանցականությանը։ Նրա եւ արարածների միջեւ կա անանցանելի գոյաբանական անդունդ, եւ Արարչի էությունը ոչ մի ընդհանուր բան չունի նրա արարածների հետ։

Հարկ է նշել, որ Աստվածաշնչի լեզվով էությունը ոչ մի կերպ չէր նույնականանում կեցության հետ։ Հնում, ու հատկապես պլատոնականների շրջանում, էությունը պետք է անպայման ունենար որոշակի սահմաններ եւ, համապատասխանաբար՝ որոշակի ձեւ ու պատկեր։ Այս էությունը կարող էր գոյություն ունենալ ինչպես իմանալի աշխարհում, որտեղ այն կոչվում էր էյդոս կամ գաղափար, այնպես էլ նյութական աշխարհում՝ ընդունելով որոշակի անհատական իրերի տեսքը. հեթանոս աստվածներին պատկերող հնագույն քանդակները հնարավոր դարձան հենց այն պատճառով, որ դրանք ունեին գերզգայական ձեւ եւ պատկեր, որը կարելի էր ճանաչել ինտելեկտուալ ինտուիցիայի միջոցով։ Այնինչ՝ Հին Կտակարանում Աստծո բնությունը, ով հետագայում նույնացվել է Հայր Աստծո հետ, բոլորովին այլ է։ Աստվածաշունչը կտրականապես արգելում է ստեղծել Աստծո ցանկացած պատկեր։ Այդ արգելքի պատճառն այն է, որ Աստված, ի տարբերություն հեթանոսական աստվածությունների, չունի որոշակի պատկեր եւ, հետեւաբար, չի կարող պատկերվել։

*Նույնքան աստվածային է նաեւ Սուրբ Երրորդության երկրորդ Անձը՝ Որդին: Աստվածամարդու մասին քրիստոնեական ուսմունքը իմաստ ունի լոկ այն դեպքում, եթե ճանաչվում է մարդկային բնության հետ միավորված Բանի աստվածությունը: Դա անելու համար հարկավոր է Աստծուն համարել ոչ միայն որպես Մեկ, ինչպես անում են հրեաներն ու մահմեդականները, այլ որպես Երրորդություն, որի Անձերը հավասարապես կատարյալ են եւ համագո: Որդին նույնքան կատարյալ է, որքան Հայրը, եւ նրան հավասարապես պատկանում են այն բոլոր հատկանիշները, որոնք բնութագրում են Աստվածությունը: Թեեւ Հայրը Որդու գոյության պատճառն է, Որդու ծնունդը ոչ մի դեպքում չի կարելի համարել Հոր կամային արարքի հետեւանք: Դա հավերժական ու անճառելի ծնունդ է, որն անհրաժեշտաբար տեղի է ունենում աստվածային էության անդրանցական խորքերում: Քրիստոսի աստվածությունը եւ, հետեւաբար, Նրա փրկության իրականությունը պահպանելու համար Նիկիայի տիեզերաժողովն առաջ քաշեց «համագոյության» գաղափարը, որը թույլ տվեց համատեղել աստվածաշնչյան միաստվածությունը Նոր Կտակարանի հայտնության հետ Աստծո մեջ երեք Անձերի առկայության մասին: Ըստ ս. Եպիփան Կիպրացու. «Եկեղեցին Աստծուն խոստովանում է հետեւյալ կերպ. Հորը եւ Որդուն եւ Սուրբ Հոգուն. Կատարյալ Հորը, կատարյալ Որդուն, կատարյալ Սուրբ Հոգուն, Երրորդությանը՝ համագո եւ չմիաձուլված. Որդուն՝ իսկապես ծնված Հորից, Սուրբ Հոգուն, որը խորթ չէ Հորը եւ Որդուն. Երրորդությանը մշտագո, որը ոչ մի հավելման կարիք չունի, ինքն իր մեջ չունի որեւէ բան, որ եկել է դրանից հետո, որը վերաբերում է մեկ միասնությանը եւ Աստծո ու Հոր մեկ սկզբունքին»[1]:*

[1] Восточные отцы и учители Церкви, В трех томах, Т. III, Москва, 1999, с. 244.

Համագոյությունը նշանակում է, որ Հայրը, Որդին եւ Սուրբ Հոգին կազմում են երեք ինքնուրույն Աստվածային Անձեր, որոնք ունեն Աստվածային կատարելության բոլոր հատկանիշները: Կարեւոր է հասկանալ, որ դրանք առանձին էակներ կամ տարբեր աստվածներ չեն, այլ ներկայացնում են Մեկ Աստծուն: Այս Անձերն ունեն ընդհանուր ու անբաժանելի Աստվածային էություն, ինչպես նաեւ միասնական կամք, ուժ, զորություն եւ փառք: Սուրբ Երրորդության Անձերից յուրաքանչյուրն ունի ամբողջովին ու կատարելապես աստվածային բնություն: Պետք է ընդգծել, որ Սուրբ Երրորդության Աստվածային Անձերից յուրաքանչյուրն ունի յուրահատուկ գործառույթներ ու դերեր աշխարհի ստեղծման եւ փրկության գործում: Հայրը համարվում է ամեն ինչի Արարիչը, Որդին մարդկության Փրկիչն է, իսկ Սուրբ Հոգին հավատացյալների մխիթարիչն ու սրբագործողն է:

Համագոյություն եզրույթի ներմուծումն ուղղափառ աստվածաբանության մեջ պահանջում էր որոշակի համարձակություն: Այս բառը չկա Նոր Կտակարանում, եւ դրանից բացի այն վարկաբեկվել է հերետիկոս Պողոս Սամոսատցու կողմից, ով այն օգտագործել է Հոր եւ Որդու միջեւ տարբերության բացակայությունը նշելու համար, ինչը բացարձակապես անընդունելի էր Եկեղեցու համար:

Որդի Աստծո անձնական հատկանիշը Նրա հավերժական ու անփոփոխ ծնունդն է Հայր Աստծուց: Ծնունդ կամ որդիություն հասկացությունը ծառայում է որպես Հայր Աստծուց Նրա տարբերակիչ նշան: Սուրբ Գիրքը մատնանշում է որդիությունը որպես Որդի Աստծո հիմնական հատկանիշը Հոր հետ կապված: Աստծո Որդին հավասար է Հորը եւ համագո է Նրա հետ: Այնուամենայնիվ, հայտնությունն ուղղակիորեն չի բացատրում, թե ինչպես կարելի է հասկանալ ծնունդը Աստվածության մեջ, որը բնութագրվում է ոգեղենությամբ եւ անվերապահ պարզությամբ: Դրա պատճառը պարզ

*է՝ սա աստվածային կյանքի խորհուրդ է, որը վեր է մարդկային հասկացողությունից ու ընկալումից։ «Ծնունդ» եզրույթը, որն օգտագործվում է Որդու ծագման ձեւը նշելու համար, միայն ցույց է տալիս, որ Որդին անհասկանալի ձեւով, առաջացել է Հորից եւ Հոր մեջ։ Սա ցույց է տալիս, որ Որդին հավիտենական ու անփոփոխ ծագում ունի Հորից՝ չխախտելով աստվածային բնության միասնությունն ու պարզությունը։ Քրիստոնեական վարդապետությունն ընդունում է, որ Հայր Աստված եւ Որդի Աստված ունեն մեկ աստվածային էություն, բայց գոյություն ունեն որպես առանձին Անձեր։ «Ես եւ իմ Հայրը մի ենք» (Հովհ. 10.30)։ Հորից Որդու ծնունդը չի նշանակում աստվածային էության բաժանում, այլ ավելի շուտ արտահայտում է ներքին միասնությունն ու հաղորդակցությունը Երրորդության մեջ։*

*Քրիստոնեական աստվածաբանության մեջ առաջացան մի քանի ուղղություններ, որոնք փորձում էին բացատրել Հայր Աստծո եւ Հիսուս Քրիստոսի հարաբերությունները։ Դրանցից մեկը Սաբելիականությունն էր, որն իր անունը ստացել է Գ դարում ապրած լիբիացի քահանա Սաբելիոսից։ Սաբելիականները պնդում էին, որ Հայր Աստված, Որդի Աստված ու Սուրբ Հոգի Աստված երեք առանձին Անձեր չեն, այլ միեւնույն Աստված, որն Իրեն դրսեւորում է տարբեր ձեւերով։ Նրանք հավատում էին, որ Քրիստոսը ոչ թե առանձին աստվածային Անձ է, այլ Հայր Աստծո դրսեւորում։ Սաբելիականության վարդապետության համաձայն՝ Հիսուս Քրիստոսը Աստծո հավերժական Որդին չէր, այլ այդպիսին դարձավ միայն Մարիամ Աստվածածնից իր ծննդյան պահին։ Նրանք պնդում էին, որ «Աստծո որդի» տիտղոսը չի վերաբերում Քրիստոսի հավերժական էությանը, այլ նրա՝ որպես Մեսիայի եւ Աստծո առաքյալի դերի ժամանակավոր նշանակումն էր։ Սաբելիականությունը որպես հերետիկոսություն դատապարտվեց Նիկիայի տիեզերաժողովում*

325 թվականին: Ժողովի Հայրերը հաստատեցին Աստծո Որդու՝ Հիսուս Քրիստոսի հավերժական ու անփոփոխ էությունը եւ Նրա միությունը Հայր Աստծո հետ: Նրանք որոշեցին, որ Քրիստոսը ոչ թե հասարակ մարդ է, այլ ճշմարիտ Աստված, որը ծնվել է Հորից հավերժության մեջ:

Այս ամենը հակասում է Սուրբ Գրքին: Աստվածաշունչը հստակ ասում է, որ Հայր Աստված ու Հիսուս Քրիստոսը երկու առանձին անձնավորություններ են: Իրականում սա չի նշանակում, որ նրանք նույն անձնավորությունն են, այլ ավելի շուտ այն, որ նրանք նույն էությունն ունեն եւ մեկ են իրենց կամքով ու գործողություններով: Սաբելիականությունը նաեւ ժխտում է Քրիստոսի մարդկության իրականությունը: Եթե Հիսուս Քրիստոսը Հայր Աստծո զուտ դրսեւորումն էր, ապա նա չէր կարող իսկապես մարդ դառնալ եւ մեռնել մարդկության մեղքերի համար: Սակայն Սուրբ Գիրքը հստակորեն ուսուցանում է, որ Քրիստոսը ճշմարիտ մարդ էր, ով ուներ մարմին, հոգի ու ոգի (Եբր. 2.14): Այսպիսով, Սաբելիականությունն անհամատեղելի է Աստծո եւ Հիսուս Քրիստոսի մասին աստվածաշնչյան վարդապետության հետ: Այն դատապարտվեց որպես հերետիկոսություն ու մերժվեց քրիստոնեական եկեղեցիների ճնշող մեծամասնության կողմից:

Մյուս կարեւոր երրորդաբանական հերձվածը արիոսականությունն էր: Այդ հերձվածն առաջացել է Դ դարի սկզբին եւ գոյատեւել մի քանի դար: Արիոսականները պնդում էին, որ Հիսուս Քրիստոսն Աստված չէր, այլ ստեղծված մի էակ էր, որը ենթակա էր Հայր Աստծուն: Նման պնդումը եւս հակասության մեջ է Սուրբ Երրորդության դավանանքի հետ, որն ասում էր, որ Աստված գոյություն ունի երեք Անձի մեջ՝ Հայր, Որդի եւ Սուրբ Հոգի, սակայն մեկ է իր էությամբ: Ըստ ս. Գրիգոր Տաթեւացու. «Արիոսը չարաչար բաժանում է Աստվածությունը, զատորոշելով երեք անձերը եւ երեք

*բնությունները»*[1]*: Արիոսականներին գլխավորում էր երեց Արիոսը Ալեքսանդրիայից: Վերջինս քարոզում էր, որ Հիսուս Քրիստոսը ոչ թե Աստված էր, այլ ստեղծված էակ՝ ենթակա Հայր Աստծուն: Նա հավատում էր, որ Հիսուս Քրիստոսն Աստծո առաջին ու ամենակատարյալ արարածն էր, որի միջոցով ստեղծվեցին մյուս արարածները, բայց նա հավասար չէր Հայր Աստծուն: Նաեւ պնդում էր, որ Սուրբ Հոգին Երրորդության առանձին անձնավորություն չէ, այլ զորություն է, որը բխում է Հայր Աստծուց: Արիոսականությունը դատապարտվել է Նիկիայի Առաջին տիեզերական ժողովում՝ 325 թվականին: Ժողովն ընդունեց Նիկիական դավանանքը, որում ասվում էր, որ Հիսուս Քրիստոսը «Աստված է Աստծուց, լույս՝ լույսից, ճշմարիտ Աստված՝ ճշմարիտ Աստծուց»: «Ես որպես լույս եկա աշխարհ, որպեսզի ամեն ոք, որ ինձ հավատում է, խավարում չմնա» (Հովհ. 12.46): Որդին ոչ թե արարված է, ինչպես համարում էր Արիոսը, այլ ներքին անհրաժեշտությամբ ծնված է Հոր էությունից, ինչպես լույսն արեւից: Ծնված լինելը նշանակում է իր բնությամբ հաղորդակից լինել Հոր բնությանը, ընդ որում Հայրը դրա հետեւանքով որեւէ փոփոխություն չի կրում: Որդին նույնքան մշտնջենավոր է, որքան եւ Հայրը, Նա Հոր հետ նույն էությունն ունի, ուստի նրանք համագո են: «Նա, որ լույսն է նրա փառքի եւ բուն պատկերը նրա էության, որ իր խոսքի զորությամբ հաստատ է պահում տիեզերքը: Նա մեր մեղքերի մաքրումը կատարելուց հետո նստեց Աստծու մեծության աջ կողմում՝ բարձունքներում» (Եբր. 1.3): Բնությամբ նրանք չեն տարբերվում իրարից, սակայն տարբերվում են ըստ ծնված կամ չծնված լինելու հատկության: Հայրը պատճառ է, իսկ Որդին՝ հետեւանք, ուստի Որդին ենթարկվում է Հորը: Եկեղեցու համար արիոսականությունը մերժելի էր նախ եւ*

---

[1] Գրիգոր Տաթեւացի, *Ոսկեփորիկ, էջ 50:*

*առաջ փրկաբանական տեսակետից, քանի որ եթե մարմնացած Բանը համագո չէ Հորը, ապա մարդկության փրկությունն անհնարին է դառնում, քանզի դրա միակ հնարավորությունն աստվածային ու մարդկային բնությունների միացումն է։*

*Սուրբ Հոգու աստվածության վարդապետությունը միանշանակորեն հռչակվել է 325 թ. Նիկիայի տիեզերաժողովում եւ վերջնականապես հաստատվել 381 թվականին Կոստանդնուպոլսում տեղի ունեցած Երկրորդ տիեզերական ժողովում։ Ժողովի նման որոշման անհրաժեշտությունը պայմանավորված էր Կոստանդնուպոլսի եպիսկոպոս Մակեդոնի գործունեությամբ, ով Դ դարում հայտնվեց աստվածաբանական հակասությունների կենտրոնում։ Արիոսականության մեղադրանքների պատճառով պաշտոնանկ արվելուց հետո Մակեդոնը ձեւակերպեց իր սեփական վարդապետությունը՝ կենտրոնացած Սուրբ Հոգու էության վրա։ Նրա վարդապետությունը զգալիորեն հեռացած էր Նիկիական ուղղափառությունից եւ հայտնի է որպես հոգեմարտություն։ Մակեդոնը մերժեց Սուրբ Երրորդության գաղափարը որպես երեք հավերժական ու համագո անձեր՝ փոխարենն առաջարկելով հիերարխիա Աստվածության ներսում։ Ըստ նրա՝ Որդին ըստ էության նման էր Հորը, բայց ոչ նույնական։ Իսկ Սուրբ Հոգին համարվում էր ենթակա էակ, որը նման է հրեշտակին։ Նա ժխտում էր Սուրբ Հոգու աստվածությունը՝ պնդելով, որ այն ընդամենը սրբացնող ուժ է, որը բխում է Աստծուց, բայց չունի նույն կարգավիճակը, ինչ Հայրը եւ Որդին։ Երկրորդ տիեզերական ժողովը (381 թ.) դատապարտեց Մակեդոնի ուսմունքները որպես հերձված։ Ժողովի հայրերը հաստատեցին Նիկիայի հավատո հանգանակը՝ հայտարարելով Սուրբ Հոգուն որպես «Տեր ու կյանք տվող, որը բխում է Հորից, որը Հոր եւ Որդու հետ միասին երկրպագվում ու փառավորվում է»։ Ըստ ս. Բարսեղ Կեսարացու. «Մեզ համար անարդարացի է ծառայական անվանել*

*Նրան՝ որպես բնությամբ ինքնիշխան, եւ արարածների շարքում դասել Նրան, Ով աստվածային ու օրհնյալ Երրորդության մեջ է»[1]: Հոգեմարտությունը մարտահրավեր էր նետում Սուրբ Երրորդության ուղղափառ ըմբռնմանը: Շեշտելով Սուրբ Հոգու եւ Հոր ու Որդու միջեւ տարբերությունը՝ Մակեդոնը ակամայից ուշադրություն հրավիրեց Աստվածության էության հստակ աստվածաբանական ձեւակերպման անհրաժեշտության վրա: Կոստանդնուպոլսի ժողովի կողմից Նիկիական դավանանքի հաստատումը առանցքային դեր խաղաց Երրորդության ուղղափառ վարդապետության հաստատման գործում, որն այսօր էլ ընդունված է քրիստոնեական դավանանքների մեծամասնության կողմից:*

*Սուրբ Հոգին Սուրբ Երրորդության Անձերից մեկն է, որն ամեն ինչում հավասար է Հորը եւ Որդուն: «Անանիա՛, ինչո՞ւ սատանան լցրեց քո սիրտը, որ դու ստեիր Սուրբ Հոգուն եւ ագարակի գումարից թաքցնեիր. չէ՞ որ քանի կար, քոնն էր այն, եւ վաճառելիս՝ քո տնօրինության տակ էր. ինչպե՞ս եղավ, որ քո սրտի մեջ այս բաները դրեցիր. մարդկա՛նց չստեցիր, այլ՝ Աստծուն» (Գործք 5.3-4): Աստծո Հոգին իրավամբ կրում է Սուրբ անունը, որն այն տարբերում է մարդկային հոգիներից: Սուրբ Հոգու նպատակն է՝ ստեղծել Աստծո Արքայությունը յուրաքանչյուր մարդու մեջ ու այն վերածել Բարձրյալի տաճարի: «Չգիտե՞ք, թէ ձեր մարմինները տաճար են Սուրբ Հոգու, որ ձեր մեջ է, եւ որը ստացել եք Աստծուց (Ա Կոր. 6.19): Սուրբ Հոգու բնակության ոլորտը Քրիստոսի Եկեղեցին է: Ավետարանում Որդին եւ Հոգին ներկայացված են որպես աշխարհ ուղարկված երկու աստվածային Անձեր: Նրանցից առաջինն ուղարկված է մարդկային բնության հետ կապվելու՝ մեղքից եւ մահից նրա ապաքինման համար, իսկ երկրորդը՝ մարդկանց հոգիների հո-*

[1] Симфония по творениям святителя Василия Великого, с. 112.

գեւոր վերածննդի համար։ Սուրբ Հոգին պարզապես անանձնական ուժ չէ, այլ մտքով, կամքով ու զգացմունքներով անձնավորություն։ Նա ակտիվորեն մասնակցում է աշխարհի եւ Եկեղեցու կյանքին՝ խրատելով, մխիթարելով ու դատապարտելով մարդկանց։ Հոգեգալստից ի վեր, երբ Սուրբ Հոգին իջավ առաքյալների վրա հրե լեզուների տեսքով, Նա գործում է աշխարհում Եկեղեցու միջոցով։ Նա հոգեւոր շնորհների աղբյուրն է, որն օգնում է քրիստոնյաներին ծառայել Աստծուն եւ ուրիշներին։ Սուրբ Հոգին նաեւ Մխիթարիչն է, ով աջակցում ու զորացնում է հավատացյալներին դժվար պահերին։ «Իսկ Մխիթարիչը՝ Սուրբ Հոգին, որին Հայրը կուղարկի իմ անունով, նա ձեզ ամեն բան կուսուցանի եւ ձեզ կհիշեցնի այն ամենը, ինչ ես ասացի ձեզ» (Հովհ. 14.26)։ Նա օգնում է նրանց հաղթահարել գայթակղություններն ու կրել իրենց խաչը։ Սուրբ Հոգին հավատացյալների սրտերը լցնում է Աստծո եւ մյուսների հանդեպ սիրով ու երախտագիտությամբ։ Այսպիսով, Սուրբ Հոգին Սուրբ Երրորդության անբաժան մասն է եւ ակտիվ մասնակիցը աշխարհի եւ Եկեղեցու կյանքի։

Աստվածության եռամիասնությունը քրիստոնեական վարդապետության կենտրոնական դավանանքն է։ Քրիստոնյաները հավատում են մեկ Աստծո մեջ երեք Անձերի գոյությանը՝ Հոր, Որդու եւ Սուրբ Հոգու։ Թեեւ Սուրբ Երրորդության երեք Անձերը տարբեր են, նրանք ունեն մէկ էություն։ Սուրբ Երրորդության յուրաքանչյուր Անձ ունի իր առանձնահատուկ անհատական հատկանիշները. Հայրը չծնված է, Որդին ծնված է Հորից, եւ Սուրբ Հոգին բխում է Հորից։ Հայրը, որպես բոլոր բաների հիմնական աղբյուրը, չունի սկիզբ ու չի ծնվել կամ ստեղծվել։ Նա հավերժ է եւ Աստվածային կյանքի աղբյուրն է։ Որդին՝ Հիսուս Քրիստոսը, ծնվել է Հորից։ Նա մարմնավորվեց որպես մարդ՝ մարդկությանը փրկություն բերելու համար։ Սուրբ Հոգին, որը բխում է Հորից, գործում է աշխարհում ու

*հավատացյալների սրտերում՝ սրբացնելով նրանց։ Սուրբ Երրորդությունն անչափ գերազանցում է մարդկային բանականությունը եւ նա հավատքի առարկա է, այլ ոչ թե մտավոր ըմբռնման։ Սուրբ Երրորդության դավանանքի դասական սահմանումը պատկանում է հայ նշանավոր աստվածաբան ու իմաստասեր Վահրամ Րաբունուն։ Ըստ նրա. «Հավատում եւ դավանում ենք մեկ աստվածություն երեք անձերով. ոչ թե բաժանված ըստ անձերի եւ աստվածությունը՝ երեքի մեջ, իբրեւ մեկն արարիչ եւ մյուսը՝ արարած, որպես միջոցներ, իսկ մյուսը՝ սպասարկու եւ ծառայող, քանզի սա Արիոսի մոլորության ու հեթանոսների բազմաստվածությանն է հատուկ։ Ոչ էլ ըստ աստվածության միության եւ երեք անձերի շփոթմամբ խառնյալ ենք խոստովանում, մեկ ենք ընդունում Հայր եւ Որդի եւ Սուրբ Հոգի անվանումը՝ իբրեւ մեկի մասին ասված։ Ինչպես, օրինակ՝ մեկը կոչվում է մարդ, շնչավոր եւ Սոկրատես, բայց մեկ է, որովհետեւ սա հրեության համախոհ Սաբելին[1] է հատուկ։ Այլ դավանում ենք Հորը, Որդուն, Սուրբ Հոգուն իբրեւ երեք Անձեր եւ մեկ աստվածություն, ինչպես որ մեկ տան մեջ վառված երեք լապտերներ են երեւում՝ ըստ Անձերի բաժանված լույսով միավորված»[2]։*

---

[1] *Ինչպես նշեցինք վերեւում, Գ դարի լիբիացի քահանա Սաբելիոսի հետեւորդները պնդում էին, որ Հայր Աստված, Որդի Աստված եւ Սուրբ Հոգի Աստված երեք առանձին Անձեր չեն, այլ միեւնույն Աստված, ով ունի տարբեր ձեւերով դրսեւորումներ։*

[2] Վահրամ Րաբունի, *Հավատքի դավանություն (Աշխարհաբարի վերածեց* Վ. fճ. Մելիքյանը*), Ս. Էջմիածին, 2014, էջ 15-16։*

## *Գ Լ Ո Ւ Խ   Գ*

# Աշխարհ

*Աշխարհը, որպես բոլոր սահմանափակ էակների հավաքական գոյություն տարածության ու ժամանակի մեջ, իր ծագումն ունի Աստծո արարչագործությունից եւ չի առաջացել որեւէ ինքնաստեղծ կամ պատահական ձեւով։ «Որքա՜ն մեծ են գործերը քո, Տե՛ր, ամեն ինչ իմաստությամբ ստեղծեցիր Դու, եւ աշխարհը լցվեց քո ստեղծածներով» (Սաղմ. 103.24)։ Աստված էր, որ արարեց բոլոր գոյերին Իրենից դուրս՝ ընդգրկելով այն ամենը, ինչ կարելի է տեսնել եւ ինչ մնում է անտեսանելի՝ ներառյալ աննյութական ոգիների տիրույթը։ Սա այն ըմբռնումն է, որ տրված է մեզ աստվածային հայտնության միջոցով եւ կազմում է եկեղեցու վարդապետության անբաժանելի մասը։ Աստված Արարիչն է երկնքի ու երկրի, ինչպես նաեւ այն ամենի, ինչ գոյություն ունի տարածության եւ ժամանակի մեջ։ Հայտնության համաձայն՝ արարումն Աստծո ամենազորության դրսեւորումն է, որի արդյունքում այն ամենը, ինչ գոյություն ունի Աստծուց դուրս, ստեղծվել է ոչնչից՝ Աստծո կամքի միանձնյա ազատ գործողությամբ։ Հավատ առ Աստված՝ երկնքի եւ երկրի Արարիչը, նշանակում է գիտակցում, որ աշխարհը՝ բաղկացած սահմանափակ գոյության ամբողջությունից, Աստծո կողմից արարվել է լիակատար անգոյությունից։ Ըստ Եզնիկ Կողբացու. «Ինքն է պատճառը բոլորի, որ ստեղծվեցին՝ անգոյությունից գոյության բերվելով»[1]։ Այսինքն՝ Նա ստեղծել է գոյություն ունեցող ողջ իրականությունը ոչնչից՝ առանց նախապես գոյություն ունեցող նյութի օգտագործման։*

---

[1] Եզնիկ Կողբացի, *Եղծ աղանդոց, Թարգմանությունը եւ ծանոթագրությունները*՝ Ա. Ա. Աբրահամյանի, *Եր., 1994, էջ 7։*

*Աշխարհի Աստվածային արարման կերպն անհասկանալի առեղծված է սահմանափակ մարդկային մտքի համար։ Մեր ամենօրյա փորձը ծանոթ է միայն արդեն գոյություն ունեցող նյութերից իրերի առաջացմանը, բայց ոչ բացարձակ ոչնչից ինչ-որ բան ստեղծելուն։ Արարչագործության խորհուրդը հնարավոր է ըմբռնել միայն հավատքով։ Հավատքը մեզ բացահայտում է, որ տիեզերքը ստեղծվել է Աստծո խոսքով, եւ որ տեսանելին առաջացել է անտեսանելիից։ «Հավատո՛վ ենք իմանում, որ աշխարհներն ստեղծվել են Աստծու խոսքով՝ անտեսանելի բաներից տեսանելիներ դառնալով» (Եբր. 11.3)։ Հավատքը թույլ է տալիս հասկանալ, թե ինչպես Աստծո ամենակարողությունը հանգեցրեց ժամանակի առաջացմանը, որն ի հայտ եկավ էակների հետ, որոնց գոյությունը կախված է ժամանակից։*

*Տիեզերքի ժամանակավորությունը դրույթ է, որն ուղղակիորեն բխում է աշխարհի Աստծո կողմից արարված լինելու վարդապետությունից։ Քանի որ աշխարհը ստեղծվել է, ապա դա նշանակում է, որ այն դրանից առաջ չի եղել, հետեւաբար՝ ունի սկիզբ։ «Ի սկզբանէ, Տէ՛ր, երկրի հիմքերը հաստատեցիր, եւ երկինքն էլ գործն է քո ձեռքերի» (Սաղմ. 101.25)։ Ինչպես հավիտենականը չի կարող ստեղծվել, քանի որ միշտ եղել է եւ կա, այնպես էլ ստեղծվածը չի կարող հավերժ լինել։ Արարիչն ու նրա ստեղծագործությունը չեն կարող հավասարապես հավերժական լինել, քանի որ ստեղծող պատճառը պետք է գոյություն ունենա նախքան դրանից բխածը։ Ուստի պիտի ճանաչվի, որ արարածները սկիզբ ունեն, եւ հետեւաբար ժամանակավոր են։ Բայց ի՞նչ է ժամանակը։ Ժամանակը գոյություն չունի նրանում տեղի ունեցող գործընթացներից անկախ։ Շարժումներից ու փոփոխություններից դուրս ժամանակ չկա, ժամանակն ինքնին շարժում է։ Ուստի ճիշտ է ասել, որ Աստված ստեղծել է այն ամենը, ինչ գոյություն ունի ժամանակի հետ միա-*

*սին։ Աստված աշխարհը ստեղծել է դինամիկ եւ փոփոխական, անընդհատ առաջ շարժվող ու զարգացող, եւ ժամանակը դարձավ այս շարժման չափանիշը։ Այն մեզ թույլ է տալիս դիտարկել փոփոխությունններն ու հասկանալ իրադարձությունների պատճառահետեւանքային հարաբերությունները։*

*Այսպիսով, նշվում է, որ ամբողջ նյութը, էներգիան եւ կյանքը, որ մենք դիտարկում ենք տիեզերքում, ուղղակիորեն ստեղծվել են Աստծո կողմից։ Այս ուսմունքը տարբերում է քրիստոնեությունը բազմաթիվ այլ կրոններից ու փիլիսոփայություններից, որոնք ենթադրում են, որ աշխարհը ստեղծվել է նախկինում գոյություն ունեցող նյութից կամ քաոսից։ Քրիստոնյաները հավատում են, որ Աստված չի սահմանափակվել որեւէ արտաքին գործոնով եւ կարող է ազատորեն ստեղծել աշխարհն իր կամքի ու նախագծման համաձայն։ Քրիստոնեական աստվածաբանության համաձայն՝ արարչագործությունն Աստծո զորության, սիրո եւ իմաստության դրսեւորումն էր։ Աստված ստեղծել է ոչ թե անհրաժեշտությունից կամ պարտադրանքից, այլ իր բարությունն ու գեղեցկությունը իր ստեղծագործություններին կիսելու ցանկությամբ։ Ոչնչից արարելու վարդապետությունը նույնպես ընդգծում է Աստծո ամենակարողությունն ու ինքնաբավությունը։ Քանի որ Աստված աշխարհը ստեղծել է ոչնչից, այն պահպանվում է բացառապես Իր զորությամբ եւ բարեգթությամբ։*

*Ամենազոր Աստծո կողմից արարված աշխարհն ի սկզբանե օժտված էր կատարելությամբ։ Այս կատարելությունն արտահայտվում է տիեզերքը կառավարող բոլոր ուժերի եւ օրենքների բացարձակ ներդաշնակության ու նպատակահարմարության մեջ։ Աշխարհը, որպես Աստծո ստեղծագործություն, իր սկզբնական տեսքով լիովին համապատասխանում է այն նպատակին, որի համար ստեղծվել է։ Չնայած մեղքի հետեւանքներին, որոնք խախտեցին*

սկզբնական ներդաշնակությունը, աշխարհի կատարելության հատկանիշը մնում է անփոփոխ:

Աստծո կողմից աշխարհի ստեղծումը մեկանգամյա իրադարձություն չէր, այլ տեղի ունեցավ վեց օրվա ընթացքում, ինչպես նկարագրված է աստվածաշնչյան Ծննդոց գրքում: Ծննդոցում նկարագրված ստեղծագործական գործընթացի սկզբում Աստված արարեց երկինքն ու երկիրը: Հին Կտակարանում այս բառերը հաճախ օգտագործվում են ողջ՝ տեսանելի եւ անտեսանելի աշխարհին վերաբերելու համար: Այնուամենայնիվ, հաշվի առնելով երկրի սկզբնական վիճակի հետագա նկարագրությունը, ակնհայտ է դառնում, որ «երկիր» ասելով այստեղ նկատի ունենք ոչ թե կոնկրետ մոլորակ, այլ ինչ-որ անձեւ նյութ, որը հիմք է հանդիսանում տիեզերքի հետագա ձեւավորման համար: Ինչ վերաբերում է երկնքին, ապա այս համատեքստում այն խորհրդանշական նշանակություն ունի: Սուրբ Գրքում երկինքը հաճախ կապված է վերին, հոգեւոր աշխարհի, Աստծո, հրեշտակների ու սրբերի բնակավայրի հետ: «Օրհնեցե՛ք Տիրոջը երկնքից, օրհնեցե՛ք նրան բարձունքներից: Օրհնեցե՛ք Նրան, Նրա բոլո՛ր հրեշտակներ, օրհնեցե՛ք նրան, Նրա բոլո՛ր զորություններ» (Սաղմ. 148.1-2): «Երկինք» բառի նման իմաստը հանդիպում է Ծննդոց գրքի սկզբում, որը նշանակում է երկնային ոլորտ կամ անտեսանելի հրեշտակային աշխարհ, որը ստեղծվել է մինչեւ տեսանելի տիեզերքի հայտնվելը:

Հարցը, թե երբ են ստեղծվել հրեշտակները, երկար պատմություն ունի եւ աստվածաբանական բանավեճի առարկա է: Աստվածաշնչում այս կապակցությամբ ուղղակի վկայություններ չկան, սակայն որոշ տեքստեր մեզ անուղղակի վկայություններ են տալիս: «Որովհետեւ նրանով ստեղծուեց այն ամենը, ինչ որ երկնքում է եւ ինչ որ՝ երկրի վրայ, ինչ որ երեւում է եւ ինչ որ չի երեւում. թե՛ գահեր, թե՛ տերութիւններ, թէ՛ պետութիւններ, թէ՛ իշխանութիւն-

*ներ, – ամեն ինչ նրանո՛վ եւ նրա՛ համար ստեղծվեց» (Կող. 1.16)։ Ըստ ս. Բարսեղ Կեսարացու. «Հրեշտակների գոյացումը կատարել է արարչական Բանը՝ Հաստիչն ամենայնի, իսկ սրբագործումը նրանց պարգեւել է Սուրբ Հոգին»*[1]*։*

*Փաստորեն, արարչագործության մեջ երկինքն ու երկիրը ներկայացնում են երկու հակադիր սկզբունքներ՝ հոգեւոր եւ նյութական, վերին ու ստորին, անտեսանելի եւ տեսանելի։ Հետագա պատմվածքի ընթացքում այս երկու սկզբունքները բաժանվում ու կազմակերպվում են, ինչը հանգեցնում է կարգավորված տիեզերքի եւ երկրի վրա կյանքի ողջ բազմազանության առաջացմանը։ Երկնքի ու երկրի ստեղծումն այն հիմնարար գործողությունն է, որից սկսվում է տիեզերքի պատմությունը, ինչպես նկարագրված է Ծննդոց գրքում։ Այն նշանավորում է աշխարհի ստեղծման սկիզբը, քաոսի կարգավորումը եւ հիերարխիայի հաստատումը նյութական ու հոգեւոր աշխարհների միջեւ։*

*Ըստ ս. Պողոս առաքյալի՝ հրեշտակները «բոլորն էլ սպասարկող հոգիներ են, որոնք ուղարկվում են ի սպասավորություն նրանց, որ ժառանգելու են փրկությունը» (Եբր. 1.14)։ Ըստ ս. Գրիգոր Նազիանզացու. «Թագավորական փառք ունեցող Երրորդությունից հետո երկրորդական լույսերը, լուսավոր, անտեսանելի Հրեշտակներ են։ Նրանք ազատորեն շրջում են մեծ գահի շուրջը, քանի որ նրանք արագ շարժվող հոգեւոր էակներ են, բոցեր եւ աստվածային ոգիներ, որոնք արագորեն տեղափոխվում են օդով։ Նրանք ջանասիրաբար ծառայում են բարձր հրամաններին»*[2]*։ Դրանք չունեն ֆիզիկական մարմին, ուստի դրանք անտեսանելի են կոչվում։ Այնուամենայնիվ, Աստվածաշնչում հրեշտակները հաճախ*

[1] Симфония по творениям святителя Василия Великого, с. 3.
[2] Симфония по творениям святителя Григория Богослова, с. 6.

*պատկերված են մարդու տեսքով։ Այս զգայական պատկերները չեն արտացոլում հրեշտակների իրական բնույթը։ Հրեշտակային աննյութականությունը հարաբերական է։ Սա նշանակում է, որ հրեշտակները չունեն ֆիզիկական մարմին, բայց դրանք լիովին զերծ չեն նյութականությունից։ Դրանք գոյություն ունեն հոգեւոր աշխարհում, որն ունի նաեւ որոշակի կառուցվածք եւ հատկություններ։ Ի տարբերություն հրեշտակների՝ Աստված բացարձակապես աննյութական է։ Նա գոյություն ունի տիեզերքից ու ժամանակից դուրս եւ չի սահմանափակվում որեւէ ֆիզիկական օրենքով։ Աստծո հետ հրեշտակների համեմատությունը ցույց է տալիս, որ նրանք, ինչպես բոլոր արարածները, ունեն նյութական բաղադրիչ, թեեւ այն ավելի նուրբ ու հոգեւոր բնույթ ունի։ Հրեշտակները կարող են կատարել տարբեր գործառույթներ, Աստծո եւ մարդկանց միջեւ միջնորդ ծառայել՝ փոխանցելով աստվածային հրահանգները։ Նրանք օգնում են մարդկանց իրենց հոգեւոր զարգացման մեջ ու պաշտպանում նրանց չարից։ Նրանք պատասխանատու են նյութական աշխարհի տարբեր տարրերի, մոլորակների եւ բնական երեւույթների համար։ Ըստ ս. Գրիգոր Նազիանզացու. «Այս ոգիներն ընդունեցին յուրաքանչյուրը տիեզերքի մի որեւէ մասը, կամ էլ կարգված են՝ աշխարհում մի որեւէ բանի սպասարկելու, ինչպես դա հայտնի է եղել Նրան, Ով ամեն ինչ կարգավորել եւ բաշխել է»[1]։*

*Ըստ Դիոնիսիոս Արիսպագացու վարդապետության՝ Սուրբ Գիրքը նկարագրում է երկնային էությունների ինը դասեր, որոնք բաժանված են երեք եռյակի։ Առաջին դասը բաղկացած է վեցթեւանի Սերովբեներից, բազմաակն Քերովբեներից ու սրբազնագույն Աթոռներից։ Այս արարածները միշտ Աստծո կողքին են եւ Նրա հետ մերձավոր ու անմիջական շփման արտոնությունն ունեն։ Երկ-*

[1] Там же, с. 5.

*րորդ դասը բաղկացած է Տերություններից, Զորություններից ու Իշխանություններից։ Այս էություններն ունեն ուժ եւ վերահսկողություն երկնային ու երկրային տարբեր գործընթացների վրա։ Նրանք կատարում են Աստծո կամքը եւ ծառայում որպես միջնորդ Աստծո ու երկնային այլ արարածների միջեւ։ Երրորդ եւ վերջին դասը ներառում է Պետություններին, Հրեշտակապետներին ու Հրեշտակներին։ Պետությունները էներգիայի եւ ստեղծագործական ուժի աղբյուր են, որը ներթափանցում է ամբողջ տիեզերքը։ Հրեշտակապետները կատարում են կարեւոր առաջադրանքներ, ինչպիսիք են լուրեր փոխանցելն ու մարդկանց պաշտպանելը։ Հրեշտակները, իրենց հերթին, ծառայում են որպես սուրհանդակներ եւ օգնականներ, որոնք կատարում են տարբեր առաքելություններ ու օգնում մարդկանց Երկրի վրա։ Երկնային արարածների այս դասերը նվիրապետություն են, որտեղ յուրաքանչյուր դաս ունի իր դերը եւ գործառույթը աստվածային աշխարհակարգի մեջ։ Նրանք ծառայում են որպես հոգեւոր օգնականներ ու առաջնորդներ Աստծո ծրագրի իրականացման գործում։ Երկնային ոլորտում նրանց ներկայությունը եւ գործունեությունն ազդում են երկրի մարդկանց կյանքի ու ճակատագրի վրա։ Այս վարդապետությունն ընդլայնում է մեր գիտելիքը աստվածային կարգում հոգեւոր էակների դերի մասին։ Դա մեզ թույլ է տալիս տեսնել, թե ինչպես են այդ արարածները համագործակցում Աստծո հետ եւ շփվում միմյանց հետ՝ տիեզերքում ավելի բարձր նպատակների ու ներդաշնակության հասնելու համար։*

*Բացի հրեշտակներից Սուրբ Գրքում խոսվում է նաեւ դեւերի՝ չար ոգիների գոյության մասին։ Աստվածաշնչում չար ոգիներ անվան տակ հասկացվում են անձնական, բանական ու անմարմին էակներ, որոնք իրենց կամքով հեռացել են Աստծուց եւ դարձել չար։ Նրանք ստեղծել են Աստծուն ու բարությանը թշնամաբար*

*տրամադրված հատուկ թագավորություն, բայց դեռեւս կախված են Նրանից։ Նրանք բոլորը ստեղծվել են իրենց բնությամբ բարի, սակայն, որպես ազատ էակներ, նրանք չունեին բարոյական կատարելություն, թեեւ ունեին դրա կարողությունը։ Այսպիսով, ե՛ւ բարի, ե՛ւ չար ոգիները բնության կողմից ստեղծվել են բարի լինելու համար։ Նրանք դարձան չար՝ առանց որեւէ հարկադրանքի չարաշահելով իրենց ազատությունը։ Այնուամենայնիվ, կարեւոր է նշել, որ չար ոգիները ամենակարող չեն ու չեն կարող դիմակայել Աստծուն։ Նրանք կարող են միայն փորձել ազդել մարդկանց վրա եւ գայթակղել նրանց։ Սուրբ Գրքում նկարագրվում են դեպքեր, երբ չար ոգիները մտել են մարդկանց մեջ ու վնասել նրանց։ Հիսուս Քրիստոսը, լինելով Աստծո Որդին, զորություն ուներ դեւերին դուրս հանելու եւ մարդկանց ազատելու նրանց ազդեցությունից։ Հետաքրքիր է, որ չար ոգիները կարող են ընդունել տարբեր կերպարանքներ ու խաբել մարդկանց։ Նրանք կարող են ներկայանալ որպես լույսի հրեշտակներ եւ կեղծ ուսմունքներ կամ հերձվածներ սերմանել։ Նրանց նպատակն է մարդկանց շեղել ճշմարտությունից ու նրանց տանել դեպի մեղքի եւ կործանման ճանապարհը։ Այնուհանդերձ, չնայած նրանց ազդեցությանը, հավատքն ու Աստծուն նվիրվածությունը օգնում են մարդկանց դիմակայել չար ոգիներին։ Աղոթքը, սրբագործումը եւ հոգեւոր պայքարը մեզ հնարավորություն են տալիս մնալ Աստծո հովանու ներքո ու մերժել չարի գայթակղությունները։ Այսպիսով, չար ոգիները իրական սպառնալիք են, բայց նրանք անպարտելի չեն։ Հավատքը, իմաստությունը եւ հոգեւոր ուժն օգնում են մեզ հաղթահարել դրանց ազդեցությունն ու ապրել Աստծո պատվիրաններին համապատասխան։ Աստված միշտ պատրաստ է օգնել մեզ չարի դեմ մեր պայքարում, եւ մենք կարող ենք ապավինել Նրա ողորմությանն ու զորությանը՝ չար ոգիների դեմ մեր մղած պայքարում։*

*Անկյալ հրեշտակների, մասնավորապես սատանայի գործած մեղքը նրանց գոյության շրջադարձային կետն էր եւ հանգեցրեց նրանց դատապարտմանը: Հպարտությունը՝ ամենայն չարիքի արմատը, դարձավ նրանց կործանման որոշիչ գործոնը: Սատանայի հպարտությունը դրսեւորվում էր Աստվածային դիրքի բարձունքներին հասնելու եւ միայն Աստծուն պատկանող պատիվներ ու փառք ստանալու ցանկությամբ: Այս մեղսական միտքը հանգեցրեց բացահայտ անհնազանդության, ապստամբության եւ Աստծուն չենթարկվելուն: Հպարտության հետեւանքներն աղետալի էին անկյալ հրեշտակների համար: Նրանք վտարվեցին երկնքից, մերկացվեցին իրենց նախկին փառքից ու հայտնի դարձան որպես դեւեր կամ չարքեր: Նրանց էությունն այլասերվեց, եւ նրանք դարձան չարի ու կործանման կրողներ: Հպարտության մեղքն անկյալ հրեշտակների մոտ առաջացրեց մի շարք այլ մեղսավոր դրսեւորումներ: Նրանք նախանձ եւ չարամիտ դարձան Աստծո պատկերով ու նմանությամբ ստեղծված մարդկանց նկատմամբ: Ատելությունը եւ մարդկության նկատմամբ իշխանության ծարավը բնակվել էին նրանց սրտերում: Բացի այդ՝ անկյալ հրեշտակները դիմում են խաբեության ու ստերի՝ փորձելով մարդկանց տանել դեպի մեղքի եւ կործանման ճանապարհը: Նրանք գայթակղում են մարդկանց, սերմանում շփոթություն ու տարաձայնություններ՝ ձգտելով քանդել նրանց հարաբերություններն Աստծո եւ միմյանց հետ: Հավատքն առ Հիսուս Քրիստոսը եւ ապաշխարությունը բացում են Աստծո հետ հաշտության ու հավերժական դատապարտությունից փրկության ճանապարհը: «Եւ ով մեղք է գործում, այդ՝ Սատանայից է, քանի որ Սատանան մեղանչող է ի սկզբանե: Աստծու Որդին հենց նրա համար հայտնվեց, որ քանդի Սատանայի գործերը» (Ա Հովհ. 3.8):*

*Արարչության վեց «օրերի» ընթացքում Աստված ստեղծեց տարբեր տեսակի կենդանի էակներ ու բնական երեւույթներ: Ա-*

ռաջին օրն Աստված ստեղծեց լույսը եւ բաժանեց այն խավարից։ Երկրորդ օրը Նա բաժանեց երկնային ու երկրային ջրերը։ Երրորդ օրն Աստված ստեղծեց չոր հողը եւ բույսերը։ Չորրորդ օրը Նա ստեղծեց լուսատուները՝ արեւը, լուսինն ու աստղերը։ Հինգերորդ օրն Աստված ստեղծեց ծովային եւ ցամաքային կենդանիներին։ Վեցերորդ օրն Աստված ստեղծեց մարդուն իր պատկերով ու նմանությամբ։ Այսպիսով, Մովսեսի Հայտնությունը աշխարհի ծագման մասին նկարագրում է իրադարձությունների հաջորդականությունը, ըստ որի՝ աշխարհը ստեղծվել է Աստծո կողմից։ Այս ուսմունքը կարեւոր է հավատացյալների համար, ովքեր աշխարհի արարումը տեսնում են որպես աստվածային կամքի եւ իմաստության դրսեւորում։ Աստված ոչ միայն ստեղծել է տեսանելի աշխարհը, այլեւ հոգ է տանում մարդու հոգեւոր ճակատագրի ու Աստծո հետ աղոթքի միջոցով հաղորդակցվելու նրա կարողության մասին։ Այսպիսով, աշխարհի ծագման մասին Մովսեսի հայտնությունը մեզ ավելի խոր պատկերացում է տալիս, թե ինչպես է ստեղծվել աշխարհը եւ ինչպես են նրա բոլոր մասերը կապված միմյանց հետ։ Այս ուսմունքը հիշեցնում է մեզ Արարչի մեծության ու իմաստության, ինչպես նաեւ բնության եւ բոլոր կենդանի արարածների մասին հոգ տանելու մեր պատասխանատվության մասին։ Բնությունն իր գեղեցկությամբ ու կատարելությամբ ծառայում է որպես Աստծո փառքի եւ իմաստության հայելի ու կոչված է՝ արտացոլելու այն։

## *Գ Լ Ո Ւ Խ   Դ*

# Մարդ

*Երկրի վրա մարդկության հայտնվելը մնում է այն մեծ առեղծվածներից մեկը, որը հնարավոր չէ ամբողջությամբ լուծել մարդկային բանականության օգնությամբ: Մենք կարող ենք միայն ձգտել հասկանալ մեր սկզբնական ծագումը: Ըստ աստվածաշնչյան պատմության՝ մարդու ստեղծումը Աստծո ստեղծագործության գագաթնակետն էր: Մարդը ստեղծվել է արարչության վեցերորդ օրը՝ Երկրի վրա ողջ կյանքի ստեղծումից հետո նրա բնակության համար: «Աստված ասաց. «Մարդ ստեղծենք մեր կերպարանքով ու նմանությամբ, նա թող իշխի ծովի ձկների, երկնքի թռչունների, ողջ երկրի անասունների եւ երկրի վրա սողացող բոլոր սողունների վրա»: Եւ Աստված մարդուն ստեղծեց իր պատկերով, Աստծու պատկերով ստեղծեց նրան, արու եւ էգ ստեղծեց նրանց» (Ծննդ. 1.26-27): Սակայն մարդու ստեղծման գործընթացը տարբերվում է մնացած բոլոր արարածների արարումից: Աստված, որը հայտնի է որպես Էլոհիմ՝ բառացի աստվածներ, ասաց. «Եկեք մարդ ստեղծենք»: Սա Սուրբ Երրորդության՝ Հոր, Որդու եւ Սուրբ Հոգու համատեղ որոշումն էր: Աստծո կողմից ստեղծված նախորդ արարածները, թեեւ արտացոլում էին Արարչի անսահման կատարելությունը, սակայն նրանցից ոչ մեկը չուներ այնպիսի հատկանիշներ, որոնք նրանց նմանեցնում էին Աստծուն: Մարդկային բնության մեջ, ըստ Սուրբ Գրքի, կա Աստծո պատկերն ու նմանությունը: Այսպիսով, մարդը որոշակի նմանություն ունի Արարչի հետ: Կարեւոր է նշել, որ մարդու ստեղծումը Աստծո զորության պարզ գործողություն չէր, ինչպես դա այլ արարածների դեպքում էր: «Տեր Աստված մարդուն ստեղծեց երկրի հողից, նրա դեմքին կենդանութեան շունչ փչեց, եւ*

*մարդը եղավ կենդանի էակ» (Ծննդ. 2.7)։ Ըստ ս. Գրիգոր Լուսավորչի. «Իր ձեռքով ստեղծելով մարդուն՝ նրա մեջ կենդանություն դրեց, փչելով իր բերնով իմաստուն մտավորության, բանականության կենդանի շունչը»*[1]*։*

*Այսպիսով, մարդու ստեղծման պատմությունը եզակի է եւ տարբերվում է մնացած բոլոր արարածներից։ Մարդը, ինչպես ոչ մի այլ արարած, ունի աստվածանմանություն, որն արտացոլում է Աստծո էությունը։ Հետո Աստվածաշունչն ասում է, որ Աստված ստեղծել է կնոջը Ադամի կողոսկրից։ Կինը ստեղծվել է ամուսնու օգնականը եւ ուղեկիցը լինելու համար։ Սա ամուսնության եւ ընտանիքի վերաբերյալ Աստվածաշնչի ուսմունքի հիմնարար դրույթներից մեկն է։*

*Եկեղեցին դավանում է ճշմարտությունը բոլոր մարդկանց ծագման մասին մեկ սկզբնական զույգից, որ Ադամն ու Եւան էին։ Եկեղեցու այս ուսմունքը հիմնված է Հայտնության վրա, որը նկարագրում է մարդկության ծագումը։ Եկեղեցին նաեւ ուսուցանում է, որ Ադամի ու Եւայի սկզբնական մեղքը հանգեցրեց ողջ մարդկային ցեղի անկմանը եւ քավության անհրաժեշտությանը։ Եկեղեցու ուսմունքը սկզբնական մեղքի մասին ասում է, որ յուրաքանչյուր մարդ ծնվում է բնածին մեղքով, որը ժառանգված է Ադամից ու Եւայից։ Մեղքը համընդհանուր է եւ ազդում է յուրաքանչյուր մարդու վրա, որը դրա հետեւանքով ենթակա է մահվան։*

*Քրիստոնեությունը ձեւավորել է մի քանի հիմնական գաղափարներ մարդու էության ու նրա գոյության նպատակի մասին։ Պողոս առաքյալն իր թղթերում առանձնացնում է երեք հիմնական բաղադրիչ՝ մարմին, հոգի եւ ոգի։ «Եւ խաղաղության Աստվածն*

---

[1] Ագաթանգեղոս, *Հայոց պատմություն, Աշխարհաբար թարգմանությունը եւ ծանոթագրությունները*՝ Ա. Տեր-Ղեւոնդյանի, *Եր., 1983, էջ 153։*

*ինքը թող սրբացնի ձեզ ամբողջապես եւ ձեր ամբողջ ոգին, հոգին, եւ մարմինը թող անարատ պահվի մինչեւ մեր Տեր Հիսուս Քրիստոսի գալուստը» (Ա Թես. 5.23)։ Մարմինը մարդու ֆիզիկական թաղանթն է, նրա նյութական ու անցողիկ մասը։ Հոգին մարդու աննյութական, անմահ մասն է։ «Նրա աճյունը, ինչպես որ հող էր, հող պիտի դառնա, եւ հոգին, որ Աստված էր տվել, պիտի վերստին նրա մոտ գնա» (Ժող. 12.7)։ Ըստ ս. Հովհան Ոսկեբերանի. «Մարդը երկու աշխարհների արարած է. վերեւում գտնվողը կապված է նրա հոգու հետ, իսկ ներքեւը կապված է մարմնի հետ։ Նա կապում է այս երկու աշխարհներն իր հետ, կամուրջ է ծառայում նրանց միջեւ՝ ունենալով մեկ ընդհանուր Արարիչ նրանց հետ, ով ստեղծել է ե՛ւ երկնայինը, ե՛ւ երկրայինը. ինչպես կույսը, նրա հոգին պարունակվում է իր մարմնում»[1]։*

*Հնարավոր է հասկանալ հոգու գաղտնիքներն ու տեսնել այն իր բոլոր դրսեւորումներով միայն այն դեպքում, եթե առանձին դիտարկենք հոգու յուրաքանչյուր կողմը։ Հին փիլիսոփաները որոշել են հոգու բոլոր գործողությունները բաժանել երեք կատեգորիաների՝ մտքեր, ցանկություններ եւ զգացմունքներ։ Մարդու հոգու առաջին ու ամենակարեւոր կողմը մտածող կողմն է։ Այն թույլ է տալիս հասկանալ մեզ շրջապատող աշխարհը եւ ինքներս մեզ, վերլուծել ու սինթեզել տեղեկանին։ Միտքը մեր գիտակցության եւ անհատականության հիմքն է։ Հոգու երկրորդ կողմը ցանկացող կողմն է։ Այն մղում է մեզ՝ գործելու, տալիս է նպատակներ ու շարժառիթներ։ Ցանկությունը մեր կյանքի շարժիչ ուժն է։ Հոգու երրորդ կողմը զգայականն է։ Այն թույլ է տալիս ընկալել մեզ շրջապատող աշխարհը մեր մարմնական զգայությունների միջոցով։ Զգացողությունն այն է, ինչը մեզ հնարավորություն է տալիս զգալ*

[1] Симфония по творениям святителя Иоанна Златоуста, Москва, 2008, с. 562.

զգացմունքների ամբողջ բազմազանությունը՝ սիրուց եւ ուրախությունից մինչեւ զայրույթ ու հուսահատություն: Հոգու բոլոր երեք կողմերը սերտորեն փոխկապակցված են եւ անընդհատ փոխազդում են միմյանց հետ: Մտքերն ազդում են ցանկությունների վրա, իսկ ցանկությունները՝ զգացմունքների վրա: Զգացմունքներն իրենց հերթին ազդում են մտքերի ու ցանկությունների վրա: Հոգու երեք կողմերը հասկանալը մարդու էությունը հասկանալու բանալին է: Միայն ուսումնասիրելով եւ ընդունելով մեր հոգու բոլոր կողմերը, մենք կարող ենք ներդաշնակության հասնել ինքներս մեզ ու շրջապատող աշխարհի հետ: Բացի հոգու երեք ավանդական կողմերից՝ ժամանակակից հոգեբանները նույնացնում են եւս մեկը՝ ինտուիտիվը: Ինտուիցիան մարդու կարողությունն է՝ գիտելիք ստանալու առանց բանականության եւ տրամաբանության մասնակցության: Այն մեզ թույլ է տալիս ճիշտ որոշումներ կայացնել անգամ այն դեպքում, երբ մենք չունենք բավարար ապացույցներ ու փաստեր: Ինտուիցիան կամուրջ է մեր գիտակցական եւ գերգիտակցական մտքի միջեւ, որը հնարավորություն է տալիս մուտք գործել գերզգայական, զգայությունների համար անմատչելի ոլորտներ:

Ինտուիտիվ իմացության օրգանը հոգեւոր սիրտն է, որը կենտրոնական դեր է խաղում մարդու հոգեւոր կյանքում: «Սիրտ» բառն Աստվածաշնչում հիշատակվում է ավելի քան 850 անգամ՝ ընդգծելով դրա յուրահատուկ նշանակությունը: Բացի արյունը մղելու իր բնախոսական գործառույթից՝ Սուրբ Գիրքը սրտին վերագրում է ճանաչողական ու հոգեւոր կարողությունների լայն շրջանակ: Սիրտն ընկալում եւ արտահայտում է այնպիսի զգացմունքներ, ինչպիսիք են սերը, ուրախությունը, տխրությունն ու զայրույթը: Սուրբ Գիրքն ասում է, որ մարդն «իմաստուն է մտքով» (Առակ. 19.8) եւ «սրտով՝ իմաստուն» (Ա Թագ. 9.4): Սիրտն ունի ճշմարտությունն ընկալելու եւ ինտուիտիվ որոշումներ կայացնելու ունակություն: Ա-

ռակաց գրքի հեղինակը գրում է. «Իմաստունի սիրտը գիտություն է ձեռք բերում» (Առակ. 18.15)։ Աստվածաշունչը ցույց է տալիս, որ սիրտն Աստծո հետ հանդիպման վայրն է։ «Ստեղծի՛ր իմ մեջ մաքուր սիրտ, ո՜վ Աստված, եւ նորոգի՛ր իմ մեջ ուղիղ հոգի» (Սաղմ. 51.12)։ Սիրտը նաեւ բարոյական դատողության տեղն է։ Ավետարանն ասում է, որ մենք պետք է սիրենք Աստծուն «մեր ամբողջ սրտով» (Մատթ. 22.37)՝ ակնարկելով, որ դա կարեկցանքի, ողորմության ու արդարության աղբյուրն է։ Հոգեւոր սիրտը չի սահմանափակվում ֆիզիկական մարմնով։ Այն գոյություն ունի աննյութական, գերզգայական ոլորտում եւ կարող է շարունակել գործել նույնիսկ մարմնի մահից հետո։ Սեփական հոգեւոր սիրտը զարգացնելով՝ մարդը կարող է խորացնել իր հարաբերությունները Աստծո հետ, ապրել ավելի իմաստալից կյանքով ու դառնալ սիրո եւ իմաստության աղբյուր ուրիշների համար։

Ոգին մարդկային էության բարձրագույն մասն է, որն Աստված տալիս է մարդուն իր ստեղծման ժամանակ։ Հոգին իր հերթին միջանկյալ տարր է, որը կապում է մարդու ոգին ու ֆիզիկական մարմինը։ Հոգու եւ ոգու այս գաղափարը ենթադրում է, որ մարդու հոգին ունի ինչպես կենդանական, այնպես էլ ավելի բարձր մարդկային հատկություններ։ Սակայն Աստծո ներշնչած ոգու օգնությամբ մարդկային հոգին ձեռք է բերում առանձնահատուկ նշանակություն ու հնարավորություն՝ հոգեւոր զարգացման եւ կատարելագործման համար։ Ոգին, նպաստելով հոգու զարգացմանը, օգնում է մարդուն գիտակցել իր իսկական նպատակն ու ձգտել հոգեւոր կատարելության։ Ոգին այն ուժն է, որը հոգին վեր է բարձրացնում զուտ կենդանական գոյությունից եւ թույլ է տալիս մարդուն դրսեւորել ավելի բարձր ու ազնիվ հատկություններ, ինչպիսիք են՝ 1) Աստծո երկյուղը. մարդիկ, որպես բանական էակներ, բնական ակնածանք ունեն Գերագույն էակի նկատմամբ եւ հասկանում են

*նրան ենթարկվելու անհրաժեշտությունը։ Այս զգացումը, որը կոչվում է Աստծո երկյուղ, դրսեւորվում է այդ էակի հանդեպ բնազդային ակնածանքով ու առաքինության ցանկությամբ։ Նման ակնածանքը դրդում է մարդուն հարգել եւ երկրպագել իր Արարչին, ինչպես նաեւ ձգտել արդար կյանքի՝ երկյուղելով Նրա բարկությունից ու դժգոհությունից։ 2) Խիղճ. գիտակցելով Աստծո առջեւ իր պատասխանատվությունը՝ մարդն օժտված է խղճով՝ ներքին բարոյական զգացումով, որն օգնում է նրան տարբերակել բարին եւ չարը, ճիշտն ու սխալը։ Խիղճը դրդում է մարդուն բարի գործեր կատարել եւ զերծ է պահում մեղսական արարքներից։ Այն հանդես է գալիս որպես ներքին դատավոր, որը գնահատում է մարդու վարքագիծն ու նրան տալիս է մեղքի կամ բավարարվածության զգացում՝ կախված նրանից, թե ինչպես է նա գործում։ 3) Ծարավ Աստծո. մարդու ներքին հոգեւոր էությունը՝ ստեղծված Աստծո պատկերով ու նմանությամբ, տենչում է Աստծո հետ հաղորդակցվելու եւ գոյության բարձրագույն իմաստը գտնելու։ Այս ծարավն արտահայտվում է ճշմարտության, բարության ու գեղեցկության որոնումներում, հոգեւոր աճի եւ պայծառացման ցանկության մեջ։ Այն արտահայտվում է կեցության գաղտնիքները հասկանալու, իր նպատակը պարզելու եւ ներքին խաղաղություն ու անդորր գտնելու մարդու ձգտմամբ։ Այս ծարավը խորը, բնազդային մղում է, որը դրդում է մարդուն փնտրել Աստծուն եւ անձնական հարաբերություններ հաստատել Նրա հետ՝ կյանքում իսկական երջանկություն ու բավարարվածություն գտնելու համար։ Մարդկային ոգու այս երեք դրսեւորումները սերտորեն փոխկապակցված են եւ ազդում են միմյանց վրա՝ խրախուսելով մարդու կատարելագործումն ու հոգեւոր աճը*[1]*։*

[1] *Տե՛ս Святитель Феофан Затворник*, Что такое духовная жизнь и как на нее настроиться? Москва, 2014, с. 44-46.

*Աստվածաշունչն ասում է, որ մարդը ստեղծված է Աստծո պատկերով եւ նմանությամբ: Բայց ի՞նչ է սա նշանակում: Որո՞նք են այս նմանությունները: Եկեղեցական վարդապետությունը այս հարցին հստակ պատասխան չի տալիս: Եկեղեցու հայրերն ու վարդապետները դա տարբեր կերպ են մեկնաբանել: Նրանք դա տեսնում էին բանականության՝ մտածելու, աշխարհն ու Աստծուն ճանաչելու մարդու կարողության մեջ. ազատ կամքի՝ բարու եւ չարի միջեւ ինքնուրույն ընտրություն կատարելու ունակության մեջ. անմահության՝ մահից հետո հոգու հավերժական կյանքի մեջ: Եթե համադրենք այս գաղափարները, ապա ավելի ամբողջական պատկերացում կստանանք, թե ինչ է Աստծո պատկերը մարդու մեջ: Աստված Հոգի է, հետեւաբար Աստծո պատկերը կարելի է փնտրել միայն մարդու հոգում, եւ ոչ թե Նրա մարմնում:*

*Ազատ կամքը թույլ է տալիս մարդուն Աստծո նման ընտրություն կատարել ու կերտել իր ճակատագիրը: Մարդկային միտքն ընդունակ է ոչ միայն իմանալու երկրային բաները, այլեւ ձգտելու Աստվածիմացության: Մարդն Աստծո պատկերն ընդունում է ի ծնե, բայց ինքը պետք է նմանություն ձեռք բերի: Աստծո նմանությունը ձեռք է բերվում առաքինի կյանքի, սիրո, բարության եւ ճշմարտության շնորհիվ: Մարդը, նմանվելով Աստծուն, դառնում է Նրա սիրո, ողորմության, արդարության ու այլ առաքինությունների կրողը: Աստծո կերպարը մարդու մեջ ստատիկ չէ, այն կարող է զարգանալ կամ նսեմանալ: Մեղքը հոգու մեջ մթագնում է Աստծո պատկերը՝ օտարելով մարդուն Աստծուց: Ապաշխարությունը եւ հոգեւոր կյանքն օգնում են մարդուն վերականգնել Աստծո պատկերը: Իր աստվածանմանության գիտակցումը մարդուն մղում է հոգեւոր զարգացման: Աստծո պատկերը յուրաքանչյուր մարդու մարդկային արժանապատվության ու արժեքի հիմքն է:*

Մինչ մարդու ստեղծումը, աշխարհը մեղքից զուրկ եւ ներդաշնակ էր ու ապրում էր արդարության, անմեղության, սրբության եւ երանության մեջ: Սակայն խախտելով Աստծո պատվիրանը՝ նրանք զրկվեցին Աստծուց, լույսից, կյանքից ու ընկան մեղքի, մթության եւ մահվան մեջ: Առաջին գայթակղությունը տեղի է ունեցել Եդեմի պարտեզում, որտեղ օձը խորամանկորեն համոզեց Եւային, որպեսզի նա ուտի բարու եւ չարի իմացության ծառի արգելված պտուղը: Եւան ենթարկվեց գայթակղությանը, կերավ այդ պտուղն ու համոզեց Ադամին միանալ իրեն: Անհնազանդության այս գործողությունը կործանարար հետեւանքներ ունեցավ, քանի որ հանգեցրեց մարդկության անկմանը եւ Ադամի ու Եւայի վտարմանը դրախտից: Օձը, որի մասին ասվում է աստվածաշնչյան պատմության մեջ, պարզապես կենդանի չէր, այլ չարի եւ գայթակղության մարմնացում: Նա անկյալ հրեշտակի՝ սատանայի գործիք էր, որը թաքնվում էր նրա մեջ եւ խոսում նրա միջոցով: Այս իրադարձությունը ընդմիշտ փոխեց Աստծո եւ մարդկության միջեւ փոխհարաբերությունները, ինչպես նաեւ հանգեցրեց աշխարհում մեղքի ու չարի տարածմանը: Այդ ժամանակից ի վեր մեղքը դարձել է մարդու բնության անբաժանելի մասը, եւ բոլոր մարդիկ ծնվում են մեղսական բնություն ունենալով: Սա նշանակում է, որ մենք հակված ենք չարին եւ մեղք ենք գործում, նույնիսկ առանց դա հատուկ ցանկանալու:

Մեր նախամոր ու նախահոր մեղսագործությունը, ինչպես այն նկարագրված է Աստվածաշնչում, հետեւանք էր ոչ միայն սատանայի կողմից գայթակղության, այլեւ նրանց ազատ կամքի: Ադամն ու Եւան Աստծո կողմից օժտվել են ազատ կամքով, ինչը նշանակում է, որ նրանք հնարավորություն ունեին՝ ընտրություն կատարելու Աստծուն հնազանդության եւ նրա պատվիրանների խախտման միջեւ: Չնայած սատանան գայթակղեց Եւային, նա չի ստիպել նրան ուտել արգելված պտուղը: Եւան ինքը որոշեց ենթարկվել

*գայթակղությանը։ Նույն կերպ՝ Ադամը կարող էր հրաժարվել պտուղից, երբ Եւան այն տվեց իրեն, բայց նա նույնպես ազատ ընտրություն կատարեց ու որոշեց չհնազանդվել Աստծո պատվիրանին։ Մինչ սատանան գայթակղում եւ խաբում էր Եւային, նա Ադամի հետ թուլություն ցուցաբերեց՝ ենթարկվելով գայթակղությանն ու խախտելով Աստծո պատվիրանը։ Աստծո իմաստությանը վստահելու փոխարեն նրանք վստահեցին սատանային եւ նրա կեղծ խոստումներին։ Այս պատմությունը նախազգուշացնում է մեզ համար՝ հիշեցնելով Աստծուն հնազանդվելու կարեւորությունն ու գայթակղությունների առջեւ զգոն լինելու անհրաժեշտությունը։*

*Դրախտում առաջին մարդկանց՝ Ադամի ու Եւայի գործած մեղքը ծանր հետեւանքներ ունեցավ մարդկության համար։ Ըստ աստվածաշնչյան պատմության՝ երբ Ադամն ու Եւան խախտեցին Աստծո պատվիրանը եւ կերան արգելված ծառի պտուղը, նրանք ստացան բարու եւ չարի գիտություն, բայց նաեւ ընկան մեղքի իշխանության տակ ու ենթարկվեցին ֆիզիկական եւ հոգեւոր մահվան։ Ըստ ս. Բարսեղ Կեսարացու. «Մեղքի արմատը մահն է»[1]։ Մեղքի աղետալի հետեւանքները կարելի է տեսնել բազմաթիվ մակարդակներում։ Նախ՝ առաջին մարդիկ վտարվեցին դրախտից եւ զրկվեցին Աստծո հետ անմիջական շփումից։ Նրանք ենթարկվեցին դժվարությունների ու տառապանքների, ինչպիսիք են հիվանդությունը, ծերությունը եւ մահը։ Երկրորդ՝ մեղքը փոխանցվեց նրանց սերունդներին, ու բոլոր մարդիկ ծնվում են ապականված բնությամբ՝ հակված լինելով մեղքի։ Մեղքը նաեւ հանգեցրեց մարդկանց միջեւ հարաբերությունների խաթարմանը։ Ադամն ու Եւան սկսեցին մեղադրել միմյանց իրենց անկման համար, եւ նրանց որդիներից մեկը՝ Կայենը, սպանեց մյուսին՝ Աբելին։ Մեղքն առաջաց-*

---

[1] Симфония по творениям святителя Василия Великого, с. 98.

նում է բազմաթիվ բարոյական ու էթիկական խնդիրներ, ինչպիսիք են եսասիրությունը, նախանձը, ատելությունը եւ բռնությունը։ Մեղքը մարդու ոտնձգությունն է բնության ու բարոյական աշխարհում Աստծո կողմից հաստատված կարգի նկատմամբ։ Այն նման է թույնի, որը քայքայում եւ ոչնչացնում է։ Մեղքի որոշ հետեւանքներ բնական են. նրանք բխում են հենց Աստծո կարգի խախտումից։ Օրինակ՝ հիվանդությունն ու մահը առողջության օրենքների խախտման բնական հետեւանքներն են։ Մեղքի մյուս հետեւանքները պատիժներն են, որոնք Աստծո կողմից տրված են մեղքի համար։ Այս պատիժները կոչված են՝ կանգնեցնելու չարը, ուղղելու եւ փրկելու մարդկանց։ Աստված արդար է ու սուրբ, եւ Նա չի կարող թույլ տալ, որ մեղքն անպատիժ մնա։ Ուստի Նա պատիժներ է ուղարկում մեղավորներին, որպեսզի հեռացնի նրանց չարից եւ առաջնորդի ապաշխարության։ Միեւնույն ժամանակ, Աստված ողորմած է ու սիրող, եւ Նա ցանկանում է բոլոր մարդկանց փրկությունը։ Ուստի մեղավորներին Նա չի պատժում հավիտենական դատապարտությամբ, այլ հնարավորություն է տալիս ապաշխարել եւ դեպի Իրեն դիմել։ Աստված պատիժներ է ուղարկում ոչ միայն անհատներին, այլեւ ամբողջ ազգերի։ Օրինակ՝ Աստվածաշունչը նկարագրում է, թե ինչպես Նա պատժեց Իսրայելի ժողովրդին իրենց մեղքերի համար՝ ուղարկելով նրանց պատերազմներ, սով ու հիվանդություններ։ Աստված պատժում է ազգերին ոչ միայն իրենց մեղքերի համար, այլ նաեւ՝ զգուշացնելու այլ ազգերին նմանատիպ մեղքեր գործելուց։

Առաջին մարդկանց անկումը, թեեւ խորն էր, բայց վերջնականապես չկործանեց Աստծո պատկերը նրանց մեջ։ Աստված չմերժեց անկյալ մարդկանց տված Իր նախախնամական սիրո պարգեւները, քանի որ նրանք ընդունակ էին ընդունել դրանք։ Հավերժությունից, անսահման սիրով եւ ըստ Ամենասուրբ Երրորդության կանխորոշ-

ված ծրագրի, Աստված որոշեց փրկել մարդուն Իր միածին Որդու եւ կենարար Սուրբ Հոգու միջոցով։ Փրկության խոստումը մարդկանց տրվեց իրենց նախնիների անկումից անմիջապես հետո, ու դարերի ընթացքում Աստված նրանց պատրաստեց՝ ընդունելու Փրկչին եւ ազատորեն ընդունելու քավության պտուղները։ Երբ ժամանակը եկավ, Աստծո միածին Որդին, ըստ Հոր կամքի, իջավ երկիր՝ փրկելու մարդկությանը հավիտենական մահից։ Նա ընդունեց մարդկային բնությունն Իր Անձի միասնության մեջ՝ մարմնավորվելով Սուրբ Հոգուց ու Մարիամ Աստվածածնից։ Դառնալով մարդ՝ Հիսուս Քրիստոսը կատարեց քավության գործը՝ բոլոր մարդկանց հնարավորություն ընձեռելով՝ դառնալու Աստծո զավակներ եւ Նրա թագավորության ժառանգորդներ։ Սուրբ Հոգին, որն ուղարկվել է Հայր Աստծո կողմից, բնակվում է հավատացյալների հոգիներում՝ նրանց տալով Աստծո Որդու կողմից իրականացված քավության փրկարար պտուղները։ Սուրբ Հոգու շնորհի օգնությամբ մարդիկ կարող են յուրացնել այդ պտուղները եւ հասնել փրկության։

## *Գ Լ Ո Ւ Խ   Ե*

## **Քրիստոս**

*Հիսուս Քրիստոսի Անձը առանձնահատուկ, բացառիկ տեղ է զբաղեցնում մարդկության պատմության մեջ: Նրա մարմնավորումը որպես Աստծո Որդի երկրի վրա և՛ անհերքելի պատմական փաստ է, և՛ անհասկանալի առեղծված, որը վեր է մարդկային մտքի կարողություններից: Պողոս Առաքյալը, սուզվելով Քրիստոսի էության անճառելի խորքերը, ակնածալից երկյուղածությամբ բացականչեց. «Եւ հայտնապես մեծ է աստվածապաշտության խորհուրդը, որ հայտնվեց մարմնով» (Ա Տիմ. 3.16): Աստվածային եւ մարդկային բնությունը հանդիպեցին ու միավորվեցին մեկ էակի մեջ՝ ծնելով Իր նմանը չունեցող անձնավորություն՝ Աստվածամարդուն: Աստվածային բնության հետ միանալով,՝ մարդկային բնությունը ստանում է իր իսկական իմաստն ու հավերժական նշանակությունը: Աստվածային լույսով լուսավորված մեր սահմանափակ մարդկային բնությունը ձեռք է բերում ամբողջականություն եւ կատարելություն:*

*Մարդկանց փրկությունը կանխորոշված էր ի սկզբանե: Երբ ժամանակը եկավ, Աստված Իր բարեգթությամբ որոշեց դա իրականացնել Իր միածին Որդու՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի միջոցով: Նա էր, ով կանխագուշակվել էր Հին Կտակարանի մարգարեների կողմից որպես Մեսիա՝ Օծյալ: Իր էությամբ Նա Աստծո Որդի է, Հորը համագո, ու միեւնույն ժամանակ Մարդու Որդի է՝ ամբողջությամբ եւ լիովին մարդ, հետեւաբար Նա կատարյալ Աստված է ու կատարյալ Մարդ մեկ անձի մեջ: Ըստ ս. Գրիգոր Տաթեւացու. «Եւ կատարյալ Աստված եղավ կատարյալ Մարդ, հոգով, մտքով եւ*

*մարմնով՝ մեկ անձ, մեկ դեմք եւ մեկ բնության մեջ միավորված մարդացած Աստված»*[1]*։*

*Թեեւ Քրիստոսն ունի ե՛ւ Աստծո, ե՛ւ մարդու բնություն, Նա միեղեն է մնում։ Երկու բնություն գոյակցում են Նրա Անձի մեջ, բայց նրանք չեն բաժանում Նրան երկուսի։ Չնայած գոյաբանական հակադրությանը՝ Քրիստոսի մեջ Աստվածային ու մարդկային բնությունները խորհրդավոր կերպով միավորված են մեկ անբաժանելի եւ ամբողջական միության մեջ։ Թեեւ այդ անճառելի միության մեջ այս երկու բնությունները պահպանում են իրենց տարբերությունները, դրանք չեն հանգեցնում երկու Քրիստոսի գոյությանը՝ մեկը Աստվածային, մյուսը՝ մարդկային։ Այսպիսով, Հիսուս Քրիստոսի աստվածամարդկությունը խորհուրդ է, որը վեր է մարդկային բանականությունից։ Նրա մեջ աստվածային եւ մարդկային բնություններն անքակտելի միասնություն են կազմում՝ դարձնելով Աստծո Որդուն կատարյալ Աստված եւ կատարյալ մարդ։ Քրիստոսի աստվածամարդկության ապացույցները կարելի է գտնել ողջ Նոր Կտակարանում։ Ավետարանները հետեւողականորեն վկայում են Նրա աստվածային հատկանիշների ու զորությունների մասին, ինչպիսիք են ամենագիտությունը (Հովհ. 4.18), ամենազորությունը (Մատթ. 14.25) եւ հավերժական կյանքը (Հովհ. 3.16)։ Միեւնույն ժամանակ, Սուրբ Գիրքը վառ կերպով պատկերում է Նրա իրական մարդկությունը, ներառյալ ֆիզիկական ու էմոցիոնալ կարիքները (Ղուկ. 2.52), ինչպես նաեւ սահմանափակ գիտելիքները (Մարկ. 13.32)։ Քրիստոսի աստվածամարդկությունը վճռորոշ է քրիստոնեական հավատքի համար։ Սա միակ բանն է, որը կարող է հնարավոր դարձնել մարդկության մեղքերի քավությունը։ Որպես ճշմարիտ Աստված՝ Քրիստոսն ուներ մահը հաղթելու եւ մեղքը կործանե-*

---

[1] Գրիգոր Տաթեւացի, *Ոսկեփորիկ, էջ 244։*

*լու զորություն: Որպես ճշմարիտ մարդ՝ Նա կարող էր զգալ մարդկային գոյությունն իր լիարժեքությամբ ու դառնալ Աստծո կամքին հնազանդվելու կատարյալ օրինակ:*

*Աստծո Որդու՝ Հիսուս Քրիստոսի մարմնացումը սկիզբ դրեց Նրա երկու բնությունների՝ աստվածային եւ մարդկային, անբաժանելի ու հավերժական միասնությանը: Այս միության հետեւանքը Նրան որպես Աստծո եւ որպես մարդու անբաժան պաշտամունքն է: Սակայն Հայրը ոչ մէկին չի դատում, այլ ամեն դատաստան տվել է իր Որդուն, որպեսզի ամենքը պատվեն Որդուն, ինչպես պատվում են Հորը (Հովհ. 5.22-23): Մարմնացման ժամանակ Աստվածային Բանը՝ հավերժական Որդին, միավորեց Իր հետ մարդկային բնությունը, որը դարձավ ոչ թե սովորական մարդկություն, այլ հենց Բանն-Աստծո մարդկությունը, որն արժանի է երկրպագության: Անբաժանելի լինելով մարմնի հետ՝ Աստծո Որդին նրա հետ երկինք համբարձվեց: Երկրպագել Հիսուս Քրիստոսին՝ չի նշանակում երկրպագել միայն մահկանացու մարդուն: Այս երկրպագությունը մատուցվում է Մարմնավորված Աստծուն, Նրան, ով իր մեջ միավորեց աստվածայինն ու մարդկայինը եւ դարձավ ճշմարիտ Աստվածամարդը: Քրիստոսին որպես Աստծո ու մարդու երկրպագությունը քրիստոնեական հավատքի հիմնարար կողմն է, որը վկայում է Նրա Անձի եզակիության մասին:*

*Քրիստոսի մեջ աստվածայինի եւ մարդկայինի այս միավորումը համարվում է խորհուրդ, որը մարդկային միտքը չի կարող լիովին ըմբռնել: Դա արտացոլում է Աստծո անսահման սերը մարդկության հանդեպ, որը թույլ տվեց Նրան արտահայտել իր իսկական էությունը Հիսուս Քրիստոսի միջոցով: Քրիստոսի աստվածամարդկության դավանանքը խորը հետեւանքներ ունի հավատքի ու փրկության ըմբռնման համար: Այդ միության միջոցով Հիսուս Քրիստոսը դարձավ աշխարհի Փրկիչը, ով կարող է հաշտեցնել*

մարդկությունը Աստծո հետ եւ բացել հավիտենական կյանքի ճանապարհը: Այնուամենայնիվ, այս խորհուրդը լիովին հասկանալու համար անհրաժեշտ է դիմել հավատքին: Միայն հավատքի միջոցով մենք կարող ենք ընդունել ու յուրացնել այս դավանանքը, որն անմատչելի է մարդկային բանականության համար: Հավատքը մեզ թույլ է տալիս ընկալել Քրիստոսի աստվածամարդկության ճշմարտությունը եւ ընդունել նրան որպես Փրկիչ ու Տեր:

Աստծո Որդին մարդացավ, որպեսզի մարդիկ հնարավորություն ստանան որդեգրվելու Աստծո կողմից, առանց որի փրկությունը պարզապես անհնարին է: Քրիստոսով փրկությունը, լինելով հավատի խորհուրդ, միաժամանակ չէր դիտվում որպես մի բան, որը պիտի գաղտնիք լիներ հավատացյալների համար: Ընդհակառակը, այն պիտի հայտնի դառնար բոլորի համար ուղղափառ վարդապետության միջոցով, ուստի կենսական կարեւորություն է ստանում ուղիղ դավանանքը, որը պիտի պաշտպանվի զանազան հերետիկոսներից: Հենց այս հանգամանքով է պայմանավորված այն հսկայական նշանակությունը, որ ձեռք է բերել քրիստոսաբանական դավանանքը Եկեղեցու համար: Քրիստոսաբանական վեճերն ամենեւին էլ սքոլաստիկ բնույթ չունեին: Եթե քրիստոնեական վարդապետությունը հիմնված է Ավետարանում առկա Քրիստոսի խոսքերի վրա, ապա նրանց հեղինակությունը լիովին կախված էր այն բանից, թե ով էր Հիսուսը՝ Աստծո միածին Որդի՞ն, թե՞ սովորական մի մարդ, որքան էլ առաքինի ու իմաստուն նա լիներ:

Քրիստոսի անձի մեջ աստվածային եւ մարդկային բնությունների փոխհարաբերության հիմնախնդիրը սկսեց հետաքրքրել Եկեղեցուն դեռ Դ դարում, արիոսականության դեմ պայքարի ամենաթեժ փուլում: Ահա թե ինչ է գրում այդ մասին ս. Աթանաս Ալեքսանդրացին. «Բանը գիտեր, որ ապականությունը մարդկանց մեջ կարելի է դադարեցնել միայն անխուսափելի մահով: Անհնար էր,

*որ Բանը, որպես Հոր անմահ Որդի, մահանար։ Հենց այս պատճառով Նա ինքն իր վրա վերցնում է մի մարմին, որը կարող է մեռնել, որպեսզի, որպես բոլորից վեր գոյություն ունեցող Բանին հաղորդակից, զորություն ունենա մեռնելու բոլորի համար, որպեսզի հանուն նրա մեջ բնակվող Բանի մնա անապական ու վերջապես՝ ապականությունը բոլորի մեջ դադարի հարության շնորհով»[1]։ Անշուշտ, քրիստոսաբանությունը հետաքրքրում էր եկեղեցու հայրերին նաեւ դրանից առաջ, մասնավորապես՝ գնոստիկների դեմ պայքարի ժամանակ, որոնք ժխտում էին Քրիստոսի մարմնի իրական լինելը, ինչի պատճառով ս. Իրենեոս Լուգդոնացին ստիպված էր ապացուցել, որ Աստծո Որդին իսկական մարդկային մարմին ուներ։ Սակայն Բ դարում դրանից այն կողմ գործը չգնաց, եւ պարզ չէր, թե ինչպիսին էր Փրկչի մարդկային մարմնի ու Նրա աստվածային բնության փոխհարաբերությունը։ Եկեղեցու քրիստոսաբանության հետագա զարգացման համար հզոր խթան հանդիսացավ Ապողինար Լաոդիկեցու հերձվածի ի հայտ գալը։ Ճիշտ է, նա նիկիական ուղղափառության համոզված կողմնակից էր, Որոգինեսի ու հեթանոսական նորպլատոնականության հակառակորդ, սակայն նրա աստվածաբանության կենտրոնական գաղափարն այն էր, որ միայն Աստված կարող է փրկել մարդկությանը։ Ապողինարը մերժեց այն հնարավորությունը, որ մարդ, ով ենթակա է համընդհանուր մարդկային թուլության եւ մեղսականության, կարող է լինել փրկիչ։ Ելնելով դրանից՝ փրկությունը իբրեւ թե հնարավոր էր համարվում միայն Աստծո մարմնավորման պայմանով, ով պետք է տառապի ու մեռնի մարդկանց համար։*

*Հելենական մտածելակերպի տիպիկ կրող լինելով՝ Ապողինարը չէր կարող բավարարվել ս. Աթանասի կարծիքով, որ Հորը համագո*

[1] Восточные отцы и учители Церкви, В трех томах, Т. I, Москва, 1998, с. 34.

*Բանի աստվածային բնության կատարյալ մարդկային բնության հետ միավորվելուց Քրիստոսի անձի միեղինությունը չի խախտվում: Այս դրույթի մեջ առկա տրամաբանական հակասությունը ս. Աթանասին չէր մտահոգում, քանի որ դա հավատի խորհուրդ էր համարվում: Ի տարբերություն նրա՝ Ապողինարը համոզված էր, որ քրիստոնեական դավանանքը չպիտի հակասի տրամաբանության օրենքներին, եւ մշակել էր մի քրիստոսաբանական հայեցակարգ, որում, առաջին հայացքից, համաձայնեցված էին ինչպես տրամաբանության օրենքները, այնպես էլ քրիստոնեական փրկաբանության սկզբունքները: Լինելով Նիկիական հանգանակի կողմնակից՝ Ապողինարը ճանաչում էր Քրիստոսի աստվածային բնությունը, սակայն նա չէր ընդունում Նրա մարդկային բնության կատարելությունը, քանի որ կարծում էր, թե երկու կատարյալ բնությունների միավորումը մեկ անձնավորության մեջ անհնար է: Իբրեւ թե՝ կատարյալ Աստծո միությունը կատարյալ մարդու հետ կբերի երկու Որդի՝ Աստծո Որդուն բնությամբ եւ Որդուն՝ որդեգրմամբ: Նրա կարծիքով՝ Բանն ի Քրիստոս միավորվել է ոչ թե լիարժեք, այլ թերի ու պակասավոր մարդկային բնության հետ: Քրիստոսն ուներ ֆիզիկական մարմին եւ այն շնչավորող հոգի, սակայն Նա չուներ ինքնագիտակցող բանական սկզբունք, որը հունարեն կոչվում է* nous – միտք, *որի տեղը զբաղեցրել է աստվածային Բանը: Առաջին հայացքից Ապողինարի հայեցակարգն ուներ մի շարք էական առավելություններ: Այն հնարավորություն էր ընձեռում՝ 1) խուսափել այն տեսակետից, թե գոյություն ունեն երկու Աստծո Որդիներ, մեկը՝ Աստված, իսկ մյուսը՝ մարդ, 2) չհամարել, որ Հիսուսը սովորական մարդ էր, որի վրա Հորդանանում մկրտվելու ժամանակ իջավ Սուրբ Հոգին, 3) խուսափել Բանի՝ մարմին դառնալու բառացի ընկալումից: Ապողինարը համոզված էր, որ իր հայեցակարգը չի հակասում Սուրբ Գրքին, քանզի վերջինիս մեջ ասված է «Բանը մարմին ե-*

ղավ», իսկ nous-ը անտիկ փիլիսոփայության ավանդության համատեքստում մարմնի հասկացության մեջ չի մտնում։ Անշուշտ, դա սխալ տեսակետ է, քանի որ sarx եզրույթը, որն օգտագործված է Հովհաննեսի ավետարանի նախաբանում, պարզապես եբրայերեն basar եզրույթի հունարեն թարգմանությունն էր, որը, ի տարբերություն իր հունարեն համարժեքի, նշանակում է ոչ թե մարդու զուտ ֆիզիկական բնությունը, այլ մարդկային անձնավորությունը որպես հոգու եւ մարմնի անբաժանելի միություն։ Ապողինարի քրիստոսաբանության էությունն այն էր, որ Բանի մարմնացումն ամենեւին էլ նրա մարդեղության հոմանիշը չէ, ու Քրիստոսի մարդկային բնությունն էապես տարբերվում է սովորական մարդկային բնությունից։

Նման հայեցակարգը լիովին համապատասխանում էր անտիկ փիլիսոփայական մտածողության սկզբունքներին, սակայն հակասում էր Հայտնությանը եւ եկեղեցական ավանդությանը, որոնց համաձայն՝ Քրիստոսը նման էր մարդկանց ամեն ինչով, բացի մեղքից։ Այս ամենի հետեւանքով Ապողինարի ուսմունքը մերժվել է Եկեղեցու կողմից, իսկ ինքը՝ հեղինակը, նզովվեց Երկրորդ տիեզերական ժողովում։ Եկեղեցին չէր կարող ընդունել այդ ուսմունքը, քանի որ ապողինարականության մեջ թաքնված էր երեւութականության՝ դոկետիզմի վտանգը, իսկ դա, իր հերթին, թերի էր դարձնում Քրիստոսի փրկագործությունը։ Որպեսզի այն լիներ կատարյալ, Բանը պիտի ընդունած լիներ մարդկային բնությունն ամբողջությամբ, ու նրա մարդկությունը անթերի պիտի լիներ ե՛ւ հոգեպես, ե՛ւ մարմնապես, ու միակ բանը, որով նա կարող էր տարբերվել մնացյալ մարդկանցից, դա պիտի լիներ մեղքի բացակայությունը։ Քրիստոսի կյանքում կային բազմաթիվ իրադարձություններ, որոնցից պարզ երեւում էր, որ նա ուներ մարդկային միտք։ Բավական է հիշել Գեթսեմանի այգում Նրա անցկացրած գիշերը, երբ Նա տրտմում էր եւ աղոթում։ Եթե փորձենք մեկ նախադասությամբ

արտահայտել Եկեղեցու կողմից Ապոլինարի մերժման պատճառը, ապա կարող ենք ասել, որ նրա համար Քրիստոսն իսկական մարդ չէր, ինչը բացահայտ կերպով հակասում է Ավետարանին, որն Աստծո Որդուն պատկերում է որպես կատարյալ մարդու։

Սակայն ապոլինարականության դատապարտումը չէր նշանակում, որ նրա կողմից բարձրացված աստվածաբանական հիմնախնդիրը կարեւոր չէր Եկեղեցու համար։ Ընդհակառակը, այն մի քանի դարերի ընթացքում գտնվում էր քրիստոնյա աստվածաբանների ուշադրության կենտրոնում։ Ապոլինար Լաոդիկեցու քրիստոսաբանական հայեցակարգը խստագույն քննադատության էր ենթարկվել անտիոքյան դպրոցի ներկայացուցիչների կողմից, թեեւ նա հենց այդ դպրոցին էր պատկանում։ Եթե նա վստահ էր, որ մարմնացած Բանի բնությունը միեղեն է, ապա անտիոքացիները դրանից եզրակացնում էին, որ Քրիստոսն ուներ երկու՝ աստվածային ու մարդկային բնություն։ Այս հայեցակարգը մշակել էին Դիոդորոս Տարսոնացին եւ Թեոդորոս Մոպսուեստացին։ Նրանք երկուսն էլ նիկիական ուղղափառության անվերապահ կողմնակիցներ էին ու չէին կասկածում, որ Բանի բնությունն անեղ է, սակայն միաժամանակ համոզված էին, որ Քրիստոսը Բանի աստվածային ինքնագիտակցության հետ մեկտեղ ուներ նաեւ մարդկային ինքնագիտակցություն, ինչն ամբողջապես անընդունելի էր դարձնում նրանց համար Ապոլինարի ուսմունքը։ Նրանց կարծիքով՝ Բանն ի Քրիստոս միավորվել է լիարժեք մարդկային անձնավորություն հետ, բայց այս միավորումը սուբստանցիալ չէր։ Բանն-Աստված բնակվում էր մարդ Հիսուսի մեջ որպես իր տաճարում, եւ երկու բնությունները լիովին պահպանում էին իրենց որակական առանձնահատկությունները՝ չխառնվելով ու չմիաձուլվելով միմյանց հետ։ Անտիոքացիների կարծիքով՝ Քրիստոսի մեջ որեւէ առանձնավորական միեղինության մասին խոսք լինել չի կարող, Բանի եւ Հիսուսի

միեղինությունը զուտ բարոյական բնույթ ուներ եւ լոկ նրա մարդկային կյանքի ընթացքում այնքան բարձր մակարդակի էր հասել, որ հնարավոր դարձավ Քրիստոսի անձը դիտարկել իբրեւ մի ամբողջություն, որն արժանի է կրոնական պաշտամունքի: Բանն անտիոքացիների համար ոչ թե մարդացավ, այլ միայն մարմնացավ, իսկ դա նույն բանը չէ: Անտիոքյան քրիստոսաբանության շրջանակներում խոսք լինել չի կարող Քրիստոսի մարդկային բնության աստվածացման մասին, ինչը սկզբունքային նշանակություն ունի ուղղափառության մեջ, քանի որ, եթե չկա աստվածային ու մարդկային բնությունների էական փոխներթափանցումը, ապա նրանցից յուրաքանչյուրը որեւէ փոփոխություն չի կրում: Նրանց փրկաբանական տեսությունը չէր ենթադրում մարդկային բնության արմատական փոխակերպություն մեղքից առաջացած ապականության վերացման միջոցով, այլ միայն պահանջում էր մարդկային անձնավորության բարոյական կատարելագործում՝ ճիշտ այնպես, ինչպես դա արել է Հիսուսը նրա մեջ բնակվող Բանի ազդեցության ներքո:

Բոլորովին այլ բնույթ ուներ քրիստոսաբանությունը ալեքսանդրիական դպրոցի ներկայացուցիչների մոտ: Եթե անտիոքացիների ուշադրության կենտրոնում էր գտնվում Քրիստոսի կերպարը, ինչպես որ այն պատկերված է սինոպտիկ ավետարաններում, այսինքն՝ ընդգծված մարդկային հատկություններով, ապա ալեքսանդրիացիները, եւ առաջին հերթին՝ ս. Կյուրեղ Ալեքսանդրացին, իրենց քրիստոսաբանությունը հիմնում էին գլխավորապես Հովհաննեսի ավետարանի վրա, որի կենտրոնում գտնվում է մարմին դարձած Բանը: Դա պատահականություն չէր, քանզի ս. Կյուրեղը խորապես համոզված էր, որ միայն Աստված կարող է լինել փրկության գործընթացի սուբյեկտը: Ոչ մի մարդ, նույնիսկ Հիսուս Նազովրեցու նման կատարյալ սուրբն ի զորու չէր՝ կործանելու մեղքի

*ու մահվան իշխանությունը։ Բանն իրոք մարմին եղավ եւ մարդկային բնությունը դարձրեց նաեւ իրենը։ Այդ քրիստոսաբանությունն ուներ, նախ եւ առաջ, փրկաբանական նշանակություն։ Ս. Կյուրեղի համար սկզբունքային նշանակություն ուներ մարմնացյալ Բանի միեղինությունը, այսինքն՝ հենց Բանն է ծնվել Սուրբ Կույսից, ու հենց Նա է մահացել խաչի վրա։ Բանն-Աստված ոչ միայն բնակվում էր մարդ Հիսուսի մեջ, ինչպես դա կարծում էին անտիոքացիները, այլեւ դարձավ մարդ։ Հենց այստեղից է բխում ս. Կյուրեղի այն համոզմունքը, որ Քրիստոսի մեջ Աստծո եւ մարդու միջեւ գոյություն ունի ոչ միայն բարոյական, այլեւ գոյաբանական միություն, ինչի հետեւանքով խաչի վրա մարդկության մեղքերի քավության համար մահացավ ոչ թե մի սուրբ մարդ, որի մեջ բնակվում էր Բանը, այլ հենց ինքը՝ Բանն-Աստված։ Այդ պատճառով էլ Սուրբ Կույսը հորջորջվում է Աստվածածին, քանի որ նա ոչ թե մարդու, այլ մարդացած Բանի մայրն էր։ Ս. Կյուրեղի համաձայն. «Քանզի Բանն Աստված կամեցավ նորոգել ամեն ինչ, ինչպես սկզբում էր, Իրեն միացրեց մարմինը սուրբ Կույս Մարիամից եւ Մարդու Որդի կոչվեց, որպեսզի Իրեն պատարագ մատուցի Հայր Աստծուն»[1]։*

*Ալեքսանդրիական տեսակետից՝ Բանն ընդունել է ամբողջ մարդկային բնությունը, սակայն դրանից նրա աստվածային բնությունը որեւէ փոփոխություն չի կրել։ Ի տարբերություն անտիոքացիների՝ ալեքսանդրիացիները Քրիստոսի մարդկային բնությունը երբեք չէին նմանեցնում տաճարի, որում բնակվում էր Բանը, եւ նրանց համար մարմնացումից հետո Քրիստոսի աստվածային ու մարդկային բնությունների միջեւ գոյություն ունի գոյաբանական միեղինություն։ Հենց այստեղից է բխում ս. Կյուրեղ Ալեքսանդրացու հայտնի քրիստոսաբանական բանաձեւը՝ «Մի բնութիւն Աս-*

---

1 *«Գանձասար», Ա, Եր., 1992, էջ 133-134։*

*տուծոյ Բանին մարմնացելոյ»։ Ս. Կյուրեղն այս բանաձեւի միջոցով դնում է շեշտը ոչ միայն Քրիստոսի մեջ Աստծո եւ մարդու բարոյական միության վրա, այլեւ նրանց բնական, կարելի է ասել՝ ֆիզիկական միության վրա, ինչի շնորհիվ հնարավոր դարձավ մարդկության փրկությունն ու աստվածացումը։ Եւ կարեւորն այստեղ այն է, որ աստվածային ու մարդկային բնությունները չեն խառնվել միմյանց հետ, այլ պահպանել են իրենց տարբերակիչ առանձնահատկությունները։ Ըստ ս. Կյուրեղի՝ Քրիստոսի մարդկային բնության կրած տառապանքը եւ մահը կրում էր նաեւ Բանը։ «Եթե մեկը չի խոստովանում, որ Աստուծո Բանը մեռավ մարմնով, խաչվեց եւ մարմնով ճաշակեց մահը, որ մեռյալներից անդրանիկ եղավ, որ կենդանի է եւ կենդանարար, նզովյալ լինի՛»[1]։*

*Ս. Կյուրեղի համար Սուրբ Կույսը Աստվածածին էր։ Հենց այս վերջին դրույթը աստվածաբանական վեճի պատճառը դարձավ, որի հետեւանքով գումարվեց Երրորդ տիեզերական ժողովը Եփեսոսում, որտեղ դատապարտվեց անտիոքյան դպրոցի քրիստոսաբանությունը։ Այս վեճի անմիջական պատճառը դարձավ Կոստանդնուպոլսի եպիսկոպոս Նեստորի գործունեությունը, ով իր քարոզներում հրաժարվում էր Սուրբ Կույսին Աստվածածին կոչել՝ համարելով, որ նրան կարելի է միայն Քրիստոսածին անվանել։ Նեստորն օժտված անձնավորություն էր, փայլում էր պերճախոսությամբ ու առաքինությամբ եւ շատերի կողմից համարվում էր երկրորդ Ոսկեբերան։ Նա անողոք կերպով հալածում էր հերձվածողներին, սակայն ինքը շուտով դարձավ հերձվածող ու նզովվեց։ Բանն այն է, որ Սուրբ Կույսի՝ որպես Աստվածածնի պաշտամունքն արդեն արմատացած էր Եկեղեցու մեջ եւ արժանացել էր Եկեղեցու մի շարք Հայրերի հավանությանը, որոնց թվում էին Աթանաս Ալեք-*

---

[1] *Նույն տեղում, էջ 137։*

սանդրացին ու Բարսեղ Կեսարացին: Այս եզրույթը կարեւոր աստվածաբանական նշանակություն ուներ, քանի որ ցույց էր տալիս Քրիստոսի աստվածային եւ մարդկային բնությունների անքակտելի կապն ու Բանի ճշմարիտ մարդեղությունը: Սուրբ Կույսը պիտի Աստվածածին անվանվի, քանի որ Քրիստոսը որպես Անձ Բանն-Աստված էր, Սուրբ Երրորդության երկրորդ Դեմքը: Սակայն այս տեսակետն անընդունելի էր անտիոքյան դպրոցի համար, որի կողմնակիցն էր Նեստորը: Նա, հետեւելով Թեոդորոս Մոպսուեստացուն՝ համարում էր, որ Սուրբ Կույսին կարելի է միայն Քրիստոսածին անվանել, քանզի Որդին ծնված է Հորից հավիտենականության մեջ, եւ նրա՝ ժամանակի մեջ ծնվելու մասին խոսք լինել չի կարող: Ուստի Թեոդորոսը համարում էր, որ Մարիամը ծնել է ոչ թե Աստծուն, այլ այն տաճարը, որում բնակվեց Աստված:

Առաջարկելով Սուրբ Կույսին Քրիստոսածին անվանել՝ Նեստորը հիմնավորում էր դա այն իրավիճակով, որ ստեղծվել էր Կոստանդնոպոլսում, որտեղ հավատացյալների մի մասը Նրան անվանում էր Աստվածածին, իսկ մյուսը՝ մարդածին: Քրիստոսածին անվանումը նրան թվում էր ընդունելի փոխզիջում, քանի որ Քրիստոսն ուներ ե՛ւ աստվածային, ե՛ւ մարդկային բնություն: Այս տեսակետն առաջին հայացքից ճիշտ է թվում, բայց այդ տպավորությունը ցրվում է, երբ իմանում ենք, թե ինչպես է Նեստորը հասկացել աստվածության ու մարդկության փոխհարաբերությունը Քրիստոսի անձի մեջ: Հետեւելով Թեոդորոս Մոպսուեստացուն՝ նա համարում էր, որ Բանն ուներ Հայր, սակայն չուներ Մայր, իսկ Մարիամը ծնել էր մի մարդու, ով դարձել է տաճար, որում բնակվեց Բանը: Հիսուսն Աստված չէր, բայց նրա մեջ էր բնակվում աստվածային Բանը, ինչի շնորհիվ Նա նույնպես Աստված է համարվում:

Եկեղեցին վճռականորեն մերժեց այս հերետիկոսական գաղափարը: Սուրբ Կույսի՝ Աստվածածին լինելու դավանանքը դարձել է

քրիստոնեական աստվածաբանության հիմնաքարերից մեկը: Ըստ Եկեղեցու վարդապետության՝ Մարմնացումը ենթադրում է, որ Բանը՝ Աստծո Հավիտենական Որդին, մարմնավորվեց Սուրբ Կույս Մարիամի միջոցով: Աստվածային այս Անձը միավորվեց մարդկային բնության հետ՝ հնարավոր դարձնելով Աստծո Միածին Որդու մարդկային ծնունդը: Սուրբ Կույսին պատիվ է տրվել Աստվածամայր կոչվելու ո՛չ այն պատճառով, որ նա ծնել է Քրիստոսի աստվածային բնությունը, որը հավիտենական է ու անսկիզբ: Նրա մայրությունը վերաբերում է բացառապես Հիսուսի մարդկությանը: Նա ծնեց Նրան որպես մարդ, բայց նրանից ծնված երեխան միևնույն ժամանակ կատարյալ Աստված էր: Սուրբ Հոգին իջավ Մարիամի վրա, եւ այդ պահին Աստծո Բանն ընդունեց մարդկային բնությունն իր աստվածային Անձի միասնության մեջ: Աստծո Որդու Անձը մնաց անփոփոխ, Նա ե՛ւ մարմնացումից առաջ, ե՛ւ հետո նույն Սուրբ Երրորդության երկրորդ Անձն էր: Այսպիսով, Սուրբ Կույսը, ծնելով Մարդու Որդի դարձած Բանին, դարձավ Աստվածամայր: Եւ այս անունը նրա հետ մնաց ողջ կյանքում՝ վկայելով փրկագործության մեջ նրա բացառիկ դերի մասին: Աստվածամայր եզրույթը մի շարք կարեւոր հետեւանքներ ունի քրիստոնեական աստվածաբանության համար: Նախ՝ այն ընդգծում է Քրիստոսի իսկական մարդկային բնությունը՝ մերժելով հերձվածողական վարդապետությունները, որոնք ժխտում էին նրա կատարյալ մարդկությունը: Երկրորդ՝ այն ընդգծում է Քրիստոսի Աստվածային բնությունը՝ ցույց տալով, որ Նրա ծնունդը պարզապես սովորական մարդու ծնունդ չէր, այլ Աստծո մարմնացում: Բացի այդ՝ Աստվածածնի գաղափարը լույս է սփռում Երրորդության էության վրա՝ ցույց տալով, որ Բանն-Աստված մարմին է դարձել՝ մնալով ամբողջությամբ Աստված:

431 թ. գումարվեց Երրորդ տիեզերական ժողովը: Նեստորը նզովվեց, եւ դրանով մեկընդմիշտ մերժվեց նրա քրիստոսաբանու-

*թյունը, որի համաձայն՝ Աստծո Որդու մեջ կար երկու անձ՝ աստվածային ու մարդկային, որոնք միմյանց հետ լոկ արտաքին հարաբերության մեջ էին գտնվում: Ս. Կյուրեղի մահվանից հետո՝ 444 թ., Ալեքսանդրիայի պատրիարքի աթոռն անցավ Դիոսկորոսին: 449 թ. Եփեսոսում գումարվեց եկեղեցական ժողով, որը ղեկավարում էր Դիոսկորոսը: Ժողովի գումարման առիթը դրանից մեկ տարի առաջ կայացած մի այլ ժողով էր, որը գումարվել էր Կոստանդնուպոլսի պատրիարք Փլաբիանոսի կողմից: Այդ ժողովը դատապարտել էր եգիպտոսցի վարդապետ Եւտիքեսի ուսմունքը, որը, վկայակոչելով ս. Կյուրեղի վարդապետությունը, խոսում էր Քրիստոսի մի բնության մասին, ինչը, նրա կարծիքով, նշանակում էր, որ մարմնացումից հետո Քրիստոսի աստվածային ու մարդկային բնությունները խառնվել են իրար հետ, ինչի հետեւանքով էլ մարդկությունը կլանվել է աստվածության կողմից: Դիոսկորոսի կողմնակիցները վերականգնեցին Եւտիքեսի իրավունքները եւ ընդունեցին նրա քրիստոսաբանական տեսությունը: Դա ընդունելի չէր ինչպե՛ս Հռոմի պապ Լեւոն Ա-ի, այնպե՛ս էլ Մարկիանոս կայսեր համար, եւ երկու տարի անց Քաղկեդոնում գումարվեց նոր տիեզերական ժողով, որն ընդունեց մի նոր քրիստոսաբանական դավանանք:*

*Ամբողջ ժողովն անցավ Հռոմի Լեւոն Ա պապի գերակայության ներքո: Ուստի ամենեւին էլ զարմանալի չէ, որ ժողովի որոշումներն իրենց վրա էին կրում Հռոմի դավանաբանական ու քաղաքական ազդեցության հզոր դրոշմը, առավել եւս որ Լեւոն Ա պապին անսքող սատարում էր պետական իշխանությունը՝ հանձին Մարկիանոս կայսեր: Ավարտելով իր աշխատանքը՝ ժողովն ընդունեց մի դավանական սահմանում, որը դարձավ երկաբնակ քրիստոսաբանության հիմքը: Այդ սահմանման մեջ ուշագրավ է, նախ եւ առաջ, նրա փոխզիջողական բնույթը: Մի կողմից, ի հակակշիռ նեստորականների, հաստատվում է Քրիստոսի անձի միությունը, իսկ մյուս*

կողմից, ի հակակշիռ Եւտիքեսի, որի կարծիքով մարդկությունն ի Քրիստոսը կլանված էր Նրա Աստվածության կողմից, հաստատվում է Քրիստոսի մարդկային բնության լիարժեքությունն ու կատարելությունը: Առաջին հայացքից՝ այս դավանական սահմանումն ընդունելի պիտի լիներ հակամարտող եկեղեցական կուսակցությունների համար, սակայն իրականում դա տեղի չունեցավ: Այն մերժվեց, փաստորեն, ամբողջ Քրիստոնյա Արեւելքի կողմից՝ Հայաստանը ներառյալ: Առաջին հայացքից կարող է թվալ, որ Հռոմի Լեւոն Ա պապն իմաստուն կերպով առաջարկել է փոխզիջումային դավանական բանաձեւ, որը հավասարապես հեռու է Ալեքսանդրիական եւ Անտիոքյան դպրոցների ծայրահեղություններից, բայց այդ առաջին տպավորությունը խաբուսիկ է: Իրականում Լեւոն պապի կեղծ փոխզիջումային քրիստոսաբանությունը բավականին մոտ էր նեստորականությանը: Այդ պատճառով հայերի կասկածները, թե քաղկեդոնական դավանանքը սքողված նեստորականություն է, բնավ անհիմն չէին: Քաղկեդոնականության եւ նեստորականության ամբողջ տարբերությունն այն է, որ Լեւոն պապն ու նրան հետեւող քաղկեդոնականները ժխտում են Քրիստոսի մեջ առանձին մարդկային անձի առկայությունը, ինչը չեն անում նեստորականները: Դրանով քաղկեդոնականները խուսափում են Քրիստոսի անձի երկատումից, բայց դրա փոխարեն ընդունում են, որ Նա ուներ անանձ մարդկային բնություն, ինչը հակասում է թե՛ Սուրբ Գրքին, թե՛ ողջամտությանը:

Հայ աստվածաբանները հերքում էին Քրիստոսի մեջ մարդկային բնության գոյության հնարավորությունը՝ առանց համապատասխան մարդկային անձի: Եթե Քրիստոսը, բոլոր մարդկանց պես, չունենար մարդկային անձ, ապա Նրա մարդկությունը կզրկվեր իրական գոյությունից: Խոսրովիկ Թարգմանչի խոսքերով. «Բանն-Աստված ոչ թե առավ անանձնական եւ գոյություն չունեցող

*մարդկային բնություն, այլ ընդհանուր մարդկային բնությունից Իր մարմինը կցեց բանական անձի հետ միասին եւ նույն մարմնով հաղթեց մեղքը, մահը, դժոխքն ու ապականությունը»*[1]*։*

*Մյուս կարեւոր քրիստոսաբանական խնդիրը Քրիստոսի մարմնի անապականությունն էր։ Այդ հարցի շուրջ ծավալված աստվածաբանական վեճը սերտորեն կապված էր Անտիոքի պատրիարք Սեւերոսի անվան հետ։ Նա համարում էր, որ Քրիստոսի մարմինը Սուրբ Ծնունդից մինչեւ Հարություն անկատար ու ապականացու էր եւ միայն Հարությունից հետո այն փառավորվեց ու աստվածացավ։ Սեւերոսը հակաքաղկեդոնականության ամենանշանակալի տեսաբաններից էր եւ քաղկեդոնական քրիստոսաբանության անզիջում քննադատը։ Միեւնույն ժամանակ, Սեւերոսը կտրականապես դատապարտում էր Եւտիքեսի հերձվածը՝ ընդգծելով, որ Քրիստոսն Աստվածությամբ համագո էր Հորը, իսկ մարդկությամբ՝ բոլոր մարդկանց։ Նա նաեւ խստորեն դատապարտեց նեստորական հերձվածը, ըստ որի Քրիստոսի մարդկային բնությունը սկզբում ձեւավորվել է Սուրբ Կույսի արգանդում, որում հետո հաստատվել է Բանն-Աստված։ «Ճշմարտությանը հակասում է պնդելը, որ երեխան սկզբում ձեւավորվել է Կույսի արգանդում, իսկ հետո Բանն-Աստված միացել է Նրա հետ սիրո կամքի ու միասնության համաձայնությամբ»։ Սա Սեւերոս Անտիոքացու քրիստոսաբանական ուսմունքն է՝ հիմնված Ս. Կյուրեղ Աղեքսանդրացու վարդապետության վրա, որն այս կետում չի տարբերվում Հայոց եկեղեցու քրիստոսաբանությունից, սակայն կտրուկ հակասում է դրան մեկ այլ կետով, որի պատճառով Սեւերոսը Հայաստանում ճանաչվեց հերետիկոս եւ նզովվեց։*

*Քրիստոսի մարմնի ապականացու լինելու հարցի շուրջ բանավեճ է ծավալվել Սեւերոսի ու Հալիկառնասի եպիսկոպոս Հուլիա-*

---

[1] *Նույն տեղում, էջ 104։*

նոսի միջեւ։ Նրանք երկուսն էլ եղել են Քաղկեդոնի ժողովի հակառակորդները, եւ երկուսն էլ հալածվել են Հուստինոս Բ կայսեր օրոք, ով փորձում էր քաղկեդոնականությունը պարտադիր դարձնել իր բոլոր հպատակների համար։ Ե՛ւ Սեւերոսը, ե՛ւ Հուլիանոսն աքսորվեցին Ալեքսանդրիա, որտեղ մի վանական հարցրեց նրանց՝ Քրիստոսի մարմինն ապականացո՞ւ է, թե՞ անապական։ Սեւերոսը դրական պատասխան է տվել հարցի առաջին մասին, իսկ Հուլիանոսը՝ երկրորդին։ Հուլիանոսն ուներ այն համոզմունքը, որ տառապանքն ու մահը մարդկային բնության մեջ մտել են մեղքի հետեւանքով, այնպես որ դրանք ի սկզբանե բնորոշ չեն այդ բնությանը։ Մարմնավորվելով՝ Բանն-Աստված ընդունեց Ադամի անմեղ էությունը, այնպես որ բնությամբ նա ենթակա չէր ադամական մեղքի վնասակար հետեւանքներին։ Այստեղից Հուլիանոսը եզրակացրեց, որ Քրիստոսի մարդկությունն անապական է եղել Սուրբ Կույսի արգանդում կազմավորվելու պահից։ Սեւերոսը վճռականորեն մերժեց այդ հայեցակարգը։ Նա իրավացիորեն նշում էր, որ «անապականություն» բառը կարող է ունենալ երկու իմաստ՝ անմեղություն ու ենթակայության բացակայություն մարդկային բնության բնական տկարությունների նկատմամբ, քաղց, ծարավ զգալու կարողություն եւ այլն։ Սեւերոսը նաեւ մահկանացու կյանքը ներառեց նման բնական տկարությունների մեջ՝ դրանից եզրակացնելով, որ Քրիստոսն անապական դարձավ միայն մեռելներից հարություն առնելուց հետո։ Նա չնկատեց, որ իր ճանաչած Քրիստոսի սրբությունն ու անմեղությունն անհամատեղելի են նրա մարդկային էության ապականացու եւ մահկանացու լինելու հետ, քանի որ վերջիններս մեղսականության անմիջական հետեւանք էին։ Այս մոլորությունը պատահական չէր, քանի որ այն բխում էր մարդու բնության վերաբերյալ Սեւերոսի յուրահատուկ հայացքներից։ Նա հավատում էր, որ Ադամը մահկանացու է ստեղծվել, քանի որ ստեղծվել է ոչնչից։

*Այդ պնդումը ոչ միայն հակասում է ողջ հայրապետական ավանդությանը, այլեւ Հայտնությանը, որտեղ մահը միանշանակորեն դիտվում է որպես մեղքի պատիժ։ «Որովհետեւ մեղքի վարձը մահ է» (Հռոմ. 6.23), հետեւաբար, եթե մեղքը չլիներ, մահ էլ չէր լինի։ Սեւերոսը չէր նկատում, որ հրեշտակները եւս, ստեղծված լինելով ոչնչից, չեն ճանաչում մահն այն իմաստով, որով այն բնորոշ է մարդկանց։ Այս ուսմունքն իր ակնհայտ հերետիկոսության պատճառով կտրականապես մերժվել է Հայոց Եկեղեցու հայրերի կողմից։*

*Սակայն մեր Եկեղեցու կողմից Սեւերոս Անտիոքացու քրիստոսաբանության մերժումը ամենեւին չէր նշանակում, որ այն կիսում էր նրա հակառակորդ Հուլիանոս Հալիկառնասացու տեսակետը։ Այս երկու հերետիկոսների հայացքները, լինելով միմյանց հակադիր, հավասարապես խեղաթյուրում էին դավանաբանական ճշմարտությունը։ Հուլիանոսի կարծիքով՝ քանի որ մահը խորթ է մարդկային բնությանը, այն մարդկության մեջ է մտել ադամական մեղքի հետեւանքով։ Սուրբ Կույսից ծնված Քրիստոսը Նրանից վերցրեց մարդկային անմեղ բնությունը, ինչպես որ կար մինչեւ անկումը, եւ, հետեւաբար, Նա բնությամբ ենթակա չէր մահվան ու տառապանքի։ Նա տառապանքներին դիմացավ ոչ թե անհրաժեշտությունից, այլ կամավոր։ Հետեւաբար՝ Քրիստոսի մարմինն անապական էր Սուրբ Հոգու կողմից բեղմնավորման պահից։ Հայոց Եկեղեցին Հուլիանոսի պես ճանաչելով Քրիստոսի մարմնի անապականությունը, ի տարբերություն նրա, պնդեց, որ դա Փրկչի մարմնի բնական սեփականությունը չէ, այլ Բանի ու մարմնի Աստծո անճառ միության հետեւանք։ Ըստ ս. Հովհան Օձնեցու. «Ապա ուրեմն՝ մի բնություն եւ մի դեմք Քրիստոսի, եթե պետք է համառոտակի ասել, ոչ ըստ բնության նույնության կամ ըստ միաձնականության, որովհետեւ այս երկուսը միասին գրեթե զրկելու են Աստծուն մարդ լինելուց եւ*

*մարդուն աստվածանալուց, այլ, որպես բազում անգամ ասացի, ըստ Բանի անճառ միավորության Իր մարմնի հետ»[1]։*

*Մարդկային մտքի սահմանափակումների պատճառով անհնար է լիովին ըմբռնել Քրիստոսի փրկագործության անսահման նշանակությունը։ Ուստի, հնագույն ժամանակներից ի վեր այս մեծագույն իրադարձության ըմբռնումը հեշտացնելու համար ընդունված է եղել Աստվածամարդու առաքելությունը բաժանել երեք հիմնական ասպեկտների, որոնք միասին ընդգրկում են դրա էությունը։ Քրիստոսը Մարգարե էր, որն ուղարկվել էր Հայր Աստծուց՝ ազդարարելու Նրա կամքը։ Նա խոսեց Աստծո անունից՝ բացահայտելով փրկության, աստվածային բնության եւ հավերժական երանության ուղու մասին ճշմարտությունները։ Նրա վարդապետությունը դարձավ ողջ քրիստոնեական հավատքի հիմքն ու բոլոր դարաշրջանների հավատացյալների համար հոգեւոր առաջնորդության աղբյուր։ Քրիստոսը հանդես եկավ որպես Քահանայապետ՝ իրեն իբրեւ զոհ մատուցելով մարդկության մեղքերի համար։ Ի տարբերություն երկրային քահանայապետների՝ Նա չի կատարել ծիսական մաքրագործում, այլ տվել է Իր կյանքը՝ որպես մարդկանց մեղքի քավություն։ Նրա զոհաբերությունը հաշտություն բերեց Աստծո եւ մարդու միջեւ՝ բացելով հավերժական փրկության ճանապարհը։ Քրիստոսը թագավորեց որպես Արքայից Արքա՝ գործադրելով հոգեւոր իշխանություն Իր ժողովրդի վրա։ Նրա Արքայությունը երկրային չէր, այլ երկնային, իսկ Նրա տիրապետությունը հիմնված էր սիրո եւ ճշմարտության վրա։ Քրիստոսը փրկություն, պաշտպանություն ու առաջնորդություն է տրամադրում Իր հետեւորդներին եւ կթագավորի հավերժ՝ իշխանությունը կիսելով Իր Հոր հետ։*

---

[1] *Նույն տեղում, էջ 115։*

*Իր մարգարեական ծառայության ընթացքում Հիսուս Քրիստոսը հետեւողականորեն ձգտում էր փոխանցել Իր վարդապետությունը յուրաքանչյուր ունկնդրի՝ անկախ նրանց կրթական մակարդակից կամ սոցիալական ծագումից։ Նա խուսափում էր բարդ եզրույթների կամ վերամբարձ արտահայտությունների օգտագործումից, որոնք կարող էին մթագնել Նրա քարոզչության իրական իմաստը եւ անհասկանալի դարձնել այն սովորական մարդկանց համար։ Անմիջական քարոզի հետ մեկտեղ Նա հաճախ էր դիմում կարճ ասացվածքների, փոխաբերությունների ու առակների։ Այս արտահայտիչ միջոցները ոչ միայն չէին հակասում Նրա վարդապետության պարզությանը, այլեւ նպաստում էին դրա խորը թափանցմանը ունկնդիրների գիտակցության մեջ։ Քրիստոսի օգտագործած առակները ծառայեցին որպես գործիք՝ բարդ հոգեւոր ճշմարտությունները հավատացյալ հոգու համար շոշափելի եւ հասանելի ձեւով ներկայացնելու համար։ Խոսելով երկրայինի մասին՝ Նա ունկնդրին առաջնորդեց դեպի երկնայինի ըմբռնումը։ Նրանք, ում միտքը ծանրաբեռնված չէր նախապաշարմունքներով, եւ ում սրտերը զերծ էին անմիտ կրքերից, հեշտությամբ ըմբռնեցին առակների իմաստը։ Հիսուսի հակառակորդների համար, ովքեր խեղաթյուրում էին ճշմարտությունը սեփական եսասիրական նպատակների համար, առակները դարձան մի տեսակ պաշտպանություն՝ այլաբանության քողի տակ թաքցնելով նրանցից Նրա ուղերձի էությունը։ Այսպիսով, Քրիստոսն ընտրեց ուսուցման մեթոդներ՝ կախված լսարանից՝ փորձելով հնարավորինս արդյունավետ կերպով ճշմարտությունը փոխանցել մարդկանց մտքերին ու սրտերին։ Նրա վարդապետությունը չէր սահմանափակվում միայն խոսքով, այլ մարմնավորված էր Նրա գործերի եւ անհատականության մեջ, որը ներկայացնում էր սրբության ու բարության իդեալը։ Քրիստոսը հաճախ դիմում էր հորդորների կամ ուղղակի, անկեղծ կոչերի՝ հետեւելու*

Աստծո վարդապետությանը: Նա հաճախ էր երկխոսում իր ունկնդիրների հետ՝ նրանց հարցեր տալով ու պատասխանելով նրանց հարցերին: Նման զրույցները լույս են սփռում դժվար խնդիրների վրա ու առաջնորդում աշակերտներին դեպի Նրա վարդապետության ավելի խոր ըմբռնում: Քրիստոսի կյանքը կենդանի քարոզ էր: Նրա խոնարհության, սիրո եւ բարության օրինակը ոգեշնչում էր Իր աշակերտներին: Հիսուս Քրիստոսի վարդապետությունը, բացառիկ խոր ու իմաստուն լինելով, միաժամանակ պարզ եւ մատչելի էր բոլոր խավերի ունկնդիրների համար: Դա հնարավորություն ընձեռեց արդյունավետ կերպով հաղորդել քրիստոնեական հավատքի կենտրոնական ճշմարտությունները: Ավելին, Նրա կյանքը ծառայեց որպես Նրա վարդապետության կենդանի օրինակ՝ ոգեշնչելով հետեւորդներին դարերի ընթացքում:

Հիսուս Քրիստոսի համապարփակ ու հստակ վարդապետության մեջ բացահայտվում է աշխարհի, մարդու եւ նրա երկրային գոյության վերջնական ճակատագիրը: Նա հուշակում է հոգու անմահությունը, մահացածների ապագա հարությունը, այս աշխարհի գոյության ավարտը, Իր երկրորդ գալուստը, վերջին դատաստանը, արդարների հավերժական երանությունը՝ սերտ միասնությամբ Հոր, Որդու եւ Սուրբ Հոգու հետ, ինչպես նաեւ չզղջացող մեղավորների հավիտենական տանջանքը: Հետմահու գոյության մասին հնագույն գաղափարները շատ սահմանափակ էին ու չէին տալիս պատասխաններ մարդկային սրտի ամենաանհանգստացնող հարցերին: Հեթանոսները հավատում էին մահացածների մութ եւ մռայլ թագավորության գոյությանը, որտեղ հոգիներն ապրում էին աննպատակ ու անհույս գոյության մեջ: Հրեաները, չնայած ունեին Շեոլի՝ հարությունից առաջ հոգիների ժամանակավոր բնակավայրի հասկացությունը, բայց նրանք հստակ պատկերացում չունեին հետմահու անհատական ճակատագրի եւ հավերժական երանության

*բնույթի մասին: Հարության ու հավերժական կյանքի մասին Քրիստոսի հայտնությունը քրիստոնեական պատգամի հիմնական տարրն է, որը հավատացյալների համար առաջարկում է ապականության հաղթահարման եւ Աստծո հետ վերամիավորման հույս:*

*Իր վարդապետության մեջ Հիսուս Քրիստոսը ներկայացրեց սկզբունքորեն նոր ու կատարյալ բարոյական օրենք, որը դարձավ մարդկային կյանքի ուղեցույց: Նա պնդում էր, որ երկրային գոյությունը պարզապես նախապատրաստություն է երանությամբ լի հավերժական կյանքի համար: Ելնելով դրանից՝ մարդու գլխավոր նպատակը պետք է լինի ձգտել դեպի երկնային արքայությունը եւ հետեւել Նրա արդար սկզբունքներին: Դրա մուտքը բաց է բոլորի համար, ովքեր պատրաստ են ապաշխարել, հավատալ Քրիստոսին ու գնալ Նրա ցույց տված ճանապարհով: Բացի իր բանավոր քարոզից՝ Հիսուսը սրբության եւ բարոյական կատարելության կենդանի տիպար էր: Նրա կյանքը ոգեշնչող օրինակ դարձավ ոչ միայն իր ժամանակակիցների, այլեւ բոլոր հետագա սերունդների համար: Ոչ ոք, ոչ Քրիստոսից առաջ, ոչ էլ Նրանից հետո, չկարողացավ հասնել բարոյական մաքրության նման աստիճանի իր մեղսական էության ու մարդկային բնության սահմանափակության պատճառով: Այսպիսով, մարդկային ցեղի մեջ չկար իդեալական բարոյականության իրական չափանիշ, որը հնարավոր լիներ ընդօրինակել: Քրիստոսը ոչ միայն բացահայտեց Աստծո էությունը, այլեւ ցույց տվեց մարդու՝ որպես բարոյական աճի եւ կատարելագործման անսահմանափակ ներուժ ունեցող հոգեւոր էակի իրական կերպարը: Նա ոչ միայն հռչակեց բարոյական բարձրագույն սկզբունքները, այլեւ ցուցադրեց դրանց գործնական կիրառումն իր երկրային կյանքում: Նրա անձնուրաց սերը, կարեկցանքը, խոնարհությունը, արդարությունն ու անձնազոհությունը դարձան բարոյական օրենքի զորության եւ փոխակերպող ուժի կենդանի վկայությունը:*

*Հիսուս Քրիստոսը պարզապես Մովսեսի միջոցով տրված Հին Կտակարանի օրենքների թարգմանիչ կամ միջնորդ չէր։ Նրա առաքելությունն անհամեմատ ավելի բարձր էր. Նա դարձավ Նոր Կտակարանի Օրենսդիրն ու Հիմնադիրը՝ բացելով մարդկության համար նոր հոգեւոր ճանապարհը։ «Քո եղբայրների միջից քո Տեր Աստվածը ինձ նման մարգարե պիտի մեջտեղ հանի, նրա՛ն կլսեք» (Բ Օրին. 18.15)։ Մովսեսը եւ նրան հետեւող մարգարեները հին Օրենքի պահապաններն ու ուսուցիչներն էին։ Նրանց դերն էր՝ բացատրել եւ մեկնաբանել այս օրենքը՝ առաջնորդվելով ընտրյալ ժողովրդի պատմական զարգացումներով։ Նրանք միայն հստակեցրել են Օրենքի որոշ դրույթները՝ այն հարմարեցնելով փոփոխվող հանգամանքներին։ Հիսուսն ազդարարեց բոլորովին նոր Օրենք, ավելի վեհ ու ընդգրկուն, քան Մովսեսի օրենքն էր։ Նա դարձավ սիրո, ողորմության եւ ներողամտության վրա հիմնված նոր կրոնի Ստեղծողը, Հիմնադիրը։ «Ահավասիկ օրեր են գալու, – ասում է Տերը, – երբ նոր ուխտ եմ կապելու Իսրայելի տան հետ եւ Հուդայի երկրի տան հետ։ Ոչ թե ըստ այն ուխտի, որ մի օր ես ուխտեցի նրանց հայրերի հետ, երբ բռնեցի նրանց ձեռքից՝ դուրս հանելու համար նրանց Եգիպտացիների երկրից, բայց նրանք իմ ուխտին հավատարիմ չմնացին, ու ես նրանց մասին հոգ չտարա, – ասում է Տերը, "այլ ա՛յս ուխտն է, որ ուխտելու եմ Իսրայելի տան հետ այն օրերից հետո, – ասում է Տերը, – իմ օրենքները նրանց մտքի մեջ եմ դրոշմելու, դրանք նրանց սրտերի մեջ եմ գրելու, նրանց համար Աստված եմ լինելու, իսկ նրանք ինձ համար լինելու են ժողովուրդ» (Երեմ. 31.31-33)։ Հին Կտակարանի օրենքի առանձնահատկությունն էր, որ այն միայն նախապատրաստական փուլ էր Քրիստոսի բերած համապարփակ ու կատարյալ Հայտնության համար։*

*Նոր Կտակարանում Հիսուս Քրիստոսը տվել է նոր պատվիրաններ, որոնք քրիստոնեական բարոյականության հիմք են հանդիսա-*

ցել։ Նա Աստծո եւ մերձավորի հանդեպ սերը հռչակեց որպես բարձրագույն հոգեւոր արժեք՝ մարդկանցից պահանջելով կարեկցանք, ողորմություն ու խոնարհություն։ Այսպիսով, Հիսուսը դարձավ ոչ թե պարզապես մարգարե, այլ Նոր Կտակարանի Ստեղծողը, ով աշխարհ բերեց Աստծո եւ մարդու ճակատագրի մասին ճշմարիտ ու ամբողջական Հայտնությունը։ Փրկչի կողմից տրված Ավետարանի օրենքը, որպես Մովսեսի օրենքից ավելի բարձր եւ կատարյալ, բնականաբար, իր տեղը գրավեց։ Սակայն Մովսեսի օրենքի վերացումը չի նշանակում, որ Ավետարանը, փոխարինելով այս օրենքին, ամբողջովին ավերեց կամ ոչնչացրեց այն։ «Մի՛ կարծեք, թե Օրենքը կամ մարգարեներին ջնջելու եկա. չեկա ջնջելու, այլ՝ լրացնելու» (Մատթ. 5.17)։ Ինչ վերաբերում է Հին Կտակարանի բարոյական օրենքին, Հիսուս Քրիստոսը ոչ միայն կատարեց դրա պահանջները, այլեւ բացահայտեց (հատկապես՝ Լեռան քարոզում) Հին Կտակարանի իրական բարոյական ցուցումների խոր իմաստը։ Այսպիսով, Նրա վարդապետության մեջ բարոյական օրենքը ձեռք բերեց իր բովանդակության եւ ոգու ամբողջությունը։

Հիսուս Քրիստոսի Լեռան քարոզն ուղղեց մարդկանց միտքն ու սրտերը դեպի ոգեղենություն եւ Աստծո պաշտամունք։ Հիսուսը քարոզեց Երկնքի Արքայության մասին եւ մարդկանց կոչ արեց դառնալ դեպի Աստված, խոստովանել իրենց մեղքերն ու ձգտել կատարելության։ Նա ուսուցանեց, որ իսկական երանությունը նյութական հարստության եւ զորության մեջ չէ, այլ հոգեւոր վերափոխման ու Աստծո հետ մտերմության մեջ։ Լեռան քարոզում Հիսուսը տվեց ինը հրահանգներ, որոնք հայտնի են որպես «երանիներ»։ Այդ սկզբունքներով էր, որ Նա մարդկանց հրավիրեց ապրել այնպես, որպեսզի նրանք կարողանան կյանքում հասնել իրական բարիքների։ Լեռան քարոզը պարունակում է հիմնական սկզբունքներն ու արժեքները, որոնցով քրիստոնյաները պիտի առաջնորդ-

*վեն իրենց կյանքում։ Այն կոչ է անում սիրո, ողորմության, ներողամտության, արդարության եւ հոգեւոր զարգացման. դա նաեւ ցույց է տալիս, որ իսկական երանությունն ու երջանկությունը պետք է փնտրել ոչ թե արտաքին հանգամանքներում, այլ մարդու սրտում եւ վերաբերմունքում Աստծո ու մերձավորի հանդեպ։ Այն կոչ է անում հոգեւոր վերափոխման եւ իսկական երանության ձգտման՝ առ Աստված հավատքի եւ ուրիշներին ծառայելու միջոցով։*

*«Երանի՜ հոգով աղքատներին, որովհետեւ նրանցն է երկնքի արքայությունը» (Մատթ. 5.3)։ Ըստ Ս. Հովհան Ոսկեբերանի. «Ի՞նչ է նշանակում հոգով աղքատները՝ խոնարհ եւ սրտով փշրվածները»[1]։ Հոգով աղքատները մարդիկ են, ովքեր գիտակցում են իրենց մեղսականությունն ու անկատարությունը եւ խոնարհաբար ապավինում են Աստծո ողորմությանն ու շնորհին։ Հոգով աղքատները գնահատում են Երկնային Հոր հոգեւոր գանձերը եւ ձգտում իմանալ Նրա կամքն ու հետեւել Նրա պատվիրաններին։ Աստված գնահատում է մարդու խոնարհությունը եւ Իրեն մոտենալու անկեղծ ցանկությունը։ Հոգով աղքատները ձգտում են հոգեւոր աճի ու զարգացման՝ ընդունելով, որ փրկությունն Աստծո պարգեւ է, բայց նաեւ հասկանում են, որ պիտի ձգտեն աճել Քրիստոսի շնորհով եւ գիտությամբ։ Նրանք գիտակցում են, որ ոչ ոք կատարյալ չէ ու որ բոլոր մարդիկ ներման եւ քավության կարիք ունեն։ Հոգով աղքատությունը թուլություն չէ, այլ ուժ։ Դա այն գիտակցումն է, որ մարդը չի կարող փրկվել սեփական ջանքերով, այլ կարիք ունի Աստծո օգնությանը։ Դա խոնարհություն է եւ ապավինում Աստծո շնորհին։*

*«Երանի՜ սգավորներին, որովհետեւ նրանք պիտի մխիթարվեն» (Մատթ. 5.4)։ Սա նշանակում է, որ նրանք, ովքեր սգում են իրենց*

---

[1] A select library of the Nicene and Post-Nicene fathers of the Christian Church, Vol. X, New York, 1888, p. 92.

*մեղքերի ու աշխարհում տեղի ունեցող անարդարությունների համար, մխիթարություն կգտնեն Աստծուց։ Ըստ ս. Հովհան Ոսկեբերանի. «Եւ այստեղ էլ նա կրկին նշեց ոչ թե պարզապես բոլոր սգավորներին, այլ բոլոր նրանց, ովքեր դա անում են մեղքերի համար»[1]։ Իսկապես, աշխարհը լի է անարդարությամբ ու փորձություններով, եւ դա կարող է հանգեցնել խոր տրտմության։ Քրիստոնյայի վերաբերմունքը դժբախտությունների ու տառապանքների նկատմամբ հիմնված է այն գիտակցության վրա, որ դրանք աշխարհի եւ մարդկության մեղսականության հետեւանք են։ Քրիստոնեությունը սովորեցնում է, որ մարդն ապրում է մեղսական աշխարհում ու իր բնությամբ կատարյալ չէ։ Մեղքը տանում է դեպի տառապանք եւ դժբախտություն։ Քրիստոնյաները ճանաչում են իրենց մեղսականությունն ու իրենց մեղքերը խոստովանում Աստծուն՝ ներում ու փրկություն հայցելով։ Նրանք գիտակցում են, որ միայն Աստվածային օգնությունը կարող է ազատել իրենց մեղքերից եւ իմաստ ու հույս տալ իրենց գոյությանը։ Քրիստոնեությունը կոչ է անում ապաշխարել եւ դիմել Աստծուն՝ իսկական փրկություն գտնելու համար։ Ընդհանրապես, դժբախտությունների ու տառապանքների նկատմամբ քրիստոնեական վերաբերմունքը հիմնված է մարդու մեղսականության գիտակցման եւ Աստծո ողորմության ու օգնության ակնկալիքի վրա։ Քրիստոնեությունը սովորեցնում է, որ Աստծուն դիմելու միջոցով կարելի է հույս եւ փրկություն գտնել նույնիսկ ամենադժվար իրավիճակներում։ Այս պատվիրանն իր էությամբ տառապանքի միջոցով խոնարհության, ապաշխարության ու հոգեւոր աճի կոչ է։*

*«Երանի՜ հեզերին, որովհետեւ նրանք երկիրը պիտի ժառանգեն» (Մատթ. 5.5)։ Հեզությունը հոգեվիճակ է, որը բնութագրվում է*

---

[1] Ibid., p. 93.

*կյանքի տարբեր իրավիճակներում հանգստությամբ, ինքնատիրապետմամբ եւ համբերությամբ։ Ըստ ս. Բարսեղ Կեսարացու. «Հեզությունը առաքինություններից մեծագույնն է, ուստի այն դասվում է երանությունների շարքին»[1]։ Հեզ բնավորություն ունեցողներն անխռով են ու անտարբեր իրենց հասցեին ուղղված անարդարության կամ վիրավորանքների հանդեպ՝ լինի դա մարդկանցից, թե չար ուժերից։ Զայրույթով կամ դյուրագրգռությամբ արձագանքելու փոխարեն՝ նրանք մնում են անվրդով եւ սիրալիր։ Հեզ մարդը միշտ պատրաստ է ներել վիրավորողին ու բարիք մաղթել նրան։ Հեզությունը չի նշանակում թուլություն կամ վախկոտություն։ Դա ներքին ուժի եւ հոգեւոր հասունության նշան է։ Հեզ մարդն ունակ է հանգստություն ու մտքի պարզություն պահպանել նույնիսկ ամենադժվար եւ տհաճ իրավիճակներում։ Նա չի տրվում կրքերին ու հույզերին, այլ առաջնորդվում է բանականությամբ եւ սիրով։ Քրիստոնեական հեզությունը ոչ միայն անձնական առաքինություն է, այլեւ սոցիալական սկզբունք։ Հեզ մարդը կարողանում է հաշտեցնել պատերազմող կողմերին, մարել հակամարտություններն ու խաղաղություն բերել հասարակությանը։ Հեզությունը զարգացնելու համար հարկավոր է անընդհատ աշխատել սեփական թերությունների վրա։ Կարեւոր է սովորել կառավարել զգացմունքները, հաղթահարել հպարտությունը, գոռոզությունն ու ինքնասիրությունը։ Սա հեշտ ճանապարհ չէ, բայց տանում է դեպի հոգու ներքին ներդաշնակություն եւ խաղաղություն։ Իսկական հեզությունը հնարավոր է միայն այն դեպքում, երբ մարդը լիովին ապավինում ու հնազանդվում է Տիրոջը եւ ուժ է փնտրում Նրանից։ Նա հավատում է, որ ամեն ինչ կատարվում է Աստծո կամքի համաձայն, եւ ընդունում է ամեն ինչ այն հեզությամբ ու խոնարհությամբ։ Նման*

[1] Симфония по творениям святителя Василия Великого, с. 183.

*մարդը գիտի, որ նույնիսկ ամենադժվար իրավիճակներում Աստված իրեն չի թողնի եւ կօգնի պատվով դուրս գալ դրանցից։*

*«Երանի՜ նրանց, որ քաղցն ու ծարավն ունեն արդարության, որովհետեւ նրանք պիտի հագենան» (Մատթ. 5.6)։ Քրիստոնեության մեջ «արդարություն» հասկացությունը հատուկ նշանակություն ունի եւ անքակտելիորեն կապված է Աստծո ու Նրա կամքի հետ։ Այստեղ Հիսուս Քրիստոսն արդար է կոչում նրան, ով ձգտում է կատարել Աստծո պատվիրանները՝ պահպանելով մերձավորի եւ Աստծո հանդեպ սիրո զգացումը։ Այս համատեքստում «նրանք, ովքեր քաղցած ու ծարավ են արդարության», այն մարդիկ են, ովքեր անկեղծորեն եւ խորապես ցանկանում են կատարել Աստծո կամքն ու հետեւել Նրա պատվիրաններին։ Նրանք պատրաստ են ջանքեր գործադրել արդարության հասնելու եւ աստվածային սկզբունքների համաձայն ապրելու համար։ Ըստ ս. Աթանաս Ալեքսանդրացու. «Արդարության քաղց ու ծարավ ունեցողներ Նա կոչում է նրանց, ովքեր արդարություն են անում նախանձախնդրությամբ ու մեծ ցանկությամբ։ Նրանք, ինչպես ասվում է, այստեղ էլ կհագենան, քանի որ քչով են բավարարվում. եւ շատ ավելին ապագա կյանքում, քանի որ նրանք միշտ կլինեն Քրիստոսի հետ, որտեղ ոչ վիշտ կա, ոչ հառաչ»[1]։ Արդարության քաղց ու ծարավ ունեցողները գիտակցում են, որ միայն Աստված է ճշմարիտ արդարության եւ բարության աղբյուրը։ Նրանք Աստծո օրենքն ու պատվիրանները համարում են իրենց կյանքի բացարձակ չափանիշը եւ ձգտում են հետեւել դրանց նույնիսկ ամենադժվար հանգամանքներում։ Նրանք պարզապես չեն հնազանդվում պատվիրաններին պատժի վախից կամ վարձատրության ակնկալիքով, այլ անկեղծորեն սի-*

---

[1] Творения иже во святых отца нашего Афанасия Великого, Часть 4-я, Свято-Троицкая Сергиева лавра, 1903, с. 427.

*րում են Աստծուն եւ ձգտում են հաճեցնել Նրան։ Ճշմարտությանը հետեւելը հաճախ հղի է դժվարություններով ու փորձություններով։ Ճշմարտության քաղց ու ծարավ ունեցողները կարող են բախվել արտաքին աշխարհի եւ նույնիսկ սիրելիների հակառակության, եթե նրանք չեն հասկանում կամ չեն կիսում իրենց համոզմունքները։ Այնուամենայնիվ, նրանք հավատարիմ են մնում իրենց սկզբունքներին եւ շարունակում են արդարություն փնտրել՝ հավատալով, որ դա իրենց իսկական երանություն ու հավերժական կյանք կբերի։*

*«Երանի՜ ողորմածներին, որովհետեւ նրանք ողորմություն պիտի գտնեն» (Մատթ. 5.7)։ Ըստ ս. Գրիգոր Նազիանզացու. «Տեսնում ես, որ երանիների մեջ ողորմածությունը վերջին տեղը չի զբաղեցնում»*[1]*։ Ողորմածությունը պարզապես բարության եւ կարեկցանքի դրսեւորում չէ այլ մարդկանց նկատմամբ այն Աստվածային սիրո արտացոլումն է, որը մարդկանց չի բաժանում բարեկամների ու թշնամիների, արդարների եւ մեղավորների։ Արեգակի պես Աստված իր լույսով լուսավորում է բոլորին առանց բացառության, անձրեւի պես բոլորին ոռոգում է իր սիրով եւ բարեգթությամբ առանց բացառության։ Ուստի ողորմած լինելը նշանակում է ոչ միայն բարի գործեր անել, այլեւ սրտում ունենալ Աստվածային ողորմածության արտացոլումը։ Խոսքը ոչ միայն վարքագծի, այլեւ ներքին որակի մասին է, որը դրսեւորվում է նրանով, թե ինչպես է մարդը վերաբերվում այլ մարդկանց, աշխարհին եւ Աստծուն։ Ողորմածությունը պարզապես զգացմունք չէ, դա գործողություն է։ Դա պատրաստակամություն է՝ օգնության հասնելու կարիքավորներին, լինելու համբերատար ու հասկանալու այլ մարդկանց թերությունները։ Ողորմածությունը թուլություն չէ, այլ ուժ, որը թույլ է տալիս մարդուն հաղթահարել զայրույթը, ատելությունն ու վրեժը։*

[1] Симфония по творениям святителя Григория Богослова, с. 284.

*Այն պարզապես արարք չէ, այն ապրելակերպ է։ Դա սիրո, կարեկցանքի եւ ուրիշներին օգնելու ճանապարհ է, որը տանում է դեպի երանություն Երկնքի Արքայությունում։*

*«Երանի՜ նրանց, որ սրտով մաքուր են, որովհետեւ նրանք Աստծուն պիտի տեսնեն» (Մատթ. 5.8)։ Աստծուն տեսնելը սրտի մաքրություն է պահանջում։ Ըստ ս. Աթանաս Ալեքսանդրացու. «Նա, ով մաքրել է իր սիրտն ամեն կրքոտ տրամադրությունից, իր իսկ գեղեցկության մեջ տեսնում է Աստծո բնության պատկերը։ Իսկ հոգեւոր մաքրությունը բավարար է Աստծուն ինչպես հայելու մեջ պատկերելու համար»[1]։ Մաքուր սիրտը զերծ է մեղսական մտքերից, կրքերից ու գործերից։ Քրիստոնեական ուսմունքի համաձայն՝ սրտի մաքրությունը ձեռք է բերվում արդար գործերով, աղոթքով ու ապաշխարությամբ։ Երբ մարդը ձգտում է կատարելության, նրա սիրտն աստիճանաբար մաքրվում է մեղսական հակումներից եւ ունակ է դառնում՝ ընկալելու Սուրբ Հոգու շնորհը։ Մաքուր սիրտը դառնում է Աստծո տաճար, եւ մարդը կարող է ճանաչել իրական երանությունը։ Սակայն սրտի մաքրությունը ստատիկ չէ, այն պահանջում է մշտական պահպանում։ Սրտի մաքրության հասած մարդը պետք է զգոն լինի ու թույլ չտա, որ մեղսական մտքերը եւ ցանկությունները պղծեն իր ներաշխարհը։ Դրա համար նա պետք է անընդհատ աղոթի, ուսումնասիրի Սուրբ Գիրքն ու հետեւի Աստծո պատվիրաններին։ Կարեւոր է նաեւ կանոնավոր կերպով խոստովանել եւ հաղորդություն ստանալ՝ մեղքերից մաքրվելու ու Աստծո հետ կապն ամրապնդելու համար։ Սրտի մաքրությունը հոգեւոր կատարելության եւ հոգու փրկության հիմքն է։ Երբ մարդու սիրտը մաքուր է, նա կարող է անմիջականորեն տեսնել Աստծուն, ճանաչել Նրա կամքն ու ապրել դրան համապատասխան։ Նա կարողա-*

---

[1] Творения иже во святых отца нашего Афанасия Великого, Часть 4-я, с. 427.

նում է սիրել իր մերձավորներին, ինչպես ինքն իրեն եւ անշահախնդրորեն բարին գործել:

«Երանի՜ խաղաղարարներին, որովհետեւ նրանք Աստծու որդիներ պիտի կոչվեն» (Մատթ. 5.9): Ըստ ս. Հովհան Ոսկեբերանի. «Այստեղ Քրիստոսը ոչ միայն դատապարտում է փոխադարձ անհամաձայնությունն ու ատելությունը մարդկանց միջեւ, այլեւ պահանջում է ավելին. այն է՝ հաշտեցնել ուրիշների տարաձայնությունները»[1]: Աստծո Միածին Որդի Հիսուս Քրիստոսի գործն էր՝ միավորել բաժանվածներին ու հաշտեցնել պատերազմողներին: Նա եկավ երկիր՝ մարդկանց Աստծո եւ միմյանց հետ հաշտեցնելու համար: Խաղաղարարները, ովքեր ձգտում են ընդօրինակել Քրիստոսին, կոչվում են նաեւ Աստծո որդիներ ու դուստրեր: Խաղաղարար լինելը նշանակում է ոչ միայն խաղաղության մեջ ապրել ուրիշների հետ, այլեւ հաշտեցնել նրանց, ովքեր վիճում են, լուծել հակամարտությունները եւ նպաստել խաղաղությանն ու ներդաշնակությանը: Խաղաղարարները նաեւ մարդկանց սովորեցնում են Աստծո սիրո եւ ողորմության մասին ու առաջնորդում են դեպի Աստված: Նրանք Աստծո որդիները եւ դուստրերն են, քանի որ ընդօրինակում են Քրիստոսին ու շարունակում Նրա հաշտեցման աշխատանքը: Խաղաղարարները կարեւոր դեր են խաղում Աստծո Թագավորությունը երկրի վրա կառուցելու գործում: Նրանք օգնում են մարդկանց մեջ տարածել Աստծո սերն ու խաղաղությունը եւ ավելի մոտեցնել այն օրը, երբ բոլոր մարդիկ կապրեն խաղաղության ու ներդաշնակության մեջ: Խաղաղարարները խաղաղեցնում են ոչ միայն խոսքով, այլեւ գործով: Նրանք պատրաստ են զոհաբերությունների գնալ հանուն խաղաղության, նույնիսկ եթե դա նշա-

[1] A select library of the Nicene and Post-Nicene fathers of the Christian Church, Vol. X, p. 94.

*նակում է վտանգի կամ անհարմարության ենթարկել իրենց: Խաղաղարարները չեն դատում կամ քննադատում ուրիշներին՝ ձգտելով հասկանալ ու ընդունել մարդկանց, նույնիսկ եթե նրանք համաձայն չեն իրենց հետ: Խաղաղարարները համբերատար եւ համառ են խաղաղության հասնելու ջանքերում: Նրանք չեն հանձնվում, նույնիսկ եթե դժվարությունների կամ անհաջողությունների են հանդիպում: Խաղաղարարները հույսի եւ ոգեշնչման աղբյուր են ուրիշների համար: Նրանք ցույց են տալիս, որ խաղաղությունը հնարավոր է նույնիսկ ամենադժվար իրավիճակներում:*

*«Երանի՜ նրանց, որ հալածվում են արդարության համար, որովհետեւ նրանցն է երկնքի արքայությունը» (Մատթ. 5.10): Ըստ ս. Հովհան Ոսկեբերանի. «Այսինքն՝ հանուն առաքինության, ուրիշներին տրված աջակցության ու աստվածապաշտության համար: Նրա սովորությունն է միշտ արդարության անունով կոչել հոգու ողջ գործնական իմաստությունը»*[1]*: Հիսուսն իր հետեւորդներին խոստանում է վարձատրություն երկնքում նրանց հավատարմության եւ նահատակության համար: Հիսուսը խոսում է Երկնային Հոր կողմից տրված պարգեւի մասին, որը մարդը պետք է ստանա հանդերձյալ կյանքում: Այս պարգեւը կարելի է նույնացնել Աստծո Արքայության հետ՝ իր վախճանաբանական ըմբռնմամբ, այսինքն՝ արդարների հետմահու երանությունը: Երկնքում մեծ պարգեւներ են սպասում նրանց, ովքեր համարձակորեն քայլում են ճշմարտության ճանապարհով: Իրենց հավատքի պատճառով հալածված քրիստոնյաների համար բաց են հավերժության դռները, ուր նրանց սպասում են արդարության ու փառքի պսակները: Երկրի վրա նրանք կարող են հալածվել, հետապնդվել եւ դատապարտվել, բայց երկնքում նրանց մեծ վարձատրություն է սպասում: Նրանք կկանգ-*

---

[1] Ibid., p. 95.

*նեն Աստծո գահի առջեւ՝ որպես ճշմարիտ հավատքի վկաներ։ Երկրի վրա նրանց կատարած յուրաքանչյուր քայլ, յուրաքանչյուր արցունք ու յուրաքանչյուր աղոթք անդառնալիորեն կորած չեն մնա։ Նրանց հոգիները կլցվեն անսահման երանությամբ, եւ նրանք կվայելեն Աստծո մերձավորությունն սերը։ Նրանց կտրվի մուտք գործել Նոր Երուսաղեմ քաղաք, ուր նրանք կբնակվեն հավիտյան եւ կվայելեն բոլոր այն բարիքները, որ չէին էլ կարող պատկերացնել։ Արդարների տառապանքն այստեղ՝ երկրի վրա, ժամանակավոր է, բայց հավերժությունը Աստծո հետ՝ հավիտենական։*

*«Երանի՜ է ձեզ, երբ ձեզ նախատեն ու հալածեն եւ իմ պատճառով ձեր մասին ամեն տեսակ չար խոսք՝ սուտ ասեն։ Ցնծացե՛ք եւ ուրախացե՛ք, որովհետեւ երկնքում ձեր վարձը շատ է, քանի որ այսպես հալածեցին մարգարեներին, որոնք ձեզնից առաջ են եղել»*[1] *(Մատթ. 5.11-12)։ Ըստ ս. Հովհան Ոսկեբերանի. «Բայց չլինի, որ մտածես, թե միայն հալածվելու փաստը մարդկանց օրհնյալ է դարձնում։ Նա երկու սահմանափակում է դրել. երբ դա Նրա համար է, եւ երբ ասվածները սուտ են, որովհետեւ առանց դրանց, նա, ով հալածվում է, հեռու է օրհնյալ լինելուց ու դժբախտ է»։ Մարդկանց մեծ մասը կարծում է, թե պետք է խուսափել հալածանքից ու նախատինքից, բայց Քրիստոսն ասաց, որ նման վիճակներում է, որ մարդը կարող է իսկական երանություն գտնել։ Սրա պատճառներից մեկն էլ այն է, որ հանուն Քրիստոսի հալածվելով՝ մարդը նմանվում է Նրան։ Աստծո Որդին եւս հալածվել ու հայհոյվել է, եւ քրիստոնյաները պիտի հետեւեն Նրա օրինակին։ Երբ մենք հալածվում ենք մեր հավատքի համար, պետք է հիշենք, որ մենք միայնակ չենք, եւ որ նույն փորձությունների միջով անցավ Քրիստոսն ինքը։*

---

[1] Ibid.

*Հիսուս Քրիստոսի երանության պատվիրանները չեն սահմանափակվում որոշակի ժամանակով կամ դարաշրջանով, քանզի արտահայտում են քրիստոնեական հավատքի բուն էությունը: Լինելով Աստծո ճշմարտության դրսեւորումը՝ քրիստոնեական հավատքն անխուսափելիորեն հանդիպում է չարի ուժերի հակառակությանը, որոնք հակադրվում են ճշմարտությանը: Բարու եւ չարի միջեւ այս համաշխարհային պատերազմում քրիստոնյաները կոչված են՝ բռնելու բարու կողմը, նույնիսկ եթե դա կարող է հանգեցնել հալածանքի, տառապանքի ու անգամ նահատակության: Քրիստոսը զգուշացրեց իր հետեւորդներին, որ աշխարհն ատելու է նրանց, քանի որ ատում է Իրեն: Այնուամենայնիվ, Նա նաեւ խոստացավ նրանց վարձատրություն երկնքում՝ նրանց հավատարմության եւ հաստատակամության համար: Այս պարգեւը ներկայացվում է ոչ թե որպես վերացական հասկացություն կամ հեռավոր խոստում, այլ որպես Ինքը՝ Հիսուս Քրիստոսը: Նա է, ով աղբյուրն ու մարմնավորումն է բոլոր օրհնությունների, որոնք ուղեկցում են Երանիներից յուրաքանչյուրին: Դրանք այսօր էլ մեծ նշանակություն ունեն յուրաքանչյուր քրիստոնյայի համար՝ անկախ նրա կյանքի ժամանակից եւ վայրից: Դրանք կոչ են անում հաստատակամություն ունենալ հավատքի մեջ, պայքարել չարի դեմ ու հետապնդել միակ բարին, որն իսկապես կարող է բավարարել մարդու սիրտը՝ հաղորդություն Աստծո Որդի Հիսուս Քրիստոսի հետ:*

*«Դո՛ւք եք երկրի աղը» (Մատթ. 5.13): Ըստ ս. Հովհան Ոսկեբերանի. «Դուք եք երկրի աղը խոսքերով Քրիստոսը ցույց տվեց, որ ողջ մարդկությունը խավարած ու վնասված է մեղքերից: Ահա թե ինչու Նա աշակերտներից պահանջում է այնպիսի առաքինություններ, որոնք հատկապես անհրաժեշտ եւ օգտակար էին ուրիշների ուղղման համար: Իրականում նա, ով հեզ է, հանգիստ, ողորմած ու արդար է, միայն իր համար լավ գործեր չի անում, այլ փորձում է*

*բարիքի այս լավ աղբյուրները թափել ուրիշների օգտին: Նմանապես՝ սրտով մաքուր եւ խաղաղասեր ու ճշմարտության համար հալածվողն ապրում է ընդհանուրի բարօրության համար»*[1]:

*Ինչպես աղը պաշտպանում է սննդամթերքը նեխումից, այնպես էլ քրիստոնյաները պարտավոր են իրենց արարքներով, վարքագծով եւ օրինակով պաշտպանել հասարակությունը բարոյական քայքայումից ու այլասերումից՝ նպաստելով դրա հոգեւոր առողջությանը: Քրիստոնյաները պետք է կանխեն արատների, հանցագործությունների եւ անբարոյականության աճն ու տարածումը հասարակության մեջ: Աղոթքը, անկեղծ հավատքը եւ քրիստոնյաների մաքուր ապրելակերպը նպաստում են հասարակության բարոյական մաքրագործմանը: Քրիստոնեական ազդեցությունը տարածվում է ոչ միայն անհատների, այլեւ ողջ սոցիալական միջավայրի վրա: Աղով համեմված բարձրորակ արտադրանքը նուրբ համ է ստանում: Նման մի բան տեղի է ունենում քրիստոնեական առաքինությունների դեպքում. դրանք բարելավում են կյանքի որակը, բերում են իմաստ ու իսկական բավարարվածություն: Քրիստոնյաները պետք է օրինակելի լինեն՝ ցույց տալով բարեպաշտ կյանքի բերկրանքը եւ լիությունը: Ինչպես աղն օգտագործվում է փոքր քանակությամբ ուտելիքներին համ ավելացնելու համար, այնպես էլ քրիստոնյաները չպետք է փնտրեն հանրային ճանաչում կամ համբավ: Նրանց ազդեցությունը պետք է լինի նուրբ, բայց զգալի՝ թափանցելով հասարակության մեջ այնպես, ինչպես աղը ներթափանցում է սննդի մեջ: Ժամանակակից աշխարհում, որտեղ մեղքն ու անբարոյականությունը ծաղկում են, քրիստոնյաների դերը որպես «աղ» հատկապես կարեւոր է: Նրանք կոչված են՝ դիմակայելու բարոյական քայքայմանը եւ տարածելու Աստվածային շնորհը, որը*

---

[1] Ibid. p. 97.

*նորոգում ու բուժում է հասարակությունը։ Իրենց գործունեությամբ, վարքով եւ անսասան հավատքով քրիստոնյաները կարող են աշխարհը փրկել բարոյական աղետից՝ ուղղորդելով դեպի առաքինության ու հոգեւոր կատարելագործման ուղի։*

*«Դո՛ւք եք աշխարհի լույսը» (Մատթ. 5.14)։ Ըստ ս. Հովհան Ոսկեբերանի. «Դրանից հետո Քրիստոսն անցնում է մեկ այլ, ավելի բարձր համեմատության՝ «դուք եք», ասում է Նա, «աշխարհի լույսը»։ Կրկին՝ «աշխարհի», ոչ թե մեկ ժողովրդի, ոչ քսան քաղաքի, այլ ամբողջ տիեզերքի հոգեւոր լույսը, ինչպես հոգեւոր աղը, որը գերազանցում է տեսանելի արեւի ճառագայթները։ Սկզբում նրանց անվանեց աղ, իսկ հետո՝ լույս, որպեսզի իմանաք, թե որքան օգուտ է գալիս խիստ խոսքերից եւ որքան օգուտ՝ մաքուր վարդապետությունից։ Այն զսպում է ու թույլ չի տալիս շեղվել, այլ ուղղորդելով դեպի առաքինությունը՝ դարձնում է ուշադիր»[1]։ Կա միայն մեկ ճշմարիտ լույս, որը լուսավորում է յուրաքանչյուր մարդու՝ Տերն Ինքն է, ինչպես Ինքն է ասում իր մասին. «Ես եմ աշխարհի լույսը» (Հովհ. 8.12)։ Բայց ինչպես արեգակն է լուսավորում լուսինը, Տերը լուսավորում է առաքյալներին, իսկ նրանց միջոցով՝ ողջ աշխարհն ու բոլոր մարդկանց՝ Իր հոգեւոր լույսով։ Մարգարեներն ուղարկվել են առանձին ժողովրդի մոտ, իսկ առաքյալներն ուղարկվել են ամբողջ աշխարհին, ուստի նրանց լույսը չի սահմանափակվում միայն մեկ ժողովրդով, այլ տարածվում է բոլոր ազգերի վրա։ Ինչպես արեգակի լույսը ցրում է խավարը, այնպես էլ առաքյալները, Ավետարանը քարոզելով, ցրեցին հեթանոսության ու կռապաշտության խավարը։ Կարեւոր է նշել, որ Տիրոջ լույսը ոչ միայն լուսավորում է մեզ, այլեւ հնարավորություն է տալիս լույս լինել ուրիշների համար։ Երբ մենք ընդունում ենք այս լույսը, այն մեզ ոգեշնչում է՝ բա-*

[1] Ibid.

*րություն եւ ողորմություն տարածելու մեր շուրջը: Մեզանից յուրաքանչյուրը կարող է լույս լինել այնտեղ, որտեղ հույս ու օգնություն է անհրաժեշտ: Մենք կարող ենք նմանվել առաքյալներին՝ լույս եւ ուրախություն բերելով ուրիշներին: Երբ մենք փնտրում ենք Նրա լույսը, Նա լուսավորում է մեր ճանապարհը եւ օգնում մեզ՝ ճիշտ որոշումներ կայացնելու: Մեր կյանքում կարող են լինել կասկածի ու անորոշության պահեր, բայց երբ մենք դիմում ենք Տիրոջը եւ խնդրում Նրա լույսը, Նա առաջնորդում է մեզ ճիշտ ճանապարհով: Ուստի, օրհնված լինելով Տիրոջ լույսով, մենք պետք է ոչ միայն ընդունենք այս լույսը, այլեւ կիսենք այն ուրիշների հետ: Մեր կյանքը պիտի լինի Նրա սիրո եւ շնորհի վկայությունը՝ ձգելով ուրիշներին դեպի լույսի ու ճշմարտության աղբյուրը:*

*«Մի՛ կարծեք, թե Օրենքը կամ մարգարեներին ջնջելու եկա. չեկա ջնջելու, այլ՝ լրացնելու» (Մատթ. 5.17): Հիսուս Քրիստոսը կանխատեսում է հրեաների հնարավոր վախերը եւ թյուրընկալումները, ովքեր նախանձախնդրորեն կառչում են Մովսեսի Հին Կտակարանի օրենքից եւ մարգարեություններից: Նա հանգստացնում է նրանց՝ վստահեցնելով, որ մտադիր չէ ջնջել կամ հակասել Օրենքին ու մարգարեներին, այլ ընդհակառակը, եկել է դրանք լրացնելու եւ բացահայտելու դրանց իրական իմաստը: Ըստ ս. Հովհան Ոսկեբերանի. «Այսպիսով, քանի որ Քրիստոսը չի եկել քահանայական ցեղից, եւ այն, ինչ նա մտադիր էր ներկայացնել, լրացում էր, որը, սակայն, ոչ թե նվազեցրեց առաքինությունը, այլ բարձրացրեց այն, ապա նա կանխատեսեց, որ երկուսն էլ կարող են շփոթեցնել նրանց, եւ, հետեւաբար, նախկինում, ուրվագծելով իր հրաշալի օրենքները՝ նա հերքում է այն կասկածները, որոնք կարող էին թաքնված լինել նրանց մտքում: Ի՞նչ կարող են լինել նրանց կասկածներն ու առարկությունները: Նրանք կարծում էին, որ Քրիս-*

*տոսը դա ասում է օրենքի հնագույն որոշումները ոչնչացնելու համար։ Հենց այս կասկածն է Նա հեռացնում»*[1]*։*

*«Օրենք» եզրույթն այստեղ վերաբերում է ոչ միայն Մովսեսի հինգ գրքերին, այլեւ Հին Կտակարանի բոլոր գրքերին, քանի որ դրանք բոլորը գրվել են ի վերուստ ներշնչված մարգարեների կողմից։ Այսպիսով, Օրենքը եւ Մարգարեները ներկայացնում են Հին Կտակարանի բոլոր Գրքերի ամբողջությունը։ Այս համատեքստում «ջնջել» նշանակում է մերժել Աստծո կամքը, ինչպես այն արտահայտված է Օրենքում ու մարգարեություններում։ Քրիստոսը շեշտում է, որ իր առաքելությունը ոչ թե դա է, այլ աստվածային պահանջների լրացումը։ «Լրացնել օրենքը» նշանակում է առաջնորդվել նրա պատվիրաններով եւ հրահանգներով, իսկ «մարգարեներին լրացնել» նշանակում է կյանքում գիտակցել այն, ինչ նրանք կանխագուշակել ու հուշակել են։ Այսպիսով, Քրիստոսի գալուստը երկիր նախատեսված էր՝ դառնալու Աստծո Հին Կտակարանի խոսքի կենդանի մարմնացումը, բացահայտելու դրա իրական իմաստը եւ զորությունը, ցույց տալու ողջ Հին Կտակարանի իրական էությունն ու ոգին։ Նա Օրենքը կատարում էր ոչ միայն ուղիղ իմաստով՝ հետեւելով դրա պահանջներին, այլեւ ավելի խորը՝ լրացնելով ու ընդլայնելով դրա ուսմունքը։ Քրիստոսը ոչ թե վերացրեց Օրենքը, այլ, ընդհակառակը, տվեց նրան կատարյալ եւ վերջնական բնույթ՝ մարմնավորելով նրա բարձրագույն սկզբունքներն ու իդեալները։ Ավելին, Քրիստոսը ոչ միայն կատարեց Օրենքը, այլեւ հիմք դրեց Նոր Կտակարանին, որը, սակայն, չէր հակասում Հնին, այլ նրա տրամաբանական զարգացումն էր։ Նոր Կտակարանը Հին Կտակարանում արտահայտված սկզբունքների ընդլայնումը եւ խորացումն էր՝ կենտրոնանալով սիրո, ողորմության ու ներման վրա։*

[1] Ibid. p. 103.

*Այսպիսով, Քրիստոսի խոսքերը, որ Նա եկել է կատարելու Օրենքը եւ Մարգարեները, վկայում են Հին Կտակարանի հանդեպ Նրա խոր հարգանքի ու դրա աստվածային ծագման ճանաչման մասին: Նրա առաքելությունն էր՝ բացահայտել Օրենքի եւ մարգարեության իրական էությունն ու զորությունը, ինչպես նաեւ պատրաստել մարդկությանը երկրի վրա Աստծո արքայության գալուն:*

*«Եթե մեկը քեզ հետ խնդիր ունի եւ քեզ դատի է կանչում, մինչ նրա հետ դեռ ճանապարհին ես, եղի՛ր իրավախոհ կանխավ. գուցէ նա քեզ դատավորին հանձնի, եւ դատավորը՝ դահճին, ու դու բանտ նետվես» (Մատթ. 5.25): Տերը շտապում է կանչել մեզ անհապաղ հաշտության մեր թշնամիների հետ, մինչ մենք երկրային կյանքում ենք: Ըստ ս. Հովհան Ոսկեբերանի. «Մի՛ ասա՝ ի՞նչ անեմ, եթե ինձ նեղացնում են, ունեցվածքս խլում են ու քարշ են տալիս դատարան: Նույնիսկ այս դեպքում Քրիստոսն արգելում է թշնամություն կրել՝ խլելով դրա համար որեւէ պատճառ կամ պատրվակ: Քանի որ այս պատվիրանը հատկապես կարեւոր էր, Տերը համոզում է մեզ կատարել այն՝ մատնանշելով ոչ թե ապագա, այլ ներկա օգուտները, որոնք ավելի հավանական է, որ զսպեն կոպիտ մարդկանց, քան ապագայի խոստումները: Դու ասում ես՝ նա ինձնից ուժեղ է եւ նեղացնում է ինձ: Բայց մի՞թե նա քեզ ավելի մեծ վնաս չի պատճառի, եթե դու չհաշտվես նրա հետ ու ստիպված լինես բանտ գնալ»[1]: Այս ժամանակավոր կյանքը, որի միջով անցնում են բոլոր հոգիները՝ արդար եւ չար, որոշիչ է հարաբերություններն ուղղելու համար: Տերը գիտի, թե ինչ վտանգի ենք ենթարկվում, եթե պատերազմող կողմերից մեկը մահանում է առանց ապաշխարության ու հաշտության: Հետմահու կյանքում, նույնիսկ հաշտվելու փոխադարձ ցանկության դեպքում, դա այլեւս հնարավոր չի լինի հոգի-*

---

[1] Ibid. p. 113.

*ների բաժանման պատճառով։ Եթե կյանքի ճանապարհին մենք բաց թողնենք հնարավորությունը՝ հաշտություն կնքելու այն մարդու հետ, ում վիրավորել ենք, եւ մեր կյանքի վերջում այդպես ներկայանանք Դատավոր Քրիստոսին, ապա մեր կողմից վիրավորվածը կհանձնի մեզ Դատավորին, իսկ Նա իր հերթին Իր ծառային՝ պատժի անողորմ հրեշտակին, որը մեզ նետելու է գեհենի զնդան։ Հարկ է հիշել, որ գեհենը, որը հիշատակվում է Ավետարանում, սոսկ խորհրդանշական տանջանքի վայր չէ, այլ իրական եւ սարսափելի տեղ, որը սպասում է չզղջացող մեղավորներին։ Դա կրակով ու ծծումբով լցված վայր է, որտեղ որդերը չեն մեռնում եւ կրակը չի հանգչում (Մարկ. 9.43-48)։ Այս սարսափելի ճակատագրից խուսափելու համար Տերը հորդորում է մեզ՝ խաղաղություն հաստատել մեր թշնամիների հետ դեռ երկրային կյանքում։ Հաշտություն՝ չի նշանակում արդարացնել նրանց գործողությունները կամ ընդունել անարդարություն։ Դա ավելի շուտ ողորմության եւ ներողամտության արարք է, որն ազատում է ե՛ւ մեզ, ե՛ւ մեր ախոյաններին թշնամության բեռից։ Դրանով մենք ոչ միայն կատարում ենք Քրիստոսի պատվիրանը, այլեւ ձեռք ենք բերում հոգեւոր խաղաղություն՝ ձերբազատվելով դժգոհության ու ատելության կործանարար հետեւանքներից։ Մեր թշնամիների հետ հաշտվելը մեզ համար ճանապարհ է բացում դեպի հոգեւոր ազատություն եւ փրկություն։*

*«Իսկ ես ձեզ ասում եմ. ամեն մարդ, որ կնոջ նայում է նրան ցանկանալու համար, արդեն շնացավ նրա հետ իր սրտում» (Մատթ. 5.28)։ Ինչպես գոյություն ունի մարմնի շնությունը, այնպես էլ պետք է գոյություն ունենա դրա հակառակ առաքինությունը՝ սրտի կուսությունը։ Մենք կանչված ենք՝ պաշտպանելու մեր սրտերը ցանկացած մարմնական ցանկությունից ու պիղծ մտքերից, որոնք ապականում են սրտի մաքրությունը։ Բայց ինչպե՞ս դիմակայել անբարո մտքերի ակամա ներխուժմանը։ Ըստ ս. Աթանաս*

*Ալեքսանդրացու. «Շնություն է գործում կնոջ հետ իր սրտում նա, ով դրան համաձայն է, բայց նրան խանգարում է դա անել կամ տեղը, կամ ժամանակը, կամ վախը քաղաքացիական օրենքներից: Այն, որ շատերը, առանց չար գործի, պատժվում են որպես շնացողներ, դժվար չէ որեւէ մեկի համար ստուգել Հոլոֆեռնեսի օրինակով: Երբ նա շտապում էր կատարել ատելի արարքը, ապա Յուդիթը, որպես արդարության օրենք, հանեց իր սուրը եւ կտրեց նրա գլուխը, օգնություն ու պաշտպանություն կանչելով Աստծուն, որպես օրենքի եւ ողջախոհության աջակից: Այսպես եւ երկու երեցները, ովքեր ասացին Շուշանին. «Մենք ցանկանում ենք քեզ» [Դան. 13.20], թեեւ նրանք դա չարեցին, այնուամենայնիվ, պատժվեցին եւ մահացան որպես շնացողներ: Ուրեմն, եթէ մեկը հիմա էլ այսպիսին է, այսինքն՝ ցանկասէր, անժուժկալ, ուրիշի կանանց տենչացող. ապա նա պոռնկություն է անում իր մտքերում: Իսկ ով տիրում է կրքերին, իրեն մաքուր պահում պարտականությունների խախտումից ու պղծությունից, նա շնացող չէ, այլ կրքերի տիրակալը: Նա Աստծո երկյուղով դադարեցնում է վավաշոտության արագությունը, ինչպես ամուր եւ անսասան ժայռը կանխում է ծովի ալիքը»[1]: Մենք պետք է մեր միտքն ու սրտերը սնենք Աստծո խոսքով եւ աղոթքով: Աստվածաշունչ կարդալն ու Երկնային Հոր հետ հաղորդակցվելը փորձված օգնականներ են մարմնական գայթակղությունների դեմ պայքարում: Բացի այդ, մենք պետք է սահմանափակենք մեր հայացքներն ու շփումները՝ խուսափելով անմաքուր մտքեր առաջացնող իրավիճակներից: Սրտի կուսությունը ոչ միայն մարմնական ցանկություններից հրաժարվելն է, այլեւ մեր սրտերը սիրով, ուրախությամբ եւ խաղաղությամբ լցնելը: Սա Աստծո հետ*

---

[1] Творения иже во святых отца нашего Афанасия Великого, Часть 4-я, с. 428-429.

ավելի խոր հաղորդակցության ճանապարհն է, որովհետեւ մաքուր սիրտը դառնում է Նրա շնորհի անոթը: Սրտի կուսության հասնելը հեշտ չէ, բայց դա տանում է դեպի հոգեւոր ազատություն, ներքին խաղաղություն եւ անսահման սեր: Քրիստոսով մեր սրտերը կարող են մաքրվել ու նորոգվել, մենք կարող ենք ձեռք բերել հոգու իսկական կուսություն եւ դառնալ Սուրբ Հոգու տաճար:

«Իսկ ես ձեզ ասում եմ. չարին հակառակ չկանգնե՛լ» (Մատթ. 5.39): Ըստ ս. Հովհան Ոսկեբերանի. «Նա չի ասում. «Հակառակ մի՛ կանգնիր քո եղբորը», այլ՝ չարին, ցույց տալով, որ հանցավորն ամեն ինչ անում է սատանայի դրդմամբ, եւ այդպիսով մեղքը բարդելով ուրիշի վրա՝ խիստ թուլացնում ու զսպում է զայրույթը վիրավորողի դեմ: Դե ասում եք՝ չարին չդիմադրե՞նք: Դա պետք է, բայց ոչ նույն կերպ, այլ ինչպես Փրկիչն ինքն է պատվիրել, այսինքն՝ չարին դիմանալու պատրաստակամությամբ: Այսպես դու իսկապես կհաղթես չարին»[1]: Քրիստոնեական ուսմունքի համաձայն՝ չպետք է հակառակ կանգնել չարին, որն արտահայտվում է այլ մարդկանց կողմից անբարյացակամ արարքների, այդ թվում՝ վիրավորանքների տեսքով: Այս սկզբունքը չի ենթադրում պատասխան վրեժխնդրություն կամ դրա դիմաց վնաս պատճառելու փորձեր: Ի հակադրություն՝ քրիստոնեական մոտեցումը ներառում է թշնամանքն ու զայրույթը հաղթել առատաձեռնության եւ ներողամտության միջոցով: Փրկչի խոսքերը չարին չդիմադրելու մասին ուղղված են «աչք աչքի դիմաց, ատամ ատամի դիմաց» հատուցման հրեական ավանդույթի դեմ: Սակայն դա չի նշանակում, որ քրիստոնյաներին արգելվում է քայլեր ձեռնարկել չարիքը սահմանափակելու եւ արդարությունը պաշտպանելու համար: Հանրային հաստատությունները

[1] A select library of the Nicene and Post-Nicene fathers of the Christian Church, Vol. X, p. 124.

*կարող են կիրառել օրենքներ ու պատժամիջոցներ՝ դադարեցնելու անօրինական գործողությունները: Անհատները եւս իրավունք ունեն պաշտպանել իրենց եւ իրենց մտերիմներին վնասից՝ կիրառելով ողջամիտ ուժ: Քրիստոնյայի սերը պետք է արտացոլի Աստծո սերը: Աստված թույլ է տալիս չարի գոյությունը, բայց միեւնույն ժամանակ սահմանափակում ու պատժում է այն՝ առաջնորդվելով արդարությամբ, չարը կասեցնելու եւ մարդկության բարեկեցությունն ապահովելու ցանկությամբ: Ուստի քրիստոնեական սերը պետք է համբերատար լինի չարի հանդեպ, բայց միայն այնքան ժամանակ, քանի դեռ այն չի սպառնում Աստծո փառքին, մերձավորի բարօրությանն ու փրկությանը: Հակառակ դեպքում սերը նախատեսում է սահմանափակել եւ պատժել չարը: Չարին հակառակ չկանգնելու քրիստոնեական ուսմունքը պասիվության կամ չարի հետ հաշտվելու կոչ չի անում: Ընդհակառակը, այն ակտիվ ջանքեր է պահանջում բարին գործնականում կիրառելու համար, նույնիսկ հակառակության ու հալածանքների պայմաններում: Քրիստոնյաները կոչված են սիրով հաղթելու չարը՝ սահմանափակելով այն եւ պատժելով այն այնքանով, որքանով անհրաժեշտ է՝ պաշտպանելու Աստծո փառքը, մերձավորների բարօրությունը եւ արդարության հաղթանակը:*

*«Իսկ ես ձեզ ասում եմ. սիրեցե՛ք ձեր թշնամիներին» (Մատթ. 5.44): Քրիստոնյաները պետք է սիրեն ոչ միայն նրանց, ում հավանում են, այլեւ նրանց, ովքեր ատում կամ վնասում են իրենց: Չարագործների հանդեպ նման սերը դրսեւորվում է նրանց բարին ցանկանալով՝ նույնիսկ չնայած նրանց բացասական գործողություններին: Ավանդաբար առանձնանում են սիրո երկու տեսակ՝ Ֆիլիա՝ տրամադրվածություն եւ համակրանք այն մարդկանց հանդեպ, որոնց գործողություններն ու կյանքը մեզ դուր են գալիս. Ագապե՝ սեր է մարդկանց հանդեպ, նույնիսկ նրանց, ում գործողու-*

*թյուններին մենք հավանություն չենք տալիս, բարին մաղթելով նրանց եւ հակառակվելով նրանց սխալ արարքներին։ Դա սեր է թշնամիների հանդեպ, որն իսկական քրիստոնեական սկզբունքն է։ Ըստ ս. Հովհան Ոսկեբերանի. «Նա պատվիրում է ոչ միայն սիրել մեր թշնամիներին, այլեւ աղոթել նրանց համար։ Տեսնո՞ւմ ես, թե ինչ աստիճաններով Նա բարձրացավ եւ ինչպես Նա դրեց մեզ առաքինության ամենավերեւում։ Նայիր ու հաշվիր դրանք՝ սկսած առաջինից. առաջին աստիճանը վիրավորանքներ չսկսելն է. երկրորդ՝ երբ դա արդեն առաջացել է, չհատուցել նույն չարիքը հանցագործին. երրորդ՝ ոչ միայն չանել վիրավորողին այն, ինչ կրել ես նրանից, այլեւ հանգստություն պահպանել. չորրորդ՝ անձնատուր լինել տառապանքին. հինգերորդ՝ տալ ավելին, քան հանցագործը ցանկանում է վերցնել. վեցերորդ՝ չատել նրան. յոթերորդը նույնիսկ նրան սիրելն է. ութերորդը՝ նրան բարիք անելը. Իններորդ՝ աղոթել Աստծուն նրա համար»[1]։ Անհնար է հավանություն տալ կամ սիրել վնասակար արարքները, բայց մենք պարտավոր ենք բարիք մաղթել չար մարդկանց, նույնիսկ եթե նրանք վիրավորում ու վնասում են մեզ։ Նման սերը զգացմունք չէ, այլ գիտակցված ընտրություն։ Սա վկայում է հոգեւոր հասունության եւ կատարելության մասին։ Այն կախված չէ արտաքին հանգամանքներից կամ ուրիշ մարդկանց գործողություններից, այլ գալիս է հոգեւոր սրտի մաքրությունից։ Մեր թշնամիներին սիրելը մարտահրավեր է նետում ինքնապաշտպանության եւ վրեժխնդրության մեր բնական հակմանը։ Այն պահանջում է Սուրբ Հոգու շնորհի հատուկ միջամտություն, որը մեզ ուժ է տալիս՝ սիրելու նրանց, ովքեր ատում են մեզ։*

*«Արդ, կատարյա՛լ եղեք դուք, ինչպէս որ ձեր երկնավոր Հայրն է կատարյալ» (Մատթ. 5.48)։ Ըստ ս. Մակար Եգիպտացու. «Այս*

---

[1] Ibid. p. 126.

*խոսքերը հուշակում են մեղքից լիակատար մաքրագործում, անարգ կրքերից ամբողջական ազատում ու բարձրագույն առաքինության կատարյալ յուրացում, այսինքն՝ սրտի մաքրագործում եւ սրբագործում Աստծո կատարյալ Հոգու հետ հաղորդակցվելու միջոցով, որը տեղի է ունենում հավատության լիության մեջ հավատքով ու հոգու սիրով, որն իրեն ամբողջությամբ զոհաբերում է Աստծուն»[1]։ Կատարելության ձգտումը ցանկացած մարդու համար մշտական նպատակ պիտի լինի։ Ինչպես սիրող հայրն է ցանկանում լավագույնը իր զավակների համար, այնպես էլ սիրող Արարիչը մեզ կոչ է անում հասնել կեցության ամենաբարձր մակարդակին՝ դառնալ կատարյալ, ինչպես Ինքը։ Անշուշտ, աստվածային կատարելությունը կամ սրբությունը վեր է մարդկային հնարավորություններից։ Հետեւաբար, Հիսուսի խոսքերը երկնային Հոր նման կատարյալ լինելու անհրաժեշտության մասին պիտի ընկալվեն ոչ թե որպես Աստծո հետ հավասարության կոչ, այլ որպես հոգեւոր աճի հորդոր։ Քրիստոսի նկարագրած կատարելությանը հասնելը փոխակերպման ու աճի շարունակական գործընթաց է։ Կատարելագործման այս գործընթացը ներառում է մեր սրտերի մաքրագործումը կրքերից եւ եսասիրությունից, սիրո, կարեկցանքի ու ներողամտության հատկությունների զարգացումը։ Երբ մենք աճում ենք կատարելության մեջ, մեր բնավորությունն ավելի է նմանվում Քրիստոսին, եւ մեր կյանքը դառնում է աստվածային լույսի արտացոլում։ Ջգտելով լինել կատարյալ, քանի որ Աստված կատարյալ է, մենք ոչ միայն անձնական օրհնություն ենք գտնում, այլեւ դառնում ենք աստվածային սիրո եւ ողորմության գործիք։*

*«Այլ երբ դու ողորմությունն անես, թող քո ձախ ձեռքը չիմանա, թե ինչ է անում քո աջը, որպէսզի քո ողորմությունը ծածուկ լի-*

---

[1] Творения древних отцов-подвижников, Москва, 2012, с. 155-156.

*նի, եւ քո Հայրը, որ տեսնում է, ինչ որ ծածուկ է, կհատուցի քեզ հայտնապես» (Մատթ. 6.3-4)։ Այս խոսքերը մանրակրկիտ քննարկում են պահանջում, քանի որ դրանք բացահայտում են աստվածային ողորմության էությունը։ Ըստ ս. Աթանաս Ալեքսանդրացու. «Բայց հնարավո՞ր է արդյոք, որ ողորմություն տվողը թույլ չտա իր ձախ ձեռքին օժանդակել բարեգործական գործը։ Անկասկած, անհրաժեշտ է, որ բոլորն ունենան երկու ձեռք՝ մեկը մյուսին բարիք գործելու համար։ Եւ երբ ձախ ձեռքը փող կամ դրամապանակ է պահում, ապա աջը մի գեղեցիկ սերմ է ցանում աղքատների սրտերի դաշտում, որպեսզի ոչ թե ծղոտե ցողունին հենված հասկ հնձի, այլ խաչի վրա հաստատված հավիտենական ու անմահ կյանքը»[1]։*

*Մեր Փրկիչը հատուկ հրահանգներ չի տալիս գթության ձեւերի վերաբերյալ, քանի որ գթությունը կարող է դրսեւորվել անթիվ ձեւերով, որոնք հարմար կլինեն հատուկ հանգամանքների համար։ Ուրիշների օգտին արված բարի գործը կարող է հավասարազոր լինել նյութական ողորմությանը։ Տերն ընդգծում է այն, ինչը ողորմությունը դարձնում է ճշմարիտ եւ Աստծուն հաճելի։ Բարեգործությունը, ըստ Նրա, պետք է գաղտնի լինի։ Բարերարը պետք է ձգտի անանուն մնալ մի քանի պատճառով։ Նախ՝ անհայտությունը պաշտպանում է նրան սնափառությունից ու ինքնագոհությունից։ Երկրորդ՝ այն թույլ է տալիս կենտրոնանալ կարիքավորների բարօրության վրա՝ չմտածելով շնորհակալության կամ երախտագիտության մասին։ Կարելի է օգնել մերձավորներին առանց նյութական ծախսի՝ այցելելով հիվանդներին, աջակցություն ցուցաբերելով մխիթարության կարիք ունեցողներին, հոգալով միայնակներին եւ մոռացվածներին։ Բարեգործությունը ոչ միայն օգուտ է բերում այն ստացողներին, այլեւ հարստացնում է հենց բարերարին։ Գթասր-*

[1] Творения иже во святых отца нашего Афанасия Великого, Часть 4-я, с. 430.

*տության գործողություններ կատարելով՝ մենք զարգացնում ենք կարեկցանք ու սեր։*

*«Հա՛յր մեր, որ երկնքում ես. սո՛ւրբ թող լինի քո անունը» (Մատթ. 6.9)։ Ըստ ս. Կիպրիանոս Կարթագենացու. «Սրանից հետո ասում ենք՝ Սուրբ եղիցի՛ անուն Քո, ոչ թե այն պատճառով, որ ցանկանում ենք, որ Աստված սրբացվի մեր աղոթքներով, այլ որովհետեւ մենք խնդրում ենք Նրան, որ Նրա անունը սրբացվի մեր մեջ։ Որովհետեւ Աստված ումի՞ց է սրբագործվելու, Ով Ի՞նքն է սրբագործում։ Բայց քանի որ Նա Ինքն ասաց. «Սուրբ եղե՛ք, որովհետեւ ես սուրբ եմ» (Ղեւտ. 20.7), մենք խնդրում եւ աղոթում ենք, որ մկրտությամբ սրբագործված, շարունակենք լինել այնպես, ինչպես սկսել էինք։ Եւ մենք ամեն օր աղոթում ենք դրա մասին, որովհետեւ մենք ամենօրյա սրբացման կարիք ունենք, որպեսզի շարունակական սրբացման միջոցով կարողանանք մաքրել այն մեղքերը, որ ամեն օր գործում ենք»[1]։*

*Տերունական աղոթքը, ինչպես որ հաստատվել է հենց Հիսուս Քրիստոսի կողմից, պարունակում է խոր հոգեւոր ճշմարտությունների գանձարան, որոնք հորդորում են մեզ՝ վերափոխելու մեր մոտեցումը աղոթքի հանդեպ։ Երբ մենք Աստծուն դիմում ենք որպես «Հայր», դա պարզապես պաշտոնական դիմում չէ, այլ սիրող Հոր եւ Նրա սիրելի զավակների միջեւ մտերիմ ու անխորտակելի հարաբերությունների արտացոլում է։ Սա հիշեցում է, որ մեր աղոթքները չեն սահմանափակվում միայն ձեւական խնդրանքով, այլ սրտաբուխ երկխոսություն են մեր Երկնային Հոր հետ, ով ցանկանում է լսել մեր աղոթքները եւ պարգեւել Իր շնորհը։ «Սուրբ եղիցի՛ անուն Քո» բառերն ասելով՝ մենք արտահայտում ենք մեր*

---

[1] *Священномученик Киприан, епископ Карфагенский*, Книга о молитве Господней, Москва, 2016, с. 19-20.

ջերմեռանդ ցանկությունը, որ Աստծո փառքը դրսեւորվի այն ամենում, ինչ անում ենք: Մենք ընդունում ենք Նրա բացարձակ իշխանությունն ու ամենակարող զորությունը եւ խնդրում, որ Նրա կամքը կատարվի մեր կյանքում: Աստծո որդիների մեր կարգավիճակն իմանալը ոչ միայն արտոնություն է, այլեւ պատասխանատվություն: Սա մեզ քաջալերում է անկեղծ հավատքով աղոթել՝ խնդրելով այնպիսի բաներ, որոնք իսկապես օգտակար կլինեն մեզ եւ ներդաշնակ կլինեն Աստծո կամքին: Խուսափելով եսասիրական ու երկրային խնդրանքներից՝ մենք մեր աղոթքն ուղղում ենք դեպի այն բաները, որոնք կզորացնեն մեր հավատքը, կմոտեցնեն մեզ Աստծուն եւ կծառայեն Նրա փառքին:

*«Քո թագավորությո՛ւնը թող գա. քո կա՛մքը թող լինի երկրի վրա, ինչպես որ երկնքում է՛» (Մատթ. 6.10)*: Ըստ ս. Կիպրիանոս Կարթագենացու. «Մենք խնդրում ենք, որ Աստծո Արքայությունը գա մեզ մոտ, ինչպես որ աղոթում ենք Աստծուն, որ Նրա անունը սրբացվի մեր մեջ: Որովհետեւ ե՞րբ Աստված չի թագավորում կամ ե՞րբ պետք է սկսել Իր [Արքայությունը], որը միշտ եղել է Նրա հետ եւ չի դադարում լինել: Մենք խնդրում ենք Աստծո կողմից մեզ խոստացված, Քրիստոսի արյամբ եւ տառապանքով ձեռք բերված մեր թագավորության գալուստը, որպեսզի մենք, ովքեր ծառայել ենք այս դարում, կարողանանք այն ժամանակ թագավորել Տեր Քրիստոսի հետ, ինչպես Նա Ինքն է խոստանում՝ ասելով. Եկե՛ք, իմ Հոր օրհնյալնե՛ր, ժառանգե՛ք ձեզ համար պատրաստված Թագավորությունը աշխարհի արարումից [Մատթ. 25.34]: Աստծո Արքայությունը, սիրելի եղբայրնե՛ր, կարող է լինել հենց Ինքը՝ Քրիստոսը, եւ մենք ամեն օր տենչում ենք Նրա գալստյան ու խնդրում, որ Նա շուտով բացահայտի Իր գալուստը մեզ: Ի վերջո, ինչպես Նա է մեր հարությունը, քանի որ Նրա մեջ մենք հարություն ենք առել, այնպես էլ Նա կարող է ընկալվել որպես Աստծո Արքայություն, քանի

*որ մենք կթագավորենք Նրա մեջ»*[1]*։ Տերունական աղոթքի այս խոսքերն արտահայտում են քրիստոնյայի խոր հոգեւոր ձգտումը։ Աստծո Արքայությունը պարզապես տարածք կամ քաղաքական միավոր չէ, այլ առաջին հերթին՝ Աստվածային զորության ու շնորհի ոլորտը։ Քրիստոնյան, այս աղոթքն ասելով, խնդրում է Քրիստոսի Արքայության գալուստը եւ տարածումն աշխարհով մեկ։ Սա ենթադրում է ոչ միայն անհավատների դարձի գալը դեպի հավատ, այլեւ նրանց կյանքի փոխակերպումը՝ Աստծո պատվիրաններին համապատասխան։ Աստծո Արքայության ընդլայնումը երկրի վրա նշանակում է չարի եւ մեղքի թագավորության վերացում, մարդկանց ազատագրում մեղսական կրքերի կապանքներից, որոնք տանում են դեպի տառապանք ու մահ։ Քրիստոնեական կյանքի վերջնական նպատակը Երկնային Արքայության ձեռքբերումն է, որտեղ հավատացյալների հոգիները միավորված են Աստծո հետ հավերժական երանության մեջ։ Երկնքի արքայության այս հույսը քրիստոնյաներին ուժ է տալիս՝ դիմանալու երկրային փորձություններին եւ ձգտելու դեպի արդարություն։ Եկեղեցին իր խորհուրդներով, վարդապետությամբ ու գործունեությամբ կոչված է՝ տարածելու Աստծո Արքայությունը եւ առաջնորդելու մարդկանց դեպի փրկություն։ Քրիստոնյաները լինելու են Քրիստոսի առաքյալներն աշխարհում՝ քարոզելով Ավետարանը, ողորմության գործեր անելով ու իրենց կյանքով ցույց տալով Քրիստոսի վարդապետության ճշմարտացիությունը։*

*«Մեր հանապազորյա հացը տո՛ւր մեզ այսօր» (Մատթ. 6.11)։ Ըստ ս. Կիպրիանոս Կարթագենացու. «Կարելի է հասկանալ ինչպես հոգեւոր, այնպես էլ հասարակ իմաստով, որովհետեւ երկուսն էլ, աստվածային շնորհով, հավասարապես նպաստում են փրկությա-*

[1] Там же, с. 21-22.

նը»[1]։ Այս խնդրանքը խոր հոգեւոր նշանակություն ունի, որը դուրս է գալիս ֆիզիկական կարիքներից շրջանակից։ Այս աղոթքում «հաց» բառը կյանքի համար անհրաժեշտ բոլոր բարիքների խորհրդանիշն է։ Այն ներառում է ոչ միայն սնունդ, այլեւ հագուստ, կացարան ու այն ամենը, ինչը պետք է մեր գոյության համար։ «Հանապազօրյա» ածականը ցույց է տալիս, որ մենք Տիրոջից խնդրում ենք միայն այն, ինչ անհրաժեշտ է մեր կյանքը պահպանելու համար։ Բացի ֆիզիկական կարիքներից, մարդուն անհրաժեշտ է նաեւ հոգեւոր սնունդ։ «Հանապազօրյա» նշանակում է նաեւ Աստծո խոսքը, սուրբ խորհուրդները եւ, մասնավորապես, Քրիստոսի մարմնի ու արյան հաղորդությունը։ Այս հոգեւոր սնունդը խնդրելիս մենք աղոթում ենք Տիրոջը, որ Նա մեզ ջանասիրություն տա՝ կարդալու եւ լսելու Նրա Խոսքը, ինչպես նաեւ մասնակցելու հաղորդություններին։ Ընդամենը մեկ օրվա հացը խնդրելը մեզ սովորեցնում է վստահել Աստծուն։ Ապագայի նկատմամբ չափազանց մեծ հոգատարությունն ու անհանգստությունը հակասում են Նրա նախախնամության հանդեպ մեր հավատքին։ Տերը գիտի մեր կարիքները, եւ մենք կարող ենք վստահորեն հանձնել դրանք Նրա խնամքին։ Խնդրելով այն, ինչ մեզ անհրաժեշտ է, մենք ընդունում ենք, որ ամեն ինչ գալիս է մեզ Աստծուց։ Մենք պետք է գոհ լինենք մեր ունեցածով ու շնորհակալություն հայտնենք Նրան Իր պարգեւների համար։ Այսպիսով, դա պարզապես ֆիզիկական կարիքների բավարարման խնդրանք չէ։ Այն նաեւ սովորեցնում է վստահել Աստծո նախախնամությանը, գնահատել հոգեւոր սնունդը եւ ապրել երախտագիտությամբ այն բոլոր բարիքների համար, որ Նա տալիս է մեզ։

«Եւ ների՛ր մեզ մեր պարտքերը, ինչպես որ մենք ենք ներում մեր պարտապաններին» (Մատթ. 6.12)։ Ըստ ս. Կիպրիանոս Կար-

[1] Там же, с. 30.

*թագենացու. «Որքան անհրաժեշտ, որքան կանխատես ու փրկարար է մեզ համար հիշեցումը, որ մենք մեղավորներ ենք եւ մենք խրախուսվում ենք աղոթելու մեղքերի թողության համար, որպեսզի Աստծուց ողորմություն հայցելով՝ ոգին գա ինքնագիտակցության։ Եւ որպեսզի ոչ ոք չխանդաղատվի իր կարծեցյալ անմեղությունից ու չկործանվի մեծամտության պատճառով, մարդուն տրվում է հիշեցում ու խրատ, որ նա ամեն օր մեղանչում է, եւ հրամայվում է ամեն օր աղոթել մեղքերի համար»[1]։ «Պարտքերը» Աստծո առջեւ մեր բոլոր մեղքերն ու Նրա պատվիրանների խախտումներն են։ Որպես մարդիկ՝ մենք մեղավոր եւ պարտապան ենք Աստծուն, քանի որ անխուսափելիորեն մեղքեր ենք գործում ու չենք կարող ինքնուրույն քավել դրանք։ Մեղքերը քավելու միակ միջոցը ներումն է, որը միայն Աստված կարող է տալ։ Նա Իր վրա վերցրեց մեր բոլոր մեղքերը՝ թույլ տալով մեզ ներում խնդրել Նրանից՝ Քավիչի անունով։ Մեր պարտապանները բոլոր այն մարդիկ են, ովքեր ինչ-որ բան են արել մեր դեմ՝ ասելով, գործով, կամա թե ակամա։ Այս մարդկանց ներելը Աստծո կողմից մեր մեղքերի ներման անբաժանելի մասն է։ Երբ մենք ներում ենք ուրիշներին, մենք բացում ենք Աստծո ներման դուռը մեր կյանքում։ Այսպիսով, մենք խնդրում ենք Աստծուն ներել մեզ, ինչպես մենք ենք ներում ուրիշներին։ Ներելը բարդ գործընթաց է, որը պահանջում է խոնարհություն եւ սեր։ Երբ մենք ներում ենք, մենք ինքներս մեզ ազատում ենք զայրույթից ու վրդովմունքից՝ թույլ տալով, որ մեր հարաբերությունները վերականգնվեն ուրիշների հետ։ Դա նաեւ օգնում է ավելի մոտենալ Աստծուն եւ ստանալ Նրա ներումը։ Ներողամտությունը ողորմության ու կարեկցանքի գործողություն է, որը թույլ է տալիս հաղթահարել բաժանումն ու վերականգնել միասնությունը Աստծո*

[1] Там же, с. 38.

*եւ ուրիշների հետ։ Կարեւոր է հիշել, որ ներումը չի նշանակում մոռանալ կամ արդարացնել ուրիշների սխալ արարքները։ Դա ավելի շուտ նշանակում է ազատվել վրդովմունքից ու զայրույթից։*

*«Մի՛ տար մեզ փորձության, այլ փրկի՛ր մեզ չարից» (Մատթ. 6.13)։ Այս խոսքերը խոր իմաստ ունեն, որը դուրս է գալիս պարզ խնդրանքից։ Գայթակղությունը պարզապես մեղք գործելու ցանկություն չէ։ Սա հավատքի ամրության փորձություն է, չարի դիմաց հաստատակամության փորձություն։ Չարը պարզապես խորամանկ կամ խաբեբա չէ։ Սա սատանայի անձնավորումն է, ով ձգտում է մարդուն հեռացնել Աստծուց եւ կործանել նրա հոգին։ Նա օգտագործում է գայթակղությունը որպես գործիք իր նպատակներին հասնելու համար։ Այս խնդրանքը չի նշանակում, որ մարդ խնդրում է Աստծուն պաշտպանել իրեն բոլոր փորձություններից։ Սա խնդրանք է Աստծուց, որպեսզի Նա մեզ անհրաժեշտ ուժ ու իմաստություն պարգեւի մեղքին եւ գայթակղություններին դիմակայելու համար։ Կարեւոր է հասկանալ, որ գայթակղությունների ժամանակ մարդը կամազուրկ չէ։ Նա ունի ազատ կամք ու կարող է ընտրություն կատարել հօգուտ բարու։ Առանց Աստծո օգնության շատ դժվար է մեղքի նկատմամբ հաղթանակ տանելը, բայց Աստծո հետ միասին կարող ենք հաղթահարել ցանկացած գայթակղություն եւ հաղթանակ տանել չարի հանդեպ։ Ըստ ս. Կիպրիանոս Կարթագենացու. «Աղոթքի վերջում հետեւում է մի եզրակացություն, որը հակիրճ արտահայտում է մեր բոլոր աղաչանքներն ու խնդրանքները. Վերջում ասում ենք. «Բայց փրկիր մեզ չարից»՝ նկատի ունենալով այս աշխարհում բոլոր տեսակի անախորժությունները, որոնք թշնամին ծրագրում է մեր դեմ այս աշխարհում եւ որոնցից մենք կունենանք իսկական ու հուսալի պաշտպանություն, եթե Աստված մեզ ազատի դրանցից, եթե մեր խնդրանքով եւ աղոթքով Նա մեզ տալիս է Իր օգնությունը։ Երբ ասում ենք՝ փրկիր մեզ չարից, այլեւս*

*խնդրելու բան չկա, երբ անմիջապես խնդրում ենք Աստծուց պաշտպանություն չարից ու ստանալով այդպիսի պաշտպանություն՝ մենք ապահով եւ պաշտպանված ենք սատանայի ու աշխարհի բոլոր դավերից»*[1]։

*«Որովհետեւ եթե դուք մարդկանց ներեք իրենց հանցանքները, ձեր Երկնային Հայրը նույնպես կների ձեզ, բայց եթե դուք մարդկանց չներեք նրանց հանցանքները, ձեր Հայրը ձեզ չի ների ձեր հանցանքները» (Մատթ. 6.14-15)։ Ճշմարիտ ներումը, որ Աստված տալիս է մեզ, անբաժանելի է ուրիշներին ներելու մեր կարողությունից։ Եթե մենք անկեղծորեն ցանկանում ենք ողորմություն ստանալ մեր սեփական մեղքերի համար, մենք նախ պետք է խոնարհաբար բացենք մեր սրտերը եւ ներենք նրանց, ովքեր մեղք են գործել մեր դեմ։ Հակառակ դեպքում, հրաժարվելով ներելուց, մենք ոչ միայն զրկվում ենք մեր Երկնային Հորից ներում ստանալու հնարավորությունից, այլեւ կրում ենք Նրա բարկությունն ու դատապարտումը։ Ինչո՞ւ է դա տեղի ունենում։ Նախ՝ նրանք, ովքեր չեն ներում ուրիշներին, ցույց են տալիս, որ չեն հասկանում իրենց իսկական մեղքը։ Սեփական թերությունների խորությունն ու Աստծո ողորմածության անհրաժեշտությունը ճանաչելու փոխարեն՝ նրանք իրենց վեր են դասում ուրիշներից եւ դատում նրանց երեւակայական գերազանցության դիրքերից։ Նման հպարտությունը մարդուն անարժան է դարձնում Աստծո ներմանը։ Երկրորդ՝ ներելուց հրաժարվելը վկայում է սրտում սիրո պակասի մասին։ Ներելը սիրո գործողություն է, որը հակասում է հատուցման մարդկային բնական թվացող ցանկությանը։ Երբ մենք ներում ենք, մենք ուրիշների կարիքները վեր ենք դասում մեր կարիքներից՝ ընտրելով կարեկցանքն ու հաշտությունը վրդովմունքի եւ դառնության փոխարեն։*

---

[1] Там же, с. 46.

*Առանց սիրո մեր սրտերում՝ մենք դառնում ենք զայրացած, վրեժխնդիր ու հեռանում Աստծո շնորհից։ Աստված կոչ է անում մեզ ընդօրինակել Իր սերը՝ ներելով միմյանց, նույնիսկ երբ դա չափազանց դժվար է։ Հիսուս Քրիստոսը, լինելով սիրո եւ ողորմության կատարյալ օրինակ, ցույց տվեց մեզ, որ ներումը հնարավոր է նույնիսկ ամենադժվար իրավիճակներում։ Խաչի վրա, մահանալով մարդկության մեղքերի համար, Նա աղոթեց նրանց համար, ովքեր վիրավորել էին Իրեն. «Հայր, ների՛ր նրանց, որովհետեւ չգիտեն, թե ինչ են անում» (Ղուկ. 23.34)։ Ըստ ս. Բարսեղ Կեսարացու. «Քրիստոնյան չպիտի հիշի չարիքը, այլ պարտավոր է ի սրտե ներել նրանց, ովքեր մեղք են գործել նրա դեմ»[1]։*

*«Գանձեր մի՛ դիզեք ձեզ համար երկրի վրա, ուր ցեց եւ ժանգ ոչնչացնում են, եւ ուր գողեր պատերն են ծակում ու գողանում, այլ գանձեր դիզեցեք ձեզ համար երկնքում, որտեղ ո՛չ ցեց եւ ո՛չ ժանգ չեն ոչնչացնում, եւ ո՛չ էլ գողերը պատերն են ծակում ու գողանում. քանի որ, ուր ձեր գանձերն են, այնտեղ եւ ձեր սրտերը կլինեն» (Մատթ. 6.19-20)։ Երկրային հարստությունները դիզելու փոխարեն, որոնք ենթակա են ապականության ու գողության, Հիսուսը կոչ է անում մեզ գանձեր դիզել երկնքում, ուր նրանք ապահով կլինեն։ Այս երկնային գանձերը Աստծո հանդեպ ճշմարիտ հավատքի եւ Նրա պատվիրանների համաձայն արդար ապրելու մեջ են։ Իսկական հավատքն առ Աստված ներառում է լիակատար վստահություն Նրա նախախնամության հանդեպ։ Արդար կյանքն արտահայտվում է Աստծուն ու ուրիշներին սիրելու, Նրա պատվիրանները պահելու եւ Նրա օրինակին հետեւելու մեջ։ Ի տարբերություն երկրային հարստությունների՝ երկնային գանձերն անապական են ու հավերժական։ Սա նշանակում է, որ ձեռք բերվելուց հետո նրանք*

---

[1] Симфония по творениям святителя Василия Великого, с. 348.

ընդմիշտ մնալու են մեզ հետ։ Երկնային գանձեր ձեռք բերելը հավիտենական վարձատրություն ունի։ Տերը խոստանում է, որ ովքեր իրենց կյանքը նվիրում են Նրա հանդեպ հավատքին եւ արդար ապրելուն, հավիտենական կյանք կստանան երկնքում։ Գանձերին կցված սրտի պատկերը ենթադրում է, որ մեր մտքերը, ցանկությունները ու ձգտումները պետք է կենտրոնանան երկնային գանձերի վրա։ Հավատն առ Աստված եւ Նրա պատվիրանները պահելը պիտի լինեն մեր առաջնահերթությունները։ Ըստ ս. Աթանաս Ալեքսանդրացու. «Տերն ուսուցանում է. թեեւ երկինքը շատ բարձր է, սակայն դուք կարող եք դրա վրա դնել ճշմարտության անգնահատելի գանձը։ Աղքատին ու կարիքավորին տվեք այն, ինչ նրան պետք է, եւ դուք կտեսնեք, որ այս ամենը կպահպանվի երկնքում անվնաս, անարատ, անապական։ Դուք նաեւ ունեք մի սանդուղք, որը տանում է երկրից դեպի երկինք՝ փրկարար խաչը, եւ դրա վրա կան աստիճաններ՝ մաքրագույն Ավետարանների դավանանքները։ Այսպիսով, բարձրացե՛ք նրանցով դեպի երկնային կացարանները, որպեսզի փառավորվեք հավիտյան»[1]։

«Մարմնի ճրագը աչքն է. եթէ քո աչքը պարզ է, քո ամբողջ մարմինը լուսավոր կլինի։ Իսկ եթե քո աչքը պղտոր է, քո ամբողջ մարմինը խավար կլինի։ Եւ արդ, եթե քո մեջ եղած լույսը խավար է, ապա խաւարը՝ որչա՛փ եւս ավելի» (Մատթ. 6.22-23)։ Ինչպես ֆիզիկական աչքերը ծառայում են որպես լույս մարմնի համար, այնպես էլ մարդու հոգու համար լույսի աղբյուրը միտքն ու խիղճն են։ Եթե նրանք մաքուր են, այսինքն՝ ճիշտ են հասկանում հավատքի ճշմարտությունները եւ բարոյականության օրենքները, ապա կլուսավորեն մեր ողջ հոգին՝ ուղղորդելով մեր գործողությունները հա-

[1] Творения иже во святых отца нашего Афанасия Великого, Часть 4-я, с. 431-432.

*վատքին ու պատվիրաններին համապատասխան։ Բայց եթե մեր միտքը եւ խիղճը կուրանան, այսինքն՝ սխալ ընկալեն հավատքի ճշմարտություններն ու բարոյականության օրենքները, ապա մեր հոգին կսուզվի խավարի մեջ։ Մենք կընդունենք սուտը ճշմարտության փոխարեն, չարը՝ բարու փոխարեն եւ կհետեւենք ոչ թե Ավետարանի օրենքին, այլ մեր սեփական քմահաճույքներին ու կրքերին։ Այս առումով կարելի է զուգահեռ անցկացնել աչքի ֆիզիկական հիվանդության եւ հոգեւոր հիվանդության միջեւ։ Ինչպես թույլ աչքերը խեղաթյուրում են աշխարհի մեր ընկալումը, այնպես էլ մեր մտքի ու խղճի սխալները կարող են հանգեցնել հոգեւոր ճշմարտությունների խեղաթյուրված ընկալմանը։ Նրանք կարող են մթագնել մեր դատողությունը եւ մեզ համար անհնարին դարձնել բարու եւ չարի միջեւ հստակ տարբերակումը։ Ըստ ս. Աթանաս Ալեքսանդրացու. «Մարմինը, երբ աչքը չար է, մթնում է, ոչ թե Արարչի մեղքով, քանի որ այն ամենը, ինչ Աստված ստեղծել է, հույժ բարի է [Ծննդ. 1.31], այլ նրա ապականության ու չարամիտ բնավորության պատճառով, ում պատկանում է աչքը։ Իսկ դու, խոհեմ ընթերցո՛ղ, երբ լսում ես չար աչքի մասին, հասկանում ես ոչ թե գլխի աչքը, այլ չլուսավորյալ սրտի մեջ չար միտքը։ Իսկ եթե պատահի, որ մարմնի աչքը մթագնի սաստիկ թարախահոսությունից եւ գլխացավից. ապա մարմնական կուրությունը մարդուն խորթ չի դարձնում ապագա եւ հավերժական բարիքներին»[1]։*

*«Ոչ ոք չի կարող երկու տիրոջ ծառայել. կա՛մ մեկին կատի ու մյուսին կսիրի, կա՛մ մեկին կմեծարի եւ մյուսին կարհամարհի. չեք կարող ծառայել Աստծուն եւ մամոնային» (Մատթ. 6.24)։ Ինչպես ծառան չի կարող միաժամանակ երկու տիրոջ ծառայել, այնպես էլ մարդը չի կարող միաժամանակ նվիրվել Աստծուն ու աշխարհին։*

---

[1] Там же.

Երկրային բարիքների հետ չափից ավելի մեծ կապվածությունը խանգարում է Աստծո առաջ պարտականությունների պատշաճ կատարմանը: Օրինակ՝ նա, ով պաշտում է հարստությունը («մամոնան»), իր ողջ ուժերը կենտրոնացնում է դրա դիզման ու պահպանման վրա: Այդպիսի մարդն Աստծուց ավելի է սիրում հարստությունը եւ ապավինում է դրան՝ որպես իր աստծո: Նա մոռանում է Աստծուն ծառայելու մասին, անտեսում է կարիքավորներին ու հաճախ հպարտության մեջ է ընկնում: Հարստությունը մարդուն հնարավորություն է տալիս՝ տրվելու մեղսական հաճույքներին: Բացի այդ՝ նյութական հարստության ձգտումը հաճախ հանգեցնում է շահամոլության եւ նախանձի: Հարստանալու մոլուցքով տարված մարդիկ հաճախ մոռանում են հոգեւոր արժեքների ու մարդկային հարաբերությունների մասին, եւ դա կարող է հանգեցնել ոչ բարոյական վարքի ու Աստծո պատվիրանների խախտման: Ըստ ս. Հովհան Ոսկեբերանի. «Արծաթասերը չի ուզում լսել կամ խոսել այլ բանի մասին, քան շահույթը եւ շահույթի աճը, անամոթ շահույթների, ատելի առեւտրական հաստատությունների, ստրուկների եւ ոչ ազատ մարդուն հարիր հարցերի մասին. շան պես հաչում է բոլորի վրա, ատում է բոլորին, երես է թեքում բոլորից, թշնամանում է բոլորի հետ առանց պատճառի, ըմբոստանում է աղքատների դեմ, նախանձում է հարուստներին ու ոչ մեկի հետ չի ընկերանում»[1]: Աստված չի դատապարտում հարստության արդար ձեռքբերումը, բայց զգուշացնում է այն բացարձակ արժեքի վերածելուց: Ֆինանսական ապահովության ցանկությունն օրինական է, սակայն այն միշտ պետք է լրացվի հոգեւոր աճով եւ մերձավորներին ծառայելով: Հավասարակշռություն պահպանելու բանալին՝ գիտակցելն է, որ հարստությունը պարզապես միջոց է, ոչ թե նպատակ: Երբ

[1] Симфония по творениям святителя Иоанна Златоуста, с. 494.

*հարստությունն օգտագործվում է բարեգործության համար, այն կարող է գործիք դառնալ Աստծո փառքի եւ մարդկության ծառայության համար։*

*«Այսուհետեւ հոգ մի՛ արեք ու մի՛ ասեք՝ ի՞նչ պիտի ուտենք կամ ի՞նչ պիտի խմենք կամ ի՞նչ պիտի հագնենք, որովհետեւ հեթանոսներն են այդ բոլորը որոնում. քանի որ ձեր երկնավոր Հայրը գիտե, թե այդ բոլորը ձեզ պետք է։ Նախ՝ խնդրեցե՛ք Աստծու արքայությունը եւ նրա արդարությունը, եւ այդ բոլորը Աստված ձեզ ավելիով կտա» (Մատթ. 6.31-33)։ Քրիստոնյաներն ազատ են աշխարհիկ կարիքների մասին մտահոգություններից ու անհանգիստ մտքերից։ Նրանց վստահությունը Երկնային Հոր վրա է, ով սիրով եւ հոգատարությամբ ապահովում է մեր բոլոր կարիքները։ Ի տարբերություն հեթանոսների, որոնք կլանված են երկրային հաճույքներով ու ապավինում են իրենց ուժերին՝ քրիստոնյաները ճանաչում են Աստծո գերագույն իշխանությունը եւ Նրա Նախախնամությունը։ Քրիստոնյաները կոչված են կյանքի, որը կենտրոնացած է հավիտենականի, այլ ոչ թե ժամանակավորի վրա։ Մեր առաջնահերթությունը պետք է հաստատապես լինի Աստծո Արքայության ու Նրա արդարության որոնումը։ Ըստ ս. Բարսեղ Կեսարացու. «Մի՛ համարեք Երկնքի Արքայությունը որեւէ այլ բան, քան Գոյի ճշմարիտ իմացություն, որն աստվածային Գրքերում կոչվում է նաեւ երանություն։ «Որովհետեւ Աստծո արքայությունը ձեր մեջ է» (Ղուկ. 17.21)։ Ներքին մարդը ոչ այլ ինչ է, քան մտահայեցողություն։ Սրանից հետեւում է, որ Երկնքի Արքայությունը հայեցողություն է։ Այժմ, ինչպես հայելու մեջ, մենք տեսնում ենք իրերի ստվերները, իսկ ավելի ուշ, ազատվելով այս երկրային մարմնից եւ հագնելով անապական ու անմահ մարմին, կտեսնենք դրանց նախատիպերը»[1]։*

[1] Симфония по творениям святителя Василия Великого, с. 484.

*Քանի որ մենք, որպես Նրա եկեղեցու անդամներ անխոնջորեն ձգտում ենք Նրա Թագավորությանը հավատքի եւ Նրա օրենքին հնազանդվելու միջոցով, այն ամենը, ինչ մեզ կարող է անհրաժեշտ լինել մեր երկրային կյանքի համար, կտրվի մեզ ի վերուստ: Երկրային բարիքները չպիտի դառնան մեր գլխավոր մտահոգությունը: Ավելի շուտ, դրանք պիտի դիտվեն որպես մեր հոգեւոր կյանքի լրացումներ, որպես Տիրոջը մեր հավատարիմ ծառայության հետեւանք: Աստված, Իր անսահման իմաստությամբ, գիտի մեր կարիքներն ու առատաձեռնորեն ապահովում է դրանք, երբ մենք վստահում ենք Նրան եւ առաջին հերթին փնտրում Նրա արքայությունը:*

*«Մի՛ դատեք, որ Աստծուց չդատվեք» (Մատթ. 7.1): Ըստ ս. Հովհան Ոսկեբերանի. «Նույնիսկ եթե մենք որեւէ այլ մեղք չգործեինք, ապա միայն դա կարող է մեզ տանել դեպի գեհենի սանդարամետը. ուստի մենք խստորեն դատապարտում ենք ուրիշների մեղքերը, բայց մենք չենք տեսնում գերանները մեր մեջ»[1]: Քրիստոսի այս խոսքերը պարունակում են հիշեցում, որ մենք պետք է ձեռնպահ մնանք այլ մարդկանց դատելուց եւ քննադատելուց: Այնուամենայնիվ, կարեւոր է հասկանալ, որ դատողության արգելքը չի տարածվում ցանկացած գնահատման կամ դատողության վրա: Կարելի է դատել այլ մարդկանց արարքների որակը, քանի դեռ մեր դատողությունը հիմնված է իրավիճակի ճշմարիտ ըմբռնման ու Աստծո փառքը պահպանելու մտադրության վրա: Անընդունելի են անձնական դատողությունները, որոնք արվում են եսասիրական զգացմունքների եւ մտադրությունների հիման վրա: Նման դատողությունը հաճախ դրդված է կեղծ արդարությունից, հպարտությունից, ինքնահավանությունից կամ այլ անբարո դրդապատճառներից: Ուրիշներին դատելը կարող է կործանարար հետեւանքներ ու-*

---

[1] Симфония по творениям святителя Иоанна Златоуста, с. 323-324.

նենալ։ Այն բորբոքում է վեճերն ու հակամարտությունները հարաբերություններում, հանգեցնում է ինքնագոհության եւ բարոյական գերազանցության զգացողությանն ու մարդկանց հեռացնում Աստծուց եւ միմյանցից։ Նույն հատվածում Հիսուսն ասում է նաեւ. «Որովհետեւ ինչ դատաստանով, որ դատեք, նրանով եք դատվելու» (Մատթ. 7.2)։ Սա մեզ հիշեցնում է արդարության եւ դրա խախտման համար ի վերուստ պատժի անխուսափելիության մասին։ Ուրիշներին դատելու փոխարեն՝ մենք պետք է ձգտենք գթասրտություն ու ներողամտություն ցուցաբերել։ Մենք բոլորս կատարյալ չենք, եւ եթե դատում ենք ուրիշներին, ապա դրանով ցույց ենք տալիս, որ նրանցից լավը չենք ու միայն վնասում ենք ինքներս մեզ եւ խոչընդոտում մեր հոգեւոր աճին։

«Մի՛ տվեք սրբությունը շներին. եւ ձեր մարգարիտները խոզերի առաջ մի՛ գցեք, որպեսզի դրանք ոտքի կոխան չանեն եւ դառնալով ձեզ չպատառոտեն (Մատթ. 7.6)։ Ըստ ս. Բարսեղ Կեսարացու. «Սուրբ բանը չպետք է պղծվի՝ դրան ավելացնելով այն, ինչը ծառայում է ընդհանուր օգտագործման»[1]։ Երբ խոսում ենք սուրբ բաների մասին, կարեւոր է հիշել, թե ում հետ ենք խոսում։ Պետք չէ կիսվել ամենանվիրական համոզմունքներով նրանց հետ, ովքեր չեն գնահատում կամ հարգում դրանք։ Նրանց, ովքեր շան նման են, չպետք է տրվի այն, ինչ ձեզ համար սուրբ է, քանի որ նրանք կարող են չհասկանալ ասվածի արժեքը եւ կփորձեն պղծել այն։ Իսկ խոզերի նմանները, թեեւ կարող են հավատացյալ լինել, բայց անպարկեշտ ապրելակերպ են վարում, ուստի նրանց չպետք է վստահել հավատքի սուրբ ճշմարտությունները։ Կարեւոր է հիշել, որ ոչ բոլորն են արժանի քրիստոնյա լինելու։ Շներն ու խոզերը չպետք է իմանան հոգեւոր խորհուրդները, քանի որ կարող են դրանք սխալ

[1] Симфония по творениям святителя Василия Великого, с. 380.

*մեկնաբանել կամ նույնիսկ օգտագործել քրիստոնեական հավատի դեմ։ Հավատը Բարձրյալի կողմից շնորհված պարգեւ է, եւ այն բնավ չի տրվում բոլորին։ Իմաստությունը ոչ միայն գիտելիքն է, այլեւ այն ճիշտ ժամանակին ու ճիշտ մարդկանց հաղորդելը։*

*«Խնդրեցե՛ք Աստծուց, եւ Նա կտա ձեզ, փնտռեցե՛ք եւ կգտնեք, բախեցե՛ք, եւ կբացվի ձեր առաջ, որովհետեւ, ով որ ուզի, ստանում է, ով որ փնտռի, գտնում է, եւ ով որ բախի, Նրա առաջ կբացվի» (Մատթ. 7.7-8)։ Քրիստոսի այս խոսքերը մեզասում են, որ աղոթքը հզոր գործիք է, որի միջոցով մենք կարող ենք հաղորդակցվել Աստծո հետ ու ստանալ այն, ինչ մեզ անհրաժեշտ է։ Ըստ ս. Բարսեղ Կեսարացու. «Աղոթքը բարեպաշտների կողմից Աստծուն վերընձայվող բարիքների խնդրանք է»[1]։ Սակայն, նախքան աղոթելը, պետք է հասկանալ, որ աղոթքը պարզապես խնդրանք կամ պահանջ չէ։ Սա Աստծո հանդեպ մեր հավատքի, Նրա օգնության հույսի եւ Նրա հանդեպ սիրո արտահայտությունն է։ Աղոթքի միջոցով մենք ընդունում ենք մեր կախվածությունը Նրանից ու երախտագիտություն հայտնում Նրա ներկայության համար մեր կյանքում։ Մեր խնդրանքների կատարումը կախված է որոշակի պայմաններից։ Դրանք են՝ աղոթքի մեջ խոնարհությունն ու հաստատունությունը, խնդրանքի համապատասխանությունը Աստծո կամքին եւ մեզ համար օգուտի առկայությանը։ Եթե մենք չենք ստանում այն, ինչ ուզում ենք, ապա դա կարող է լինել այն պատճառով, որ մեր աղոթքը չի համապատասխանում այս պայմաններին։ Հնարավոր է, որ մենք չենք խնդրում բարի նպատակներով կամ բավարար հավատքով։ Կամ այն, ինչ մենք խնդրում ենք, կարող է վնաս պատճառել մեզ կամ ուրիշներին։ Նման դեպքերում կարեւոր է հիշել, որ Աստված գիտի մեր կարիքները նույնիսկ մեզնից առաջ։ Նա ցանկանում է*

---

[1] Там же, с. 213.

*մեզ տալ այն, ինչ մեզ իրականում պետք է ու ինչը մեզ օգուտ կբերի։ Հետեւաբար, եթե մենք չենք ստանում այն, ինչ խնդրում ենք, դա չի նշանակում, որ Աստված անտեսում է մեզ։ Ամենայն հավանականությամբ՝ Նա մեզ համար այլ ճանապարհ է նախատեսել, որը, ի վերջո, ավելի բարենպաստ է լինելու։ Բացի այդ՝ աղոթքը կարեւոր դեր է խաղում մեր հոգեւոր զարգացման գործում։ Դրա միջոցով մենք ամրացնում ենք մեր կապը Աստծո հետ, սովորում վստահել Նրան եւ ընդունել Նրա կամքը։*

*«Այն ամենը, ինչ կկամենաք, որ մարդիկ ձեզ անեն, այդպես եւ դո՛ւք արեք նրանց, որովհետեւ ա՛յդ իսկ են Օրենքն ու մարգարեները» (Մատթ. 7.12)։ Սա համընդհանուր բարոյական սկզբունք է, որը կոչվում է Ոսկե կանոն, որը խրախուսում է մեզ վերաբերվել ուրիշներին այնպես, ինչպես ցանկանում ենք, որ նրանք վերաբերվեն մեզ։ Ոսկե կանոնի էությունն այն է, որ դուք ինքներդ ձեզ դնեք դիմացինի տեղը եւ փորձեք հասկանալ նրա տեսակետը։ Եթե ցանկանում ենք, որ մեզ հարգեն ու բարյացակամորեն վերաբերվեն, մենք պետք է նույն հատկությունները ցույց տանք ուրիշներին։ Արդարությունը, որը մենք ակնկալում ենք մեզ համար, պետք է տարածվի նաեւ ուրիշների վրա։ Ոսկե կանոնը երեք հիմնական բարոյական պահանջ է ներկայացնում. 1) Անկողմնակալություն. մենք պիտի հավասարապես վերաբերվենք բոլորին, անգամ եթե նրանք պատկանում են այլ խմբի կամ ունեն տարբեր համոզմունքներ։ 2) Արդարություն. մենք պետք է բոլորին տանք այն, ինչ իրենց է պատկանում ու ինչ կցանկանայինք մեզ համար։ Ըստ ս. Բարսեղ Կեսարացու. «Արդարությունն այն է, ինչ հատուցվում է յուրաքանչյուրին ըստ գործերի արժանավորության»[1]։ 3) Սեր ուրիշների հան-*

---

[1] Сокровищница духовной мудрости, Т. X, Издание Московской духовной академии и Введенской оптиной пустыни, 2008, с. 488.

*դեպ. մենք պետք է գործենք կարեկցանքից եւ ուրիշների բարօրության համար մտահոգությունից դրդված։*

*«Մտե՛ք նեղ դռնով. ինչքա՜ն լայն է դուռը, եւ ընդարձակ՝ ճանապարհը, որ դեպի կորուստ է տանում, եւ բազմաթիվ են նրանք, որ մտնում են դրանով» (Մատթ. 7.13)։ Քրիստոսի պատվիրանի համաձայն՝ պետք է ընտրել դեպի փրկություն տանող նեղ դուռը, քանի որ դեպի կործանում տանող դռները լայն են ու հասանելի։ Չնայած մարդու բնական ցանկությանը դեպի բարին, այս ճանապարհը հղի է դժվարություններով եւ փորձություններով, որոնք անհաղթահարելի են թվում մեր մեղսական բնության համար։ Ըստ Հիերոնիմոս Ստրիդոնացու. «Ուշադրություն դարձրե՛ք բառերին, քանի որ նրանք ունեն հատուկ ուժ։ Շատերն են գնում լայն ճանապարհով, քչերն են գտնում նեղ ճանապարհը։ Որովհետեւ լայն ճանապարհը պետք չէ որոնել, այն չեն գտնում, բայց այն հեշտությամբ ներկայանում է։ Սա բոլոր մոլորյալների ուղին է։ Իսկ նեղ ճանապարհը ոչ բոլորն են գնում, ու գտնելով՝ ոչ միանգամից են ընթանում դրանով։ Շատերը, գտնելով ճշմարտության ուղին, տարվելով աշխարհիկ հաճույքներով, թողնում են այն կեսից»[1]։ Նեղ դռան հասկացությունը ներառում է ե՛ւ կամավոր փորձություններ, ինչպիսիք են ծոմը, արթնությունը, կամավոր աղքատությունը։ Ծոմապահությունը ներառում է սննդից ու խմիչքից հրաժարվելը, հաճախ երկար ժամանակ, որպես խոնարհության եւ ինքնակարգապահության դրսեւորում։ Արթնությունը վերաբերում է քնից կամավոր հրաժարվելուն՝ ժամանակ հատկացնելու աղոթքին ու խորհրդածությանը։ Կամավոր աղքատությունը նյութական բարիքներից եւ հարստությունից հրաժարվելն է Հիսուս Քրիստոսի օրինակին հետեւելու համար։ Ինչ վերաբերում է ակամա տառապանքին, ապա այն կարող է ունե-*

---

[1] *St. Thomas Aquinas*, Catena Aurea (Golden Chain), Vol. I, London, 1842, p. 211.

*նալ տարբեր ձեւեր՝ հալածանք, զրկանք, հիվանդություն ու տառապանք։ Հալածանքները կարող են ներառել ֆիզիկական հարձակումներ, հետապնդում կամ սոցիալական բացառում։ Զրկումը կարող է վերաբերել գույքին, հեղինակությանը, ընտանիքին կամ այլ արժեքներին, որոնք թանկ են մեզ համար։ Հիվանդությունն ու տառապանքը կարող են լինել ֆիզիկական կամ էմոցիոնալ եւ նախատեսված են՝ փորձելու մեր տոկունությունն ու ապավինումը Աստծուն։ Բայց կարեւոր է նշել, որ «նեղ դուռ» եզրույթը չի վերաբերում միայն զրկանքների կամ տառապանքների առանձին գործողություններին։ Խոսքը վերաբերում է նաեւ հոգեւոր աճի ավելի լայն ճանապարհին, որը պահանջում է մշտական պայքար մեղքի ու աշխարհիկ գայթակղությունների դեմ։ Մեր ներքին պայքարը, սեփական թերությունները հաղթահարելու եւ Աստծո առջեւ խոնարհվելու մեր ջանքերը «նեղ դռան» միջով անցնելու անբաժանելի մասն են։ Երբ մենք ընթանում ենք դեպի փրկություն տանող նեղ ու փշոտ ճանապարհով, պետք է հիշենք, որ Գողգոթայի խաչը քավության եւ մեղքի հանդեպ հաղթանակի խորհրդանիշն է։ Հետեւելով Քրիստոսին՝ մենք պիտի կրենք մեր սեփական խաչը։*

*«Զգո՛յշ եղեք սուտ մարգարեներից, որոնք մոտենում են ձեզ ոչխարների զգեստներով, բայց ներսից հափշտակող գայլեր են» (Մատթ. 7.15)։ Այս նախազգուշացումը վերաբերում է ոչ միայն նրանց, ովքեր իրենց գործերով ու խոսքերով ցույց են տալիս մի բան՝ անելով մեկ այլ բան, այլեւ, առաջին հերթին, հերձվածողներին։ Հերձվածողները, թաքնվելով արտաքին կրոնասիրության, ժուժկալության, առաքինության եւ ծոմապահության հետեւում, կարծես բարեպաշտ են թվում, բայց նրանց հոգիները վարակված են ստի ու խաբեության թույնով։ Նրանք մոլորեցնում են միամիտ մարդկանց, ովքեր չեն նկատում առաքինության քողի տակ թաքնված արատները։ Ըստ ս. Աթանաս Ալեքսանդրացու. «Ո՛չ հույժ ի-*

*մաստուն խոսքը, ո՛չ էլ զարդարված արտաքինը չեն տանում երկնային արքայություն, այլ կատարյալ եւ ոչ հարցախույզ հավատը գովելի ու հստակ շրջահայացությամբ հանդերձ»*[1]*: Հերձվածողների գործունեության պտուղներն են զանազան հոգեկործան մոլորությունների տարածումը եւ Եկեղեցու պառակտումը: Դրա համար էլ նրանց նմանեցնում են գիշատիչ գայլերի, որոնք հոշոտում են Քրիստոսի հավատացյալ հոտը: Կեղծ մարգարեներին ճանաչելու բանալին նրանց «պտուղներին» ուշադրություն դարձնելն է, այսինքն՝ քարոզչության եւ ուսուցման գործողություններին ու արդյունքներին: Եթե նրանց խոսքերը եւ գործերը չեն համապատասխանում Քրիստոսի ու առաքյալների ճշմարիտ վարդապետությանը, այլ հանգեցնում են վնասակար հետեւանքների, ապա մենք կարող ենք վստահորեն եզրակացնել, որ նրանք կեղծ մարգարեներ են: Ահա՛ մի քանի նշաններ, որոնցով կարելի է ճանաչել հերձվածողներին: Նրանք ժխտում կամ խեղաթյուրում են քրիստոնեական հավատքի հիմնական դրույթները, ինչպիսիք են Երրորդությունը եւ Քրիստոսի աստվածամարդությունը: Նրանք ներմուծում են նոր ուսմունքներ, որոնք հակասում են առաքելական ավանդությանը: Նրանք բաժանվում են Եկեղեցուց եւ հրաժարվում են ճանաչել նրա հեղինակությունը: Նրանք հաճախ դիմում են ձեռնածությունների, խաբեության ու խեղաթյուրման՝ հետեւորդներ գրավելու համար: Ճշմարիտ մարգարեն մարդկանց խրախուսում է խաղաղության, սիրո, հեզության, աստվածպաշտության եւ Աստծո պատվիրանները պահելու: Հերձվածողը սերմանում է պառակտում, թշնամություն, հպարտություն ու կեղծ համոզմունքներ: Կարելի է վստահել միայն ճշմարիտ հովիվներին, ովքեր հավատարմորեն հետեւում են Քրիստոսի եւ առաքյալների պատվիրաններին:*

---

[1] Творения иже во святых отца нашего Афанасия Великого, Часть 4-я, с. 438.

*«Ոչ ամեն մարդ, որ ինձ «Տե՛ր, Տե՛ր» է ասում, երկնքի արքայություն կմտնի, այլ նա՛, ով կատարում է կամքը իմ Հոր, որ երկնքում է» (Մատթ. 7.21)։ Հավատքն ինքնին բավարար չէ փրկության համար՝ առանց նրան ուղեկցող առաքինի ու բարեպաշտ կյանքի։ Ընդհակառակը, միայն արդար կյանքն անօգուտ է, եթե այն հիմնված չէ հավատքի վրա։ Անհրաժեշտ է միավորել այս երկու բաղադրիչներն էլ՝ առանց դրանք առանձնացնելու։ Ըստ Հիերոնիմոս Ստրիդոնացու. «Ինչպես Նա ասաց վերեւում, որ նրանք, ովքեր հագնում են լավ ապրելու զգեստը, չպետք է ընդունվեն իրենց վարդապետությունների ամբարշտության պատճառով, ուստի այժմ, մյուս կողմից, Նա արգելում է մեզ հավատք կիսել նրանց հետ, ովքեր, չնայած ուժեղ են ողջմիտ վարդապետության մեջ, այն ավերում է չար գործերով։ Որովհետեւ Աստծո ծառաներին վայել է, որ ե՛ւ իրենց գործերը հաստատվեն իրենց վարդապետությամբ, ե՛ւ նրանց վարդապետությունը՝ իրենց գործերով»[1]։ Քրիստոսին Տեր կոչելը միայն հավատքի դրսեւորում է։ Նա չասաց՝ «Նա, ով կատարում է իմ կամքը», քանի որ ցանկանում էր խոնարհություն ցուցաբերել Հոր հանդեպ ու ընդգծել, որ Հոր կամքն անբաժանելի է Որդու կամքից։ Որդու կողմից տրված պատվիրանները Հոր կամքն են։ Այսպիսով, ե՛ւ հավատք, ե՛ւ գործեր են պահանջվում Երկնքի Արքայություն մտնելու համար։ Հավատքը պետք է մղի մեզ՝ ապրելու արդար կյանքով, իսկ արդար կյանքը պետք է ամրացնի մեր հավատքը։ Որդու կողմից տրված պատվիրանները պահելը ցույց է տալիս, որ մենք ընդունում ենք Նրա իշխանությունը։ Կարեւոր է նշել, որ հավատքի ու գործերի միջեւ կապը չի նշանակում, որ մենք կարող ենք փրկություն վաստակել մեր սեփական ջանքերով։ Փրկությունը Աստծո շնորհի պարգեւն է, որը տրված է մեզ առ Հիսուս Քրիստոս հավատքի միջոցով։ Սակայն*

---

[1] *St. Thomas Aquinas*, Catena Aurea (Golden Chain), Vol. I, p. 216.

*մեր գործերը մեր հավատքի պտուղն են եւ վկայում են Աստծո հանդեպ մեր սիրո մասին: Կատարելով Երկնային Հոր կամքը՝ մենք ոչ միայն ավելի ենք մոտենում Աստծուն, այլեւ դառնում ենք Նրա Թագավորության ստեղծողները երկրի վրա:*

*«Ով որ լսում է իմ այս խոսքերը եւ կատարում է դրանք, կնմանվի մի իմաստուն մարդու, որ իր տունը շինեց ժայռի վրա» (Մատթ. 7.24): Ըստ ս. Հովհան Ոսկեբերանի. «Քրիստոսը ժայռ է անվանում Իր վարդապետության ամրությունը»[1]: Լեռան քարոզի վերջում Տերն առակ է տալիս երկու շինարարների մասին, որի մեջ ասվում է ոչ միայն Աստծո խոսքը լսելու, այլեւ այն կատարելու կարեւորության մասին: Մարդը, ով լսում է Տիրոջ խոսքերն ու դրանք իրագործում, նման է իմաստուն շինարարի, ով իր տունը կառուցում է ամուր քարի վրա: Նման տունը կարող է դիմակայել կյանքի ցանկացած փոթորիկների ու ցնցումների: Ի վերջո, նույնիսկ այն դեպքում, երբ մենք ապրում ենք ենք բարեկեցության մեջ, անսպասելիորեն կարող են բռնկվել անախորժություններ եւ դժբախտություններ, որոնք ակնթարթորեն ոչնչացնում են առողջությունը, երջանկությունը, հարստությունն ու հոգեկան անդորրը: Նա, ով Քրիստոսի հետ է եւ Քրիստոսի մեջ, ապահովագրված է նման արհավիրքներից: Հետեւելով Նրա վարդապետությանը եւ պատվիրաններին՝ մենք ամուր հող ենք գտնում մեր ոտքերի տակ: Հավատքն ու սերը մեզ ուժ են տալիս՝ չվախենալու փորձություններից եւ գայթակղություններից: Ի տարբերություն իմաստուն շինարարի՝ Քրիստոսի պատվիրանները չկատարող մարդը նման է անխելամիտ շինարարի, ով իր տունը կառուցում է ավազի վրա: Նման կառույցը չի դիմանա կյանքի փոթորիկների հարձակմանը: Երբ փոր-*

---

[1] Библейские комментарии отцов Церкви и других авторов I-VIII веков, Новый Завет, Т. Ia, Евангелие от Матфея 1-13, Тверь, 2007, с. 195.

*ձությունները ու գայթակղությունները գան, նա չի դիմանա դրանց եւ կփլվի դրանց ծանրության տակ։ Այս առակը հիշեցնում է, որ Աստծո խոսքին հնազանդվելն անբաժանելի է այն կատարելուց։ Միայն հավատքի ու գործերի համադրությունը մեզ դարձնում է Քրիստոսի իսկական աշակերտներ եւ հաստատուն աջակցություն է ցուցաբերում կյանքի ցանկացած փորձության մեջ։*

*Ամփոփելով Հիսուս Քրիստոսի մարգարեական ծառայության մասին ասվածը՝ նշենք, որ Քրիստոսի ուսուցանած վարդապետությունը նախատեսված է բոլոր ժամանակների համար։ «Եւ խաղաղության Աստվածը, որ մեռելների միջից հարություն առնել տվեց մեր Տեր Հիսուսին, որը հավիտենական ուխտի արյունով ոչխարների մեծ հովիվն է» (Եբր. 13.20)։ Հիսուս Քրիստոսը, որպես կատարյալ մարգարե, ուներ բացարձակ հեղինակություն եւ անսխալականություն։ Նրա վարդապետությունը ոչ միայն իմաստուն ասացվածքների կամ աստվածաբանական ճշմարտությունների հավաքածո է, այլեւ մարմնացած Աստծո կենդանի խոսք։ Այն իր մեջ կրում է ճշմարտության ու զորության աստվածային դրոշմը։ Ըստ այդ վարդապետության՝ մենք փրկվում ենք ոչ թե արտաքին ծեսերի կամ մարդկային ջանքերի միջոցով, այլ Հիսուս Քրիստոսին որպես մեր Տեր եւ Փրկիչ ընդունելու եւ խոստովանելու միջոցով։ Քրիստոսի հանդեպ հավատն ուղեկցվում է ապաշխարությամբ, որը ենթադրում է մեղքից հեռացում ու արդար կյանքի ձգտում։ Բացի Աստծո մասին հայտնությունից եւ փրկության ուղուց՝ Հիսուս Քրիստոսի վարդապետությունը ներառում է քրիստոնեական բարոյականության սկզբունքները։ Նա ուսուցանում էր Աստծո եւ մերձավորի հանդեպ սեր, խոնարհություն, ներողամտություն ու կարեկցանք։ Նա պատվիրեց իր հետեւորդներին՝ սիրել նույնիսկ իրենց թշնամիներին եւ աղոթել նրանց համար, ովքեր հալածում են նրանց։ Եզրափակելով՝ ասենք, որ Հիսուս Քրիստոսի մարգարեա-*

*կան ծառայությունը քրիստոնեության հիմնաքարն է։ Նրա վարդապետությունը, կատարելով ու լրացնելով Հին Կտակարանը, ներկայացնում է Աստվածային ճշմարտության վերջնական եւ համապարփակ հայտնությունը։*

*Որպես մարգարե՝ Հիսուս Քրիստոսը հռչակեց հավիտենական կյանքի խոսքերը (Հովհ. 6.68), եւ ոչ միայն խոսքով, այլեւ իր անմեղ ու սուրբ կյանքով։ Սակայն ճշմարտության տեսական ուսուցումը եւ կատարյալ ապրելակերպի օրինակն ինքնին չէին կարող փրկել մարդուն։ Դրա համար անհրաժեշտ էր, որ Աստծո մարմնացած միածին Որդին կատարեր Աստծո եւ մարդու հաշտեցման մեծ գործը մարդկային ցեղի հետ Իր ծառայության միջոցով, որի նախատիպը Հին Կտակարանում քահանայապետի ծառայությունն էր։ Զոհերից ամենամեծը, որի պատկերը Աստված հաստատեց Հին Կտակարանում, Հիսուս Քրիստոսի զոհաբերությունն էր՝ մատուցված ողջ մարդկության մեղքերի համար։ Որպես քահանայապետ, Նա իր վրա վերցրեց մարդկային բնության ամբողջությունը, բացառությամբ մեղքի, եւ կրեց տանջալից ու ամոթալի մահ խաչի վրա։ Աստծո Որդու մարմնացումը դարձավ Աստծո եւ մարդու հաշտեցման հիմնաքարը։ Այն ծառայեց ոչ միայն որպես խաչի վրա զոհաբերության ու Աստվածամարդու երկրային ծառայության նախապայման, այլեւ ինքնուրույն նշանակություն ունեցավ քավության գործընթացում։ Քրիստոսի հայտնվելը երկրի վրա նշանավորեց աստվածային եւ մարդկային բնության միաձուլումը Նրա անձի մեջ։ Դառնալով Աստծո եւ մարդու միջեւ միջնորդը՝ Նա հիմք դրեց Արարչի ու արարածի միջեւ սերտ միության վերականգնման համար։*

*Իր մահով Հիսուս Քրիստոսը, որպես Աստծո Գառ, կրեց ամբողջ աշխարհի մեղքերը (Հովհ. 1.29), վճարեց Աստծո արդարության պարտքը եւ կատարյալ զոհաբերություն կատարեց մեղքի համար՝ դրանով իսկ բավարարելով օրենքի պահանջները՝ ներման ու*

փրկության հնարավորություն տալով բոլոր նրանց, ովքեր ապաշխարում են եւ ընդունում Նրան որպես իրենց Փրկչի։ Բացի այդ՝ Հիսուս Քրիստոսն Իր Հարությամբ փշրեց մահվան պատնեշը եւ հաղթանակած հայտնվեց մեղքի ու մահվան նկատմամբ՝ պարգեւելով Իրեն հավատացողներին հավիտենական կյանք Աստծո Արքայության մեջ։ Իրեն հավատացողներին Նա նաեւ տվել է Սուրբ Հոգին, որը նորոգում եւ կենդանացնում է նրանց հոգիները, մաքրում է նրանց մեղքերից ու օգնում ապրել սուրբ եւ արդար կյանքով։

Քրիստոսի ողջ երկրային կյանքը նվիրված էր Աստծո հետ մարդկանց հաշտեցմանը, որը սկսվել է Նրա մարմնացումով։ Աստծո Որդին մեր Փրկիչն է, քանզի Նրա անձի մեջ գոյություն ունի աստվածային ու մարդկային բնությունների կատարյալ միություն։ Քրիստոսի Սուրբ Ծնունդը մարդկության պատմության մեջ արմատական փոփոխություն է արձանագրել։ Տեր Հիսուս Քրիստոսն Իր Անձի մեջ մարմնավորում է ամենամեծ հրաշքը՝ Աստծո մարմնացումը եւ մարդու աստվածացումը։ Սա քրիստոնեական Բարի Լուրի հիմնարար սկզբունքն է, որը ներթափանցում է ամբողջ Նոր Կտակարանը։ Տեր Հիսուս Քրիստոսի մեջ, ինչպես նոր մարդկության Հիմնադիր Նոր Ադամի մեջ, աստվածացված է մարդկային բնությունը։ Մարդկության իսկական փրկությունը նրա աստվածացումն է Աստվածամարդ Քրիստոսի անձի մեջ։ Սակայն, միեւնույն ժամանակ, մարդկային բնությունն ի Քրիստոս պահպանում է իր սահմանափակումներն ու բոլոր այն հատկությունները, որոնց շնորհիվ Քրիստոսը կրում է նաեւ Մարդու Որդի անունը։

Աստծո Միածին Որդին, ցանկություն հայտնելով դառնալ Աստծո եւ մարդկանց միջեւ Միջնորդ, իր վրա վերցրեց բոլոր մարդկանց մեղքերն ու նրանց պատիժը։ Նա կամավոր համաձայնեց դիմանալ տառապանքին եւ մահվանը՝ վճարելով մեղքի քավության գինը, ապահովելով մարդկանց ներում եւ փրկություն։ Փրկությունը

*շնորհի պարգեւ է, քանի որ մարդիկ չեն կարող Աստծո ներումը վաստակել իրենց գործերով: Քրիստոսը մահացավ բոլոր մարդկանց մեղքերի համար, եւ յուրաքանչյուրը կարող է ներում ու հաշտություն ստանալ Աստծո հետ՝ Նրա հանդեպ հավատքի միջոցով: Միեւնույն ժամանակ, յուրաքանչյուր մարդ փրկվելու համար պետք է ապրի Նրա հավատից բխող առաքինի եւ բարեպաշտ կյանքով:*

*Հիսուս Քրիստոսի մկրտությունը շրջադարձային կետ էր փրկագործության պատմության մեջ: Այս սուրբ արարքը նշանավորեց ամբողջ Սուրբ Երրորդության հայտնությունը՝ հաստատելով Հոր, Որդու եւ Սուրբ Հոգու անխզելի միասնությունը: Ըստ ս. Գրիգոր Նազիանզացու. «Եւ հոգին վկայում է Աստվածության մասին, որովհետեւ գալիս է հավասարի մոտ, եւ ձայն երկնքից, որովհետեւ երկնքից է Նա, Ում մասին է վկայությունը»*[1]*: Հորդանան գետում Իր մկրտության ժամանակ, ինչպես ասվում է Ավետարաններում, Հայրը Հիսուսին հայտարարեց իր սիրելի Որդին՝ տալով Նրա աստվածության անհերքելի ապացույցը: Իսկ Սուրբ Հոգին աղավնու կերպարանքով իջնելով նրա վրա՝ խորհրդանշեց նրա օծումը որպես Մեսիա: Այսպիսով, Տիրոջ Մկրտությունը դարձավ վերջնական ու ամբողջական Աստվածահայտնություն՝ աշխարհին ցույց տալով Սուրբ Երրորդության միասնությունը եւ աստվածությունը: Հենց այդ պահին տեղի ունեցավ անկումից հետո մարդուն կտակված փրկության մասնակի կատարումը: Քրիստոսի երկրային ծառայության յուրաքանչյուր պահը տոգորված էր Նրա փրկարար ուժով, սակայն Հորդանանի Մկրտության ժամանակ այն դրսեւորվեց հատուկ զորությամբ: Աստվածահայտնությունը չի սահմանափակվել միայն Աստծո եռամիասնության պարզ հուշակմամբ, այլ մարմնավորել է մարդկության փրկության մեծ նպատակը: Սուրբ Երրորդու-*

---

[1] Симфония по творениям святителя Григория Богослова, с. 248.

*թյան ի հայտ գալը Մկրտության պահին ծառայել է մարդու սրբագործման ու փրկության նպատակին։ Սա էր Փրկչի՝ երկիր գալու եւ աշխարհին Աստծո հայտնվելու իմաստը։ Հիսուս Քրիստոսի մկրտությունը դարձավ Նրա մեծ առաքելության անբաժանելի մասը։*

*Իր երկրային ծառայության ճանապարհին Տեր Հիսուս Քրիստոսն անցավ նաեւ Պայծառակերպության միջով, որը դարձավ մարդկության փրկության Իր Աստվածային ծրագրի անբաժանելի մասը։ Թաբոր լեռան վրա Տերը ցույց տվեց մարդկային բնության աստվածացումը որպես անհրաժեշտ պայման՝ աշխարհը մեղքից, չարից ու մահից փրկելու համար։ Ստեղծման պահից մարդը կոչված էր նմանվելու Աստծուն, սակայն Անկումը նրան բաժանեց Աստծուց՝ հանգեցնելով նրա բնության խաթարմանը։ Սակայն Քրիստոսը եկավ՝ վերացնելու այս խաթարումը եւ մարդուն վերադարձնելու Աստվածային շնորհին հաղորդակից դառնալու հնարավորությունը։ Պայծառակերպությունը կարեւորագույն իրադարձություն էր, որը նշանավորեց այս գործընթացի սկիզբը։ Մարդկային բնության սրբագործումն անհնար է առանց նրա արմատական փոխակերպման, առանց մեղսական վիճակից սրբության, ապականությունից անապականության, մահկանացու վիճակից դեպի անմահություն անցման։ Ուստի փրկությունն իր էությամբ ներառում է Աստծո կողմից մարդկային բնության համակողմանի փոխակերպումը։ Քրիստոսի Պայծառակերպության օրը մարդու լուսավորության եւ աստվածացման տոն է։ Այդ օրը Աստվածամարդ Քրիստոսն Իր ամենազոր ու փրկարար զորությամբ լուսավորեց մարդկային բնությունը՝ այն հաղորդակից դարձնելով Աստվածայինին։ Իր Պայծառակերպությամբ Տեր Հիսուս Քրիստոսն աշխարհին բացահայտեց հավերժական գաղտնիքը, որը թաքնված էր մինչ այդ։ Մարդկային աչքերը տեսան աննախադեպ մի բան՝ երկրային մարմին՝ փայլող Աստվածային անեղ լույսով, մահկանացու մարմին, ո-*

*րը ճառագայթում էր Աստվածային փառքը։ Այս իրադարձությունը կանխատեսում էր ողջ մարդկային ցեղի ապագա փոխակերպումը, որը տեղի կունենա Քրիստոսի Երկրորդ Գալստյան ժամանակ։ Ըստ ս. Եփրեմ Ասորու. «Եւ Իր Աստվածության այս փառքը՝ անտեսանելի ու մարդկության մեջ թաքնված, ցույց տվեց լեռան վրա գտնվող առաքյալներին։ Նրանք տեսան, որ Նրա դեմքը փայլում էր կայծակի պես, եւ Նրա հագուստները՝ լույսի պես սպիտակ։ Աշակերտները տեսան երկու արեւ. մեկը երկնքում սովորական, իսկ մյուսը՝ արտասովոր. մեկը՝ տեսանելի նրանց համար ու լուսավորող աշխարհը երկնակամարում, մյուսը՝ ցույց տալով Իր դեմքը միայն նրանց։ Նա ցույց տվեց Իր հագուստները լույսի պես սպիտակ, քանի որ Նրա ամբողջ մարմնից բխում էր Նրա Աստվածության փառքը, եւ Նրա լույսը փայլեց Նրա բոլոր անդամների մեջ»[1]։*

*Երկրի վրա Տեր Հիսուս Քրիստոսի աստվածամարդկային կյանքի բոլոր ասպեկտներն անքակտելիորեն կապված են Նրա փրկարար նախախնամության հետ, բայց խաչի վրա Փրկչի տառապանքն ու մահն են մարդկության հանդեպ Նրա անսահման սիրո գագաթնակետը։ Խաչի վրա Աստվածամարդու մահը միեւնույն ժամանակ աշխարհի փրկությունը եւ հաղթանակն է մեղքի, մահվան ու սատանայի նկատմամբ։ Խաչի վրա Իր մահվան միջոցով Քրիստոսը կատարեց քավությունը. Նա վճարեց մեր մեղքերի գինը՝ վերականգնելով մեր ընկերակցությունը Աստծո հետ։ Քրիստոսը՝ անզուգական Փրկիչը, խաչի մեջ մարմնավորեց Իր փրկարար զորությունը։ Այս նշանը ձեռք բերեց անգերազանցելի նշանակություն՝ թույլ տալով բոլոր կենդանի էակներին՝ երկրային ու երկնային, անվրեպ ճանաչել Աստծո Որդուն։ Խաչը դարձել է Քրիստոսի սուրբ նշանը, մահվան եւ դիվային ուժերի նկատմամբ հաղթանակի հավերժա-*

---

[1] *Преподобный Ефрем Сирин*, Избранные творения, Москва, 2007, с. 158.

*կան ու անպարտելի խորհրդանիշը: Ըստ ս. Եփրեմ Ասորու. «Եկեք դեն նետենք աշխարհի ծանրությունը, կրենք մեր խաչը եւ հետեւենք Տիրոջ Խաչին, չշեղվենք այս գեղեցիկ ճանապարհից՝ ոչ աջ, ոչ ձախ: Որովհետեւ այս ճանապարհը Հիսուս Քրիստոսն է, որն ասում է. Ես եմ ճանապարհը, ճշմարտությունը եւ կյանքը» (Հովհ. 14.6)*[1]*:*

*Տեր Հիսուս Քրիստոսը, որպես ճշմարիտ Աստծո մարմնացում, իր աստվածային էությամբ, Եռամիասնական Աստվածության բնությանը համապատասխան, ամբողջ տիեզերքի Արքան է ու իշխում է ինչպե՛ս տեսանելի, այնպե՛ս էլ անտեսանելի արարածների վրա: Մարդկային բնությունն ընդունելով՝ Նա Աստծուց ստացավ լիակատար իշխանություն ողջ տիեզերքի վրա՝ նպատակ ունենալով իրականացնել մեր փրկությունը: Նրա տառապանքն ու մահը խաչի վրա ծառայեցին ոչ միայն որպես մեր մեղքերի քավություն, այլեւ որպես հաղթանակ չար ուժերի հանդեպ: Այս առումով Հիսուս Քրիստոսի թագավորությունը բացառիկ նշանակություն է ստանում յուրաքանչյուր մարդու համար: Նա ոչ միայն ամենակարող Արարիչն է, այլեւ մեզ փրկություն պարգեւող Փառաց Թագավորը: Նրա թագավորությունը պարտադրող ուժ չէ, այլ սիրո եւ ողորմության թագավորություն է, որտեղ հավատացյալները գտնում են մեղքից ազատություն ու հավերժական կյանք: Քրիստոնեական վարդապետության համաձայն՝ Հիսուս Քրիստոսի թագավորությունը չի հասնում իր ամբողջական դրսեւորմանը երկրի վրա, այլ իր վերջնական իրականացումը գտնելու է Երկնքի Արքայությունում: Ահեղ դատաստանից հետո Աստծո կողմից ընտրված արդարները կդառնան Քրիստոսի ժառանգակիցները՝ կիսելով Նրա փառքն ու երանությունը հավերժության մեջ:*

---

1 Там же, с. 432.

Հիսուս Քրիստոսը, որպես Երկնային Թագավոր, դրսեւորեց Իր իշխանությունը այն գործողություններում, որոնք ուղղված էին մարդկության վերականգնմանը, նրա բարոյական վերածնմանը եւ սրբացմանը, ինչպես նաեւ բուն Թագավորության ընդլայնմանն ու հաստատմանը։ Նրա թշնամիների՝ մեղքի, սատանայի եւ մահվան նկատմամբ հաղթանակը Նրա թագավորական առաքելության վերջնական նպատակն էր։ Իր երկրային կյանքի ընթացքում Քրիստոսն արքայական վեհություն ու ծառայություն ցույց տվեց հիմնականում հրաշքների միջոցով։ Նա ցույց տվեց իր զորությունը բնական տարրերի, հիվանդությունների եւ նույնիսկ մահվան նկատմամբ։ Սակայն Նրա թագավորական զորությունը լիովին բացահայտվեց խաչի վրա Նրա մահից հետո։ Ըստ քրիստոնեական վարդապետության՝ Հիսուսն իր մահից հետո հոգով իջավ դժոխք ու կռվեց սատանայի դեմ, հաղթեց նրան եւ ոչնչացրեց նրա իշխանությունը մարդկության վրա՝ ազատելով նրանց, ովքեր անհիշելի ժամանակներից դժոխքում էին։ Այս իրադարձությունը դարձավ նշանակալից պահ չար ուժերի դեմ Քրիստոսի պայքարում ու Նրա արքայական զորության կարեւոր վկայությունը։ Մինչ այս, դիվահարների ապաքինումը միայն այս մեծ հաղթանակի նախերգանքն էր։ Հաղթանակը սատանայի նկատմամբ մեռյալների աշխարհում նշանակում էր ոչ միայն հոգիների ազատագրում նրա իշխանությունից, այլեւ բացում էր քավության ճանապարհը բոլոր նրանց համար, ովքեր ապրել են Քրիստոսից առաջ։ Տերն իր մահով եւ հարությամբ հաղթեց մահն ու փշրեց պատնեշը այս եւ հանդերձյալ աշխարհների միջեւ։ Այդ իրադարձությունը մեծ նշանակություն ունեցավ փրկության պատմության մեջ։ Քրիստոսն իր զորությամբ ոչ միայն դժոխքում հաղթեց սատանային, այլեւ բոլոր մարդկանց համար ճանապարհ հարթեց դեպի երկնային արքայություն։ Նա դարձավ կամուրջը, որով բոլոր նրանք, ովքեր հավատում էին նրան,

*կարող էին ներում, փրկություն ու հավերժական կյանք գտնել։ Քրիստոսի հաղթանակը սատանայի նկատմամբ եւ մահվան զորության կործանումը քրիստոնեական հավատքի անբաժանելի մասն են։ Հենց սկզբից Եկեղեցին հուշակեց դժոխք իջնելը որպես իրական իրադարձություն ու Տիրոջ փրկարար սխրանքի կարեւոր մաս։ Այս իրադարձությունը վկայում է չարի ուժերի նկատմամբ Նրա լիակատար հաղթանակի եւ ամբողջ տիեզերքի հանդեպ Նրա բացարձակ իշխանության մասին։ Չնայած Քրիստոսի հաղթանակին՝ սատանայի դեմ պայքարը շարունակվում է հոգեւոր աշխարհում, եւ քրիստոնյաները կոչված են՝ մասնակցելու այս հոգեւոր պատերազմին, օգտագործելով Աստծո կողմից իրենց տրված հոգեւոր զենքերը։*

*Քրիստոսի կողմից դժոխքի ավերմանը հաջորդեց Նրա հաղթական հարությունը մեռելներից՝ Նրա մարդկային հոգու վերամիավորումը անարատ մարմնի հետ, որը պառկած էր գերեզմանում, բայց հարյավ փառավորված, լուսավոր ու անմահ։ Ըստ ս. Հովհան Ոսկեբերանի. «Շատ մահացած մարդիկ Քրիստոսից առաջ էլ են հարություն առել։ Բայց ոչ ոք Նրա նման հարություն չի առել։ Բոլոր մյուսները, ովքեր նորից հարություն առան, վերադարձան հողի մեջ եւ, որոշ ժամանակով ազատվելով մահվան տիրակալությունից, նորից ենթարկվեցին նրա իշխանությանը։ Բայց Տիրոջ մարմինը հարությունից հետո չվերադարձավ հողի մեջ, այլ համբարձվեց երկինք, ոչնչացրեց թշնամու ողջ զորությունը, իր հետ միասին հարություն տվեց համայն տիեզերքին եւ այժմ նստած է թագավորական գահին»*[1]*։ Քրիստոսի Հարությունն այն անկյունաքարն է, որի վրա անսասան կանգնած են բոլոր քրիստոնեական հավատալիքներն ու հույսերը։ Որպես Աստվածամարդ՝ Տեր Հիսուս Քրիստոսը չէր կարող չհառնել։ Թեեւ Փրկիչը մարմնական մահ կրեց, Նա,*

---

[1] Симфония по творениям святителя Иоанна Златоуста, с. 77.

*որպես Բանն-Աստված, գերազանցեց մահվան զորությունը, քանի որ Նրա մարմինն անքակտելիորեն կապված էր Նրա հետ՝ նույնիսկ գերեզմանում: Ուստի մահը չէր կարող Նրան գերի պահել: Քրիստոսի Հարությունը սոսկ պատմական իրադարձություն չէ, այլ նաեւ հոգեւոր փորձառություն, որը հասանելի է յուրաքանչյուր հավատացյալի: Մկրտության խորհրդի միջոցով մենք ներգրավվում ենք Քրիստոսի մահվան ու հարության մեջ՝ ձեռք բերելով հավերժական կյանքի հույս: Քրիստոսի հարությունը նաեւ նշում է հաղթանակը մեղքի եւ մահվան հանդեպ՝ ազատելով մեզ նրանց իշխանությունից: Սա շրջադարձային կետ է մարդկության պատմության մեջ, որը ճանապարհ է բացում դեպի փրկություն ու հաշտություն Աստծո հետ: Ավելին՝ Քրիստոսի հարությունը խոր աստվածաբանական նշանակություն ունի, քանի որ այն հաստատում է Նրա Աստվածային էությունը:*

*Քրիստոսն Իր բնության ոչ մի մասն իրենից չի առանձնացրել՝ ո՛չ ֆիզիկական, ո՛չ հոգեւոր: Նա պահպանեց ե՛ւ Իր մարմինը, ե՛ւ հոգին, որն օժտված էր բանականությամբ, ցանկությամբ ու կամքով: Նրա աստվածային ցանկությունը դրսեւորվում է Նրա ամենակարող նախախնամության, պաշտպանության եւ ամբողջ արարչագործության կառավարման մեջ: Նրա մարդկային ցանկությունը կապված է Նրա երկրային փորձառության, Նրա երկրային կյանքի հիշողության ու բոլոր զգայական արարածների կողմից Նրան մատուցած պաշտամունքի իմացության հետ: Նրա մարդկային հոգին գիտի Բանն-Աստծո հետ իր անխզելի կապի մասին եւ ընդունում է երկրպագությունը Նրա հետ ոչ թե որպես առանձին էակ, այլ որպես Աստծո հոգի:*

*Քրիստոսի հարությունից հետո տեղի ունեցավ վեհաշուք համբարձում դեպի երկինք՝ Նրա թագավորական փառքի ու զորության բարձրագույն դրսեւորումը: Քրիստոսն Իր մարմնով նստեց Հայր*

*Աստծո աջ ձեռքի կողմում: «Հոր աջ ձեռք» հասկացությունը ցույց է տալիս Աստվածային վեհության փառքը եւ պատիվը, որը Աստծո Որդին, որպես Հորը համագո Աստված, ունի հավիտյան: Վերջին օրերին, մարմնանալով, Նա պահպանեց այս փառքը, քանի որ Նրա մարմինը փառավորվեց Նրա հետ միասին: Քանի որ Քրիստոսը նստած է Հոր աջ կողմում, Նրա մարմինը նույնպես աստվածացավ ու արժանացավ երկրպագության: Ուստի Նրա մարմինը Նրա հետ միասին ստանում է նույն պաշտամունքը բոլոր էակներից: Հարություն առած Քրիստոսն ասում է աշակերտներին. «Ինձ է տրվել ամբողջ իշխանությունը երկնքում եւ երկրի վրա» (Մատթ. 28.18): Այս իրադարձությունը նշանավորեց ոչ միայն Աստվածային Փրկչի վերադարձը Իր Հոր մոտ, այլեւ մարդկության համար հավիտենական կյանքի ճանապարհի բացումը: Իր երկրային ծառայության ընթացքում Քրիստոսը, լինելով Աստված, մշտական հաղորդակցության մեջ էր Հոր եւ Սուրբ Հոգու հետ: Համբարձումը դարձավ Նրա մարդկային էության վսեմ փառաբանումը, որը Նա ընդունեց մարդկության քավության համար: Մարմնացած Աստվածությունը աշխարհին բացահայտեց աստվածացված մարմնի կատարելությունն ու գերազանցությունը, որը մասնակից դարձավ Աստծո Որդու հավերժական փառքին եւ զորությանը: Քրիստոսի՝ երկինք համբարձվելը ոչ միայն փառավորեց Իրեն ըստ մարդկության, այլեւ դարձավ ազատագրման խորհրդանիշ բոլոր նրանց համար, ովքեր հավատում են Նրան: Մինչ այս իրադարձությունը, երկինքը, որպես երանության բնակավայր, անհասանելի էր Ադամի մեղսական հետնորդների համար: Նույնիսկ Հին Կտակարանի արդարները մահից հետո մնացին Շեոլում՝ հանգուցյալների բնակության վայրում: Սակայն Քրիստոսը, մարդկությանը հաշտեցնելով Աստծո հետ ու վերամիավորելով երկինքը երկրի հետ, վերացրեց այն պատնեշը, որը թույլ չէր տալիս մարդկանց երկինք բարձրանալ: Նրա սխրանքը բացեց*

հավերժական կյանքի դուռը եւ Երկնքի Արքայությունը ժառանգելու հնարավորությունը բոլոր հավատացյալների համար։ Ըստ ս. Հովհան Ոսկեբերանի. Երկնքի Արքայությունում «ոչ մի ցավալի բան չի մնա, ոչ մի անհանգստություն, ոչ մի աշխատանք. ամեն ինչ կլինի ուրախություն, ամեն ինչ կլինի խաղաղություն, ամեն ինչ կլինի սեր, ամեն ինչ կլինի հանգիստ, ամեն ինչ կլինի ճշմարիտ, անկեղծ եւ ամուր։ Հետո չի լինի ոչ թերություն, ոչ գայթակղություն, ոչ վիշտ, ոչ ագահություն, ոչ ցանկասիրություն, ոչ աղքատություն, ոչ հարստություն, ոչ անպատվաբերություն, ոչ էլ նման բան»[1]։ Այսպիսով, Քրիստոսի Համբարձումը ոչ միայն Նրա փառքի դրսեւորումն էր, այլեւ փրկության ու հույսի պարգեւ բոլորին, ովքեր հավատում են Նրան եւ ձգտում արդար կյանքի։ Իր Համբարձումից հետո Նա նստեց Հոր աջ կողմը՝ զբաղեցնելով Նրա աստվածային փառքին ու զորությանը համապատասխան պատվավոր դիրք։

[1] Там же, с. 548.

## *Գ Լ Ո Ւ Խ  Զ*

## Եկեղեցի

*Աստծո շնորհը Տիրոջ կողմից մեզ տրված անտեսանելի զորությունն է՝ Քրիստոսով փրկության հասնելու համար: Այն կարող է վերափոխել եւ բուժել մեր բնությունը: Չնայած իր անտեսանելիությանը, շնորհն իր դրսեւորումն է գտնում նյութական աշխարհում տեսանելի միջնորդի օգնությամբ: Այս տեսանելի միջնորդը Եկեղեցին է, որը հիմնադրվել է Հիսուս Քրիստոսի կողմից: Սակայն Քրիստոսի գլխավորությունը Եկեղեցում դուրս է գալիս նրա՝ որպես հիմնադրի ու ղեկավարի դերից: Նա նաեւ նոր եւ սուրբ կյանքի աղբյուրն է, որը բխում է Նրանից որպես նոր Ադամից՝ փոխարինելով անկյալ նախահորը: Այս նոր կյանքը, հակառակ Ադամից ժառանգված մեղսական ու մահկանացու բնությանը, տրվում է Աստծո զավակներին նոր ծննդյան միջոցով: Ընդունելով Քրիստոսին որպես նոր Ադամ՝ հավատացյալները հրաժարվում են մեր նախահորից ժառանգված մեղքից եւ դրա հետեւանքներից ու ընդունում Քրիստոսին՝ դառնալով նրա մարմնի՝ Եկեղեցու մի մասը: Հոգեւոր նորոգման եւ վերափոխման այս գործընթացը դրսեւորվում է Եկեղեցու եւ առանձին հավատացյալների կյանքի բոլոր ոլորտներում: Ամենից առաջ Քրիստոսն Իր Սուրբ Հոգով առաջնորդում է Եկեղեցին՝ նրան տալով իմաստություն, ուժ ու պաշտպանություն: Երկրորդ՝ Քրիստոսը մաքրագործում եւ սրբագործում է Եկեղեցին: Նա արեց դա Իր արյամբ՝ քավելով հավատացյալների մեղքերը եւ արդարություն հաստատելով նրանց համար: Երրորդ՝ Քրիստոսը Եկեղեցուն տալիս է իր զորությունն ու իշխանությունը: Նա Եկեղեցուն իշխանություն տվեց Ավետարանը քարոզելու եւ խորհուրդները սպասավորելու: Այս զորությունն օգտագործվում է Աստծո արքայությունը*

տարածելու եւ Աստծո ժողովրդին ծառայելու համար: Ի վերջո, Քրիստոսն առաջնորդում է Եկեղեցին դեպի իր հիմնական նպատակը՝ հավատացյալների անձնական կատարելությունը, Աստծո թագավորության հաստատումը երկրի վրա ու վերջնական հաղթանակը մեղքի եւ մահվան նկատմամբ: Ըստ ս. Հովհան Ոսկեբերանի. «Եկեղեցին բարեպաշտության ծով է՝ ոչ ալիքներով առատ, այլ հավատքով լի: Մեզ մոտ ուսուցման նավը նավաբեկված չէ, չի կործանվում, չի անհանգստանում, չի խորտակվում, այլ, ինչպես հանգիստ նավահանգիստ, ձգտում է դեպի Տիրոջը սիրողների հոգիները»[1]:

Այս մեծ աշխատանքը սկսվեց Քավիչի երկրային կյանքի ընթացքում ու կշարունակվի մինչեւ ժամանակների վերջը: Եկեղեցին տեսանելի կողմ ունի, որը դրսեւորվում է սպասավորությամբ, երկրպագությամբ եւ հասարակական գործունեությամբ: Այն ունի նվիրապետություն, որն առաջնորդում է հավատացյալներին հավատի ու խորհուրդների միջոցով: Բայց ավելի խորը մակարդակում Եկեղեցին նաեւ հոգեւոր էություն է, որը կազմում է Քրիստոսի մարմինը, որի մեջ գործում է Սուրբ Հոգին: Եկեղեցին գոյություն կունենա մինչեւ աշխարհի վերջը, որպեսզի բոլոր մարդկանց առաջնորդի դեպի Աստվածիմացություն եւ հավիտենական կյանք:

Եկեղեցին խորհուրդների միջոցով Սուրբ Հոգու շնորհ է հաղորդում իր անդամներին՝ սրբագործելով նրանց ու միացնելով Քրիստոսին: Որպեսզի շնորհը գործի մարդու կյանքում, նրա կողմից անհրաժեշտ է մի պայման՝ հավատք: Հավատքը վերացական հասկացություն չէ, այլ Աստծո ներկայության կենդանի փորձը մարդու կյանքում: Դա ենթադրում է վստահություն ու հնազանդություն Աստծուն, Նրա շնորհն ընդունելու եւ Նրա պատվիրաններով առաջնորդվելու պատրաստակամություն: Հավատքն անքակտելիորեն

---

[1] Там же, с. 556.

*կապված է ճշմարտության հետ։ Սուրբ Հոգու շնորհը գործում է միայն այնտեղ, որտեղ առկա է ճշմարտությունը։ «Բայց երբ գա Մխիթարիչը, որին Ես ձեզ կուղարկեմ Հորից, Ճշմարտության Հոգին, որ ելնում է Հորից, նա՛ կվկայի իմ մասին» (Հովհ. 15.26)։ Եկեղեցին ծառայում է որպես Քրիստոսի ճշմարտության պահապան ու քարոզիչ՝ պաշտպանելով այն աղավաղումներից եւ հերձվածներից։ Այն հուշակում է մաքուր ու ճշմարիտ հավատ, որը հավատացյալների կյանքում շնորհի գործողության հիմքն է։ Շնորհի եւ հավատի համատեղ աշխատանքը տանում է դեպի հավերժական փրկություն ու մարդկային հոգու վերափոխում։*

*Թեեւ Քրիստոսը Եկեղեցու կյանքի աղբյուրն է եւ մշտապես բնակվում է Նրա մեջ, սակայն այս նոր կյանքի տարածումը Եկեղեցու ողջ մարմնով իրականացվում է Սուրբ Հոգու՝ Մխիթարիչի զորությամբ։ Սուրբ Հոգու միջոցով Հիսուս Քրիստոսը, որպես գլուխ, կապվում է Իր մարմնի՝ Եկեղեցու հետ՝ որպես կյանքի աղբյուր։ Սուրբ Հոգին Իր մեջ կրում է Քրիստոսի կենարար շնորհը։ Նա պատվաստում է Եկեղեցու անդամներին, ինչպես վայրի ձիթենու ծառերը։ Սուրբ Հոգին թափանցում է ամբողջ Եկեղեցին ու վերահսկում է Նրա մարմնի բոլոր շարժումները, ինչպես հոգին է վերահսկում մարմնի շարժումները։ Այլ կերպ ասած՝ Նա Եկեղեցու անմիջական ղեկավարն է՝ անբաժան Նրա գլխից՝ Քրիստոսից։ Սուրբ Հոգու դերը Եկեղեցում ընդգծվեց Հոգեգալուստի օրը, երբ Նա իջավ առաքյալների վրա՝ նրանց տալով Ավետարանը քարոզելու եւ Քրիստոսի մասին վկայելու զորություն։ Այդ ժամանակից ի վեր Սուրբ Հոգին շարունակել է գործել Եկեղեցում՝ խրատելով, քաջալերելով ու համոզելով հավատացյալներին ողջ աշխարհում։ Համարվում է, որ Սուրբ Հոգին ներկա է եւ գործում է բոլոր խորհուրդներում, որոնց միջոցով հավատացյալները ստանում են Աստծո շնորհը։ Այսպիսով, Սուրբ Հոգին հաղորդում է Քրիստոսի կյանքն*

*ու զորությունը Եկեղեցուն, միավորում է հավատացյալներին մեկ մարմնի մեջ եւ ուղղորդում նրանց կատարել Աստծո կամքը։*

*Սուրբ Հոգու շնորհը հիմնարար դեր է խաղում սրբացման, այսինքն՝ մարդկանց մաքրագործման ու հոգեւոր վերափոխման գործընթացում։ Ըստ ս. Գրիգոր Նազիանզացու. «Հոգուց մենք ունենք վերածնունդ, վերածնունդից՝ վերաստեղծում, վերաստեղծումից՝ գիտելիք Վերաստեղծողի արժանավորության մասին»[1]։ Սուրբ Հոգին հանդես է գալիս որպես միջնորդ՝ փոխանցելով Քավիչի՝ Հիսուս Քրիստոսի փրկարար զորությունը բոլոր նրանց, ովքեր անկեղծորեն դիմում են իրեն։ Սուրբ Հոգու շնորհի հեղումը փրկվածների վրա նրանց հոգեւոր վերափոխման եւ բարոյական մաքրագործման արդյունքն է, երբ նրանք ստանում են մեղքերի թողություն ու հաշտվում Աստծո հետ։ Ըստ ս. Հովհան Ոսկեբերանի. «Բայց ինչպե՞ս կարող ենք դեպի մեզ ձգել Հոգու օգնությունը եւ տրամադրել Նրան՝ բնակվելու մեր մեջ։ Լավ գործերո՛վ ու լավ կյանքո՛վ։ Ինչպես ճրագի լույսը պահպանվում է յուղով, որի սպառմամբ այն դադարում եւ անհետանում է, այնպես էլ Հոգու շնորհը՝ յուղով պահպանվող կրակի նման»[2]։ Այս աստվածային գործողությունն ինքնաբերաբար չի լինում, այլ իրականացվում է մկրտության մեջ հարության ու ներքին մարդու նորոգման միջոցով։ Ի Քրիստոս փրկությունը յուրացնելուն ուղղված շնորհի գործողությունները չեն վերացնում մարդու ազատ կամքը։ Շնորհը ոչ թե ստիպում է մարդուն, այլ ավելի շուտ խրախուսում է՝ կամավոր ընդունելու եւ համագործակցելու Սուրբ Հոգու հետ։ Այսպիսով, շնորհը նպաստում է մարդու փրկությանը՝ պահպանելով նրա ակտիվ դերն այս գործընթացում։ Այլ կերպ ասած՝ շնորհը հատուկ աստվածային զորություն է,*

[1] Симфония по творениям святителя Григория Богослова, с. 158.
[2] Симфония по творениям святителя Иоанна Златоуста, с. 26.

*որը գալիս է Սուրբ Հոգուց ու տրվում է Աստծո կողմից Հիսուս Քրիստոսի միջնորդությամբ: Երբ այս ասաց, նրանց վրա փչեց եւ ասաց. «Առե՛ք Սուրբ Հոգին» (Հովհ. 20.22): Այս զորությունը ներքին ու խորհրդավոր կերպով ազդում է մարդկային բնության վրա՝ օգնելով նրան վերականգնել իր սկզբնական մաքրությունը եւ արդարությունը: Շնորհը չի ճնշում մարդու բնական ուժերն ու կարողությունները, այլ ընդհակառակը, համագործակցում է դրանց հետ՝ բարձրացնելով եւ մաքրագործելով մարդկային բնությունը: Բացի իր փրկարար ազդեցությունից՝ շնորհը մարդուն օժտում է նաեւ Սուրբ Հոգու ընծաներով, որոնք զարգացնում են նրա հոգեւոր կարողություններն ու օգնում աճեցնել սիրո մեջ Աստծո եւ ուրիշների հանդեպ: Այս ընծաները կարող են ներառել իմաստություն, գիտելիք, հավատք, բժշկություն, հրաշքներ գործել, մարգարեություն եւ այլ բաներ: Շնորհի հետ համագործակցելով՝ մարդը ներսից վերափոխվում է՝ դառնալով ավելի հոգեւոր, կարեկից ու Քրիստոսանման: Նա ուժ է ստանում չարին դիմակայելու, սեփական թուլությունները հաղթահարելու եւ աստվածային կամքին համապատասխան ապրելու համար: Այսպիսով, Սուրբ Հոգու շնորհը քրիստոնեական սրբացման ուղու անբաժանելի մասն է: Այն մաքրագործում է մարդուն մեղքերից, վերականգնում նրա հոգեւոր էությունը, առաջնորդում արդարության ճանապարհով ու օժտում Սուրբ Հոգու ընծաներով՝ օգնելով ապրել լիարժեք քրիստոնեական կյանքով:*

*Աստվածային շնորհը փրկարար զորություն է, որը մղում եւ տանում է մարդուն դեպի փրկություն: Ազդեցություն գործելով մարդկային մտքի վրա՝ շնորհն աստիճանաբար թափանցում է սրտի խորքերը՝ արթնացնելով փրկվելու ցանկությունը: Սուրբ Գիրքը ծառայում է որպես շնորհի աղբյուր, քանի որ այն հայտնում է մարդուն Աստծո բարոյական օրենքը: Այն թույլ է տալիս մարդուն գիտակցել իր մեղսականության խորությունը, որը դրսեւորվում է*

*բազմաթիվ արատներով ու զանցանքներով: Այսպիսով, մարդը սկսում է գիտակցել իր բարոյական սնանկությունը եւ զգալ Աստծո դատաստանի հանդեպ երկյուղը: Միեւնույն ժամանակ, Հայտնությունը ցույց է տալիս մեղավոր վիճակից ազատվելու ուղին: Այն մարդու մեջ, ով ձգտում է խուսափել կործանումից, առաջանում է ապաշխարության ու հոգեւոր դարձի ցանկությունը: Այնուամենայնիվ, այս փուլում հավատքն իր բնույթով ավելի շուտ դոգմատիկ է եւ կայանում է քրիստոնեության՝ որպես Հայտնությամբ տրված ու փրկարար կրոնի տեսական ճանաչման մեջ:*

